# ARMENIAN HISTORY MATERIALS

IN THE

# ARCHIVES OF CENTRAL EUROPE

YEREVAN -2001

Պրոֆ. Շ. Հակոբյանին
հայրենասեր գիտնականի, մեծահոգի
հիմնադրամի և մեր ազգի երախտավորի՝
ամենայն սիրով և խորին հարգանքով.

7.08.2001թ. Մ.Հարությունյան

9(47.925)
Ա-75
Ա85
Ե. Հակոբյանի
ֆոնդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՆՅՈՒԹԵՐ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԴԻՒԱՆՆԵՐՈՒՄ

Երեւան - 2001

# ARMENIAN HISTORY MATERIALS

8795

## IN THE ARCHIVES OF CENTRAL EUROPE

Yerevan - 2001

«Armenian History Materials in the Archives of Central Europe»
«Հայաստանի պատմութեան նիւթեր Կենտրոնական Եւրոպայի դիւաններում»

© G. Uluhogian

«Սարգիս Խաչենց» հրատարակչութեան տպարան
375010, Երեւան, Արամի 1
skhach@nga.sci.am



## PREFACE

This collection of papers presents results of a three-year research project on the Armenian history. The project has been implemented through funding support provided by the International Association for the Promotion of Cooperation with Scientists from the New Independent States of the former Soviet Union (INTAS-project number 94-3758).

The research, carried out by scholars from Armenia and Europe, was coordinated by Prof. Gabriella Uluhogian of the Bologna University. The European partners were scientists from Universities of Italy, France and Switzerland. They have succeeded in exploring various documents on the history of political, cultural and economic relations between Armenia and Europe. Researchers from the Republic of Armenia (RA) have worked through the support and cooperation of the scholars from the above mentioned Universities.

In the course of three weeks, in cooperation with Prof. Gabriella Uluhogian, Dr. Azat Bozoyan and Dr. Pavel Chobanyan, researchers of the Institute of History and Oriental Studies of the RA National Academy of Sciences, have studied in the libraries and archives of Genoa, Venice and Bologna. They have accumulated materials on economic and political relations between Italian city-republics and Kilikian Armenia. Valuable documents on Armenian merchants and cultural workers have been explored in the archives dated from 17$^{th}$ through 19$^{th}$ centuries. Mr. Bozoyan's and Mr. Chobanyan's papers specifically refer to these issues.

Dr. Bernard Outtier of the French CNRS has drawn the attention of specialists on the materials of archives of the "Missions Etrangeres" (Paris) and Capucins. Within the framework of this project Dr. Meruzhan Karapetyan and Dr. Elizabeth Tajiryan, scholars of Institute of History, have studied in these archives in cooperation with the French researcher. Mr. Karapetyan and Ms. Tajiryan have explored a rich material on political and cultural relations between Armenia and France. However, only a part of this material is presented in this book.

Prof. Valentina Calzolari of the Geneva University has studied some aspects of the relations between Armenia and Switzerland (humanitarian assistance of the Switzerland Protestant Church to Caucasus and Asia Minor and assistance provided to Armenians migrated to

Switzerland in the 19th-20th centuries etc.). With the assistance of Prof. Calzolari, Prof. Vladimir Barkhudarian, Academician of the RA National Academy of Sciences, has studied the relations between Swiss humanitarian organizations with Armenia before and after the World War I. The research was based on documents preserved in archives of Geneva and Losan as well the Ghukassian Library of Geneva University.

This fruitful work has produced results: the authors have already published various considerables articles in periodicals. The aim of the book is to present only a part of the issues. This project, carried out by INTAS, opened remarkable and promising prospects for research.

*Gabriella Uluhogian*
Project Coordinator
University of Bologna



## ԱՌԱՋԱԲԱՆ

*Սոյն գրքոյկը ներկայացնում է «Նորանկախ պետութիւնների պիտնականներին աջակցութեան միջազգային կազմակերպութեան» (INTAS) ֆինանսաւորած «Հայաստանի պատմութեանը վերաբերող նիւթեր Եւրոպայի դիւաններում եւ գրադարաններում» եռամեայ հետազօտական ծրագրի որոշ արդիւնքներ:*

*Հայաստանում եւ Եւրոպայի տարբեր երկրներում աշխատող պիտնականների հետազօտութիւնները համակարգել է պրոֆ. Գաբրիէլլա Ուլուհոճեանը (Բոլոնիայի համալսարան): Եւրոպական գործընկերները Իտալիայի, Ֆրանսիայի, Շվէյցարիայի համալսարանների պիտնականներ են, որոնք իրենց երկրների դիւաններում եւ գրադարաններում յայտնաբերել են Հայաստանի եւ Եւրոպայի քաղաքական, մշակութային եւ տնտեսական առընչութիւնների պատմութեանը վերաբերող ամենատարբեր վաւերագրեր: Հայաստանի Հանրապետութեան հետազօտողներն այդ երկրներում աշխատել են նրանց գործակցութեամբ եւ օժանդակութեամբ:*

*ՀՀ ԳԱԱ Պատմութեան եւ Արեւելագիտութեան ինստիտուտի աշխատակիցներ Պաւէլ Զօրանեանը եւ Ազատ Բոզոյեանը երեք շաբաթ պրոֆ. Գաբրիէլլա Ուլուհոճեանի անմիջական գործակցութեամբ աշխատել են Ջենովայի, Վենետիկի եւ Բոլոնիայի դիւաններում եւ գրադարաններում: Նրանք նիւթեր են հաւաքել իտալական քաղաքհանրապետութիւնների եւ Կիլիկեան Հայաստանի տնտեսական եւ քաղաքական փոխյարաբերութիւնների վերաբերեալ: Հայ առեւտրականների եւ մշակութային գործիչների հետքերին վերաբերող արժէքաւոր վաւերագրեր են յայտնաբերուել յիշատակուած գրապահոցների ԺԲ-ԺԹ դդ. թղթօններում. նրանց յօդուածները վերաբերում են հէնց այդ խնդիրներին:*

*Ֆրանսիայի գիտական հետազօտութիւնների ազգային կենտրոնի (CNRS) աշխատակից, դոկտ. Բեռնար Ուտիէն մասնագէտների ուշադրութիւնը սեւեռել է Արտաքին գործոց նախարարութեան (Փարիզ) եւ Կապուչինների դիւանների պարունակած նիւթերի վրայ: Այս դիւաններում յիշեալ ծրագրի շրջանակներում ֆրանսիացի հետազօտողի հետ համագործակցութեամբ աշխատել են Պատմութեան ինստիտուտի գիտաշխատողներ Մերուժան Կարապետեանը եւ Էլիզաբէթ*

*Թաղիրեանը, որոնք Փարիզի գրադարաններում եւ դիւաններում յայտնաբերել են հայ-ֆրանսիական քաղաքական, տնտեսական, մշակութային փոխյարաբերութիւններին վերաբերող մեծածաւալ նիւթ: Ընթերցողն այստեղ հնարաւորութիւն ունի ծանօթանալու այդ նիւթերի միայն մի մասին:*

*Ժնեւի համալսարանի դասախօս, դոկտ. Վալենտինա Կալցոլարին քննութեան նիւթ է դարձրել հայ-շվէյցարական փոխյարաբերութիւնների չ'ուսումնասիրուած որոշ տեսանկիւնները (Շվէյցարական բողոքական եկեղեցիների մարդասիրական օգնութիւնը Կովկասում եւ Փոքր Ասիայում, Շվէյցարիա գաղթած հայերին ցոյց տրուած օժանդակութիւնը՝ ԺԹ-ի դդ. եւ այլն): Դոկտ. Կալցոլարիի աջակցութեամբ պրոֆ. Վ. Բ. Բարխուդարեանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար) հետազօտել է շվէյցարական մարդասիրական կազմակերպութիւնների փոխյարաբերութիւնները Հայաստանի հետ Առաջին համաշխարհային պատերազմից առաջ եւ յետոյ, հիմնուելով այն վաւերագրերի վրայ, որոնք պահպանուել են Ժնեւի եւ Լոզանի կանտոնների դիւաններում եւ Ժնեւի համալսարանի Ղուկասեան մատենադարանի պահոցներում:*

*Պրոֆ. Գ. Ուլուհոճեանը ԺԷ, ԺԹ եւ Ի դարերի հայ-իտալական փոխյարաբերութիւնների պատմութեան մեծարժէք սկզբնաղբիւրներ է յայտնաբերել Բոլոնիայի, Ֆերարայի եւ Միլանի գրադարաններում եւ դիւաններում: Այս բեղմնաւոր աշխատանքն արդէն տուել է իր արդիւնքները. հեղինակները պարբերականներում հրապարակել են խնդրին վերաբերող տարբեր յօդուածներ: Ժողովածուն նպատակ ունի ներկայացնել ծրագրին մասնակից գիտնականների ուշադրութիւնը գրաւած խնդիրների միայն մի մասը:*

*Միջազգային կազմակերպութեան հովանաւորած այս ծրագիրը համագործակցող գիտնականների ուսումնասիրութիւնների ասպարէզում ուրուագծեց ուշագրաւ եւ խոստումնալից նոր հեռանկարներ:*

*Գաբրիէլլա Ուլուհոճեան*

Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր
Ծրագրի համակարգող

# ԿԻԼԻԿԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐԽԻՒՆԵՐՈՒՄ

*Ա. Բոզոյեան*

*Գրեթէ երեք հարիւրամեակ (1080-1376), սկզբում իբրեւ ինքնանկախ կամ ստորակայ իշխանութիւն, հետագայում որպէս թագաւորութիւն, կիլիկեան Հայաստանը պահպանեց սեփական պետականութիւնը: Այդ երկրամասը թէպէտ աշխարհագրական իր դիրքով գտնուում էր Մեծ Հայքի տարածքից դուրս, սակայն իր արմատներով եւ վարած քաղաքականութեամբ կապուած էր Մեծ Հայքի քաղաքական եւ հոգեւոր կենտրոնների հետ: Միեւնոյն ժամանակ, գտնուելով աշխարհաքաղաքական նոր միջավայրում, այդ երկիրն ամենասերտ մշակութային եւ առեւտրա-տնտեսական փոխյարաբերութիւններ էր հաստատել հարեւան խաչակրաց պետութիւնների, Բիւզանդիայի եւ անդրծովեան եւրոպական տէրութիւնների, Միջերկրական ծովի առեւտրական նաւահանգիստների եւ իտալական քաղաք-պետութիւնների հետ: Կիլիկեան Հայաստանը գործուն քաղաքական, մշակութային ու առեւտրատնտեսական փոխյարաբերութիւններ էր հաստատել նաեւ հարեւան ինչպէս մահմէդական, այնպէս էլ ոչ քրիստոնեայ միւս ժողովուրդների պետական եւ եկեղեցական կազմակերպութիւնների հետ, նրանց հետ կնքում էր քաղաքական եւ առեւտրական պայմանագրեր, երբեմն էլ՝ համատեղ դրամ էր հատում[1]:*

[1] Կիլիկեան Հայաստանը ԺԳ դարի սկզբին միացեալ՝ երկկեզու դրամ էր հատում Իկոնիայի սուլթանութեան հետ (*X. T. Nercessian*, Attribution and dating of Armenian Bilingual Trams. Los Angeles, 1983): Մեզ է հասել նաեւ մոնղոլական կայսրութեան (տե՛ս *Ա. Գալստեան*, Մոնղոլական շրջանի հայ դիւանագիտութեան պատմութիւնից, Լենինական, 1945) եւ Եգիպտոսի մամլուկեան սուլթանութեան հետ (տե՛ս *V. Langlois*, Le Trésor des chartes d'Arménie, Venise, 1863, p. 213-235) կնքած պայմանագրերի պատճէնները:

Երկրամասի քաղաքական եւ տնտեսական կեանքում հնուց ի վեր վիթխարի նշանակութիւն էր ձեռք բերել ծովը[2], սակայն մինչեւ Կիլիկեան պետութեան այսօրուայ իմաստով միջազգային ճանաչումը, այսինքն՝ 1197 թ. Բիւզանդական կայսրութեան եւ Արեւմտահռոմէական-Գերմանական կայսրութիւնների ուղարկած թագերով Լեւոն Ա Ռուբինեանի թագադրումը[3] կիլիկեան ծովափի իսկական տէրը միջազգային իրաւունքի տեսանկիւնից դեռեւս դիտւում էր Բիւզանդական կայսրութիւնը, որից էլ Վենետիկի եւ Ջենովայի հանրապետութիւնները արտօնութիւններ էին կորզում իրենց առեւտրական գործարքների համար[4]: Հետաքրքիր է այն պարագան, որ ԺԱ-ԺԲ դարերի ընթացքում կնքուած պայմանագրերում, չնայած երկրամասում հայկական իշխանութիւնների գոյութեանը, կիլիկեան նաւահանգստային քաղաքները համարւում էին Բիւզանդական կայսրութեան սեփականութիւն. այդ մասին են վկայում Կոմնենոս կայսրերի կողմից Վենետիկին[5] եւ Ջենովային[6] տրուած առեւտրական արտօնագիր-պայմա-

2 Դեռեւս հելլենիզմի դարաշրջանում յայտնի էին Կիլիկեան ծովահէնները: Հարցի ընդհանուր գծերով շարադրանքը տե՛ս *Cl. Mutafian*, La Cilicie au carrefour des empires, v. I, Paris, 1988, p. 217-228:

3 Այդ մասին տե՛ս *Fr. Hild u. H. Hellenkemper*, Kilikien und Isaurien [Tabula Imperii Byzantini, Bd. 5], 1 Teil, Wien, 1990, S. 76: Վերջին տարիներին նոր փաստեր են ի յայտ գալիս, որոնցով Լեւոն Ռուբինեանի թագադրումը թուագրւում է 1199 թ. (տե՛ս Das Lemberger Evangeliar. Eine wiederentdeckte Armenische Bilderhandschrift des 12. Jahrhunderts / herausgegeben von Günter Prinzing und Andrea Schmidt, mit beiträgen von Anton von Euw, Christian Hannick, Mesrob K. Krikorian, Annette Lang-Edwards, Günter Prinzing, Andrea Schmidt, Christian Weise. Wiesbaden, Dr. Ludwig Reichert Verlag, 1997, S. 20, n. 3; հմմտ. այդ գրքի գրախօսութիւնը, ՊԲՀ, 1999, N 1, էջ 360-366):

4 Այդ մասին տե՛ս *Fr. Hild u. H. Hellenkemper*, Kilikien, S. 126:

5 Այդ պայմանագրերում յիշատակւում են կիլիկեան քաղաքներ Մամիստրան, Ադանան, Տարսոնը (1082 թ. մայիս, 1084 թ., 1126 թ. օգոստոս, 1147 թ. հոկտեմբեր, 1187 թ. փետրուար, 1198 թ. նոյեմբեր): Տե՛ս *Fr. Dölger*, Regesten der Kaiserurkunden des Oströmischen Reiches von 565-1453, 2. Teil: Regesten von 1025-1204, München u. Berlin 1925, S. 27, Nr. 1081, S. 31, Nr. 1109. հմմտ. *A. Schaube*, Handelsgeschichte der Römanischen Völker des Mittelmeergebiets bis zum Ende der Kreuzzüge, München und Berlin, 1906 [Handbuch der Mittelalterlichen und Neueren Geschichte /herausgegeben von G. v. Below und F. Meinecke, Abteilung III], S. 20, 219), S. 59, Nr. 1304, S. 67, Nr. 1365, S. 92, Nr. 1576, S. 104, Nr. 1647:

6 Շեշտւում է, որ նրանք շարունակելու են օգտուել Ասորիքում ունեցած արտօնութիւններից (1169 թ. հոկտեմբեր, 1170 թ. մայիս): Տե՛ս *Fr. Dölger*, Regesten, S. 82, Nr. 1488, S.83, Nr. 1497 (հմմտ. *A. Schaube*, էջ 219):

7 *Fr. Dölger*, Regesten, S. 51, Nr. 1243; տե՛ս նաեւ *Ա. Բոզոյեան*, Բիւզանդիայի արեւելեան քաղաքականութիւնը եւ Կիլիկեան Հայաստանը ԺԲ դարի 40-70-ական թթ., Երեւան, 1988, էջ 73-75. այդ պայմանագրի մասին տե՛ս նաեւ *Ralph-Johannes Lilie*, Byzanz und die Kreuzfahrstaaten, München, 1981, S. 78 [Ποικιλα Βυζαντινα], *R.-J. Lilie*, Handel und Politik zwischen dem byzantinischen Reich und den italienischen Kommunen Venedig, Pisa und Genua in der Epoche der Komnenen und Angeloi (1081-1204), Amsterdam, 1984, S. 50, 63.

8 Դրա պերճախօս վկաներն են նաւահանգստային քաղաքներում յայտնաբերուած ԺԳ-ԺԴ դարերի շինարարական հսկայածաւալ աշխատանքները: Տե՛ս *R. W. Edwards*, The Fortifications of Armenian Cilicia, p. 77-83, 161-167; *Fr. Hild u. H. Hellenkemper*, Kilikien, S. 163, 170-172, 318-319:

9 Կիլիկեան Հայաստանում նաւատորմի գոյութեան մասին են վկայում մի շարք վկայութիւններ, որոնք դեռեւս ի մի չեն հաւաքուած: Այս հարցին նուիրուած միակ յօդուածը մեզանում պատկանում է Արտաշէս Տիրա-



նագրերը եւ երկրամասի քաղաքական կարգավիճակը գրեթէ մէկ հարիւրամեակ կարգաւորող, ԺԲ դարասկզբին Սիցիլիայի նորմանների հետ բիւզանդական կայսր Ալեքս Ա-ի կնքած Դէաբոլեան հաշտութեան պայմանագիրը[7]:

Կիլիկեան նաւահանգիստների դերը տարածաշրջանում սկսեց մեծանալ, երբ երկրամասում հաստատուած հայկական թագաւորութիւնը ճանաչուեց միջազգային հանրութեան կողմից: Այդ պահից ի վեր Կիլիկիայի իշխողները սկսեցին մեծ թափով կառուցել եւ նոր ժամանակների կարիքներին յարմարեցնել Այեասը, Ալեքսանդրեթը, Կոռիկոսը, Լամոսը եւ միւս նաւահանգստային քաղաքներն ու հանգրուան կայեանները[8]: Միայն հայկական թագաւորութեան ճանաչումից յետոյ Կիլիկիան սկսեց ինքը տնօրինել սեփական նաւահանգիստների ու ծովափի եկամուտները, երկրի պաշտպանութեան ու տնտեսական բարգաւաճման, հոգեւոր-մշակութային ու առեւտրա-տնտեսական կապերի համար սկսեց օգտագործել նաւահանգիստները՝ ամենայն հաւանականութեամբ ստեղծելով նաեւ ռազմական ու առեւտրական տորմիղ[9]:

*Այս դարաշրջանում մշակութային եւ առեւտրա-տնտեսական սերտ փոխյարաբերութիւններ հաստատուեցին եւրոպական տէրութիւնների եւ քաղաք-պետութիւնների հետ, քանի որ Հայաստանի համար իսկական պատուհան բացուեց դէպի Արեւմուտք: Իսկ դա հնարաւոր դարձաւ միայն ԺԲ դարից յետոյ, երբ Արեւելեան Փոքր Ասիայում եւ Հիւսիսային Ասորիքում թուլացան Բիւզանդական կայսրութեան դիրքերը, եւ կիլիկեան Հայաստանը միջազգային հանրութեան կողմից ճանաչուեց Իսոսի ծոցի իսկական տէրը, որը ԺԳ դարում արդէն սկսում է ե՛ւ հայկական, ե՛ւ օտար սկզբնաղբիւրներում անուանուել նաեւ Հայոց ծոց (Mare Armeniæ, Mer d'Herminie)[10]:*

*Կիլիկեան պետութեան առաջին առեւտրական պայմանագրերը Ջենովայի[11] եւ Վենետիկի[12] հանրապետութիւնների հետ կնքուել են*

ցեանին, որը գիտական գրականութեան մէջ արծարծուած փաստերի համադրութեամբ ապացուցում է Կիլիկեան Հայաստանում սեփական նաւատորմի գոյութեան փաստը (տե՛ս *Ա. Տիրացեան*, Կիլիկիայի հայկական պետութեան սեփական նաւատորմիղ ունենալու հարցի շուրջը, «Էջմիածին», 1957, Զ, էջ 43-44):

10 Ըստ Ղ. Ալիշանի՝ այս անուանումն առաջին անգամ վկայուած է Դ դարի լատինալեզու պատմիչ Ամիանոս Մարկելինոսի մօտ «Armenicus Sinus» ձեւով, որը կանխում է Կիլիկիային հայերի տիրանալու ժամանակաշրջանը եօթ հարիւրամեակով: Ղ. Ալիշանն այս փաստը համադրել է իրեն յայտնի միւս վկայութիւնների հետ. տե՛ս Սիսուան. Վենետիկ, 1885, էջ 299-300, 355-356:

11 Ջենովացիներն առաջինն էին, որ արտօնագիր են ստացել Կիլիկիայի հայկական արքունիքից: Մեզ են հասել այդպիսի մի շարք պայմանագրեր, որոնցից առաջինը կնքուել է 1201 թ. մարտին, իսկ այնուհետեւ վերստին թարմացուել ու վերահաստատուել է 1215, 1288 եւ 1289 թուականներին (տե՛ս *V. Langlois*, 22-23, 84-85, 105-108, 126-128, 154-161, հմմտ. նաեւ Handelsgeschichte der romanischen Völker des Mittelmeergebiets bis zum Ende der Kreuzzüge/von Prof. Adolf Schaube, München und Berlin, Druck und Verlag von R. Oldenburg, 1906 [Handbuch der Mittelalterlichen und Neueren Geschichte/herausgegeben von G. v. Below und F. Meinecke, Abteilung III], S. 218-219: Ջենովա քաղաքի արխիւում այդ վաւերագրերը պահւում են հիմնական արխիւային ֆոնդում գտնուող Libri Jurium della Republica di Genova, vol. I/2 / a cura di Dino Puncuh, Roma, 1996 [Publicazioni degli Archivi di Stato. Fonti XXIII.]: Լեւոն Ա-ի 1201 եւ 1215 թթ. ջենովացիներին տրուած վաւերագրերը հրատարակուած են այս հատորում, տե՛ս թ. 344, էջ 164-166, թ. 346, էջ 168-171:



*1201 թ.: Առեւտրական արտօնութիւններ են տրուել նաեւ Պիզայի[13], Ֆլորենցիայի[14], Մոնպելիէի[15], Մարսէլի[16], Սիցիլիայի[17], եւ այլ երկրների ու քաղաք-պետութիւնների[18]: Ըստ այդ պայմանագրերի՝ Կիլիկիայի արտաքին առեւտուրն իր ձեռքն էր վերցրել պետութիւնը, իսկ պայմանագրերը ողջ երկրի տարածքում յիշատակուած կողմերի հետ կնքում եւ հաստատում էր երկրի թագաւորը, որը կրում էր «Թագաւոր Հայոց» կամ «Թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսը[19]: Սակաւաթիւ պայմանագրեր են յայտնի, որոնք սահմանափակէին ինքնակալ-թագաւորի իշխանութիւնը որեւէ անհատ սենիորի տարածքում[20]:*

12 Վենետիկցիներին Կիլիկիայի տուած արտօնագրերը վեցն են, որոնք հասել են 1201, 1245, 1271, 1307, 1321, 1333 թուականներին տրուած վաւերագրերի տեսքով (տե՛ս *V. Langlois*, p. 23-25, 85-86, 109-112,143-146, 151-153, 166-169, 182-184, 193-194, հմմտ. նաեւ *A. Schaube*, Handelsgeschichte, S. 219-220:

13 Պիզացիներին տրուած արտօնագրերից պահպանուել է միայն Ռէյմոնդ-Ռուբէնի 1216 թ. տրուած վաւերագիրը, ուր նա ստորագրում է՝ որպէս Անտիոքի իշխան, եւ ոչ թէ՝ որպէս Հայոց թագաւոր: Պիզայի՝ Կիլիկիայում ունեցած առեւտրական արտօնութիւնների մասին պատմում է Ֆլորենտացի Բալդուչի Պեգոլոտին (տե՛ս *V. Langlois*, Le Trésor, p. 86-87, 138-139):

14 Չնայած Ֆլորենտեան Բարդի եւ Պերուցի առեւտրական ընկերութիւնների հետ սերտ կապերին, որոնց մասին վկայում է Բալդուչի Պեգոլոտին, մեզ է հասել միայն մէկ վաւերագիր, որն էլ, ըստ վերջինի բերած բնագրի, հրապարակել է Վ. Լանգլուան (տե՛ս *V. Langlois*, Le Trésor, p. 195):

15 Մոնպելիէի առեւտրականներին տրուած արտօնութիւններից մեզ են հասել երկուսը (տե՛ս *V. Langlois*, Le Trésor, 178-179, 185-186): Հետաքրքիր է այն պարագան, որ դրանք պահպանուել են միայն հայերէն լեզուով՝ հանգամանք, որը խօսում է հայերէնի՝ իբրեւ միջազգային հաղորդութեան կողմից ընդունելի դիւանագիտական լեզուի մասին:

16 Մեզ է հասել միայն մէկ վաւերագիր առ այն, որ Կիլիկիայի ափերին վենետիկեան նաւերից վնաս է կրել մի մարսէլցի վաճառական (տե՛ս *V. Langlois*, Le Trésor, 164-165):

17 Տե՛ս *V. Langlois*, Le Trésor, p. 186-190, հմմտ. նաեւ Բազմավէպ, 1847, էջ 92: Հետաքրքիր է նաեւ այն պարագան, որ այս վաւերագիրը եւս հասել է հայերէն բնագրով:

18 Տե՛ս *V. Langlois*, Le Trésor, p. 25-26:

19 *V. Langlois*, Le Trésor, p. 17-18.

20 Օրինակ՝ 1215 թ. ջենովացիներին տրուած արտօնագրում թագաւորի տուած արտօնութիւնները չեն վերաբերում միայն Օտտո Թաբարէացու,

*Կիլիկիայում գոյութիւն ունէին արքունական տարբեր գործակալութիւններ (մաքսատներ, շուկաներ, առեւտրական տներ եւ այլն), որոնք պէտք է նպաստէին օտարերկրացիների առեւտրական գործունէութեանը եւ ապահովէին պետութեան մաքսերի եւ օգուտների դանձումը: Վենետիկցիները, ջենովացիները եւ կիլիկիայի հետ պայմանագրեր ստորագրած տէրութիւնները Կիլիկիայի մի շարք խոշոր քաղաքներում (Տարսոն, Մոպսուեստիա, Սիս, Ադանա) հաստատում էին սեփական ներկայացուցչութիւններ, կառուցում էին եկեղեցիներ, աշխատեցնում էին արհեստանոցներ եւ մանուֆակտուրաներ, ունէին իրենց գերեզմանոցներն ու պահեստները*[21]*: Հաւանաբար նմանատիպ պայմանագրերի արդիւնք են նաեւ արդէն ԺԳ դարի ընթացքում բազմիցս յիշատակուող հայկական տները, վանքերն ու եկեղեցիները Իտալիայի գրեթէ ողջ տարածքում*[22]*:*

---

Ադամ Գաստոնցու, Վահրամ Կոռիկոսցու եւ Լեւոն Կապանցու տարածքներին (տե՛ս *V. Langlois*, Le Trésor, p. 126-127):

21 Այդ արտօնութիւնները ամրագրուում էին վերը նշուած արտօնագրերում:

22 Հայոց հետ մշակութային փոխյարաբերութիւնների բազմաթիւ վաւերագրեր են հասել, որոնցով հաստատուում է հայերի ներկայութիւնը Հռոմում, Ֆլորենցիայում, Ռիմինիում, Անկոնայում, Օրվիետոյում, Վիտերբոյում, Սիենայում, Սալեռնոյում, Կաւայում, Ամալֆիում, Նէապոլում, Ջենովայում, Փերուջայում, Գաբբիոյում, Ֆաբրիանոյում, Ֆազիոլիում, Մատերայում, Պադովայում, Վենետիկում, Տարվիզիոյում, Մանտովայում, Միլանում, Պաւիայում, Պիեմոնտում, Պոնտեկուոռոէում, Պարմայում, Պիստոյայում, Լուկկայում, Բոլոնիայում, Պիզայում, Լիւոռնոյում, Մալթայում, Սիցիլիայում: Այդ վայրերում են ընդօրինակուել բազմաթիւ ձեռագրեր, որոնց մասին խօսում են ԺԳ-ԺԴ դարերի բազմաթիւ յիշատակարաններ ու յիշատակագրութիւններ. տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթեւոսեան, Երեւան 1984, էջ 155, 217, 218, 224, 274, 313, 369, 546 եւ այլն, ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան 1950, էջ 3, 69, 75, 78, 190, 238, 503 եւ այլն:
Ողջ միջնադարի ընթացքում Իտալիայի հետ Հայաստանի փոխյարաբերութիւններին վերաբերող վկայութիւնները մանրազնին հետազօտութեան է ենթարկել Լ. Զեքիեանը (տե՛ս *L. B. Zekiyan*, Le colonie armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la Storia degli Armeni in Italia), in: «Atti dell primo simposio internazionale de Arte Armena», Venezia, 1978, p. 851-905):



*ԺԳ դարի երկրորդ կէսին, Մերձաւոր Արեւելքում խաչակրաց պետութիւնների կործանումից, մանաւանդ՝ նշանաւոր նաւահանգստային քաղաքներ Սուրի եւ Աքքայի անկումից յետոյ, մեծացաւ Կիլիկեան Հայաստանի ծովափերի եւ առեւտրական նաւահանգիստների նշանակութիւնը Արեւելքի հետ եւրոպական քաղաք-պետութիւնների եւ տէրութիւնների փոխյարաբերութիւններում: Այդ մասին են վկայում ԺԴ դարի հեղինակներ վենետիկցի Մարինո Սանուտո Դարչելոյի եւ Ֆլորենտացի Ջիովանի Ուլգանոյի գրքերը, ուր մանրամասն նկարագրուում են Կիլիկիայի ծովափնեայ հանգրուանները իբրեւ սպաս եւրոպայի ռազմական, տնտեսական եւ քաղաքական շահերի*[23]*՝ օգտագործելով նաեւ այդ ասպարէզում կուտակուած հին աշխարհի գիտելիքները: Գաղտնիք չէ, որ նշուած հեղինակներից առաջինն իր գիրքը շարադրում էր՝ նկատի ունենալով, որ շարունակուելու են կազմակերպուել նոր խաչակրաց ռազմարշաւներ դէպի Մերձաւոր Արեւելք, այդ իսկ պատճառով հեղինակը ընդգծում է կիլիկեան նաւահանգիստների ռազմավարական նշանակութիւնը:*

*Իսոսի ծոցի նաւահանգիստների դերի բարձրացմանը նպաստեց նաեւ թաթարական կայսրութեան ստեղծումը, որի դաշնակիցը դարձաւ Կիլիկիայի Հայոց թագաւորութիւնը: Թաթարական կայսրութիւնը՝ Եգիպտոսի մամլուկների գլխաւոր հակառակորդը Մերձաւոր Արեւելքում, փորձում էր իր թշնամու տնտեսական հզօրութեանը հարուած հասցնել՝ գլխաւոր առեւտրական ճանապարհները տեղափոխելով Ալեքսանդրիայից, Բաղդադից ու Դամասկոսից Փոքր Ասիա՝ Տրապիզոն ու Սինոպ: Այսօր ենք, ըստ այդ ծրագրի տրամաբանութեան, դարձաւ Թաւրիզից եկող ցամաքային ճանապարհի վերջին հանգրուաններից մէկը՝ Միջերկրական ծովում ձեռնոց նետելով վենետիկեան հովանաւորութեան ներքոյ գտնուող Աղեքսանդրիային*[24]*, մրցակցելով նաեւ վերոյիշեալ երկու սեւծովեան նաւահանգստային քաղաքների հետ, ուր իր գործունէութիւնն էր ծաւալել Ջենովան:*

---

23 Մեզ հետաքրքրող հատուածների մասին աւելի մանրամասն տե՛ս Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 299-302:

24 Տե՛ս *Г. Микаелян*, История Киликийского армянского государства, Ереван, 1953, с. 350-401.

*Դրանով պէտք է բացատրել այն մեծ հետաքրքրութիւնը, որ տարածաշրջանի նկատմամբ ցուցաբերում էին եւրոպական առեւտրական պետութիւնները՝ միջնորդ առեւտրի ամենագործուն կենտրոններ Ջենովան եւ Վենետիկը՝ իրենց քաղաքական հակամարտութիւնն ու պատերազմական գործողութիւնները 1293 թ. ծաւալելով Կիլիկիայի ծովափի անմիջական հարեւանութեամբ. «Ձնուիզացն ղալէք ԺԲ (12) կռուեցան ի յԱյաս ընդ ԼԲ (32) ղալէք եւ ընդ դարիթ Վենետացոցն եւ շահեցան ի նոցանէ ԻԴ (24) դարիթ եւ ընդ ղալէ»*[25]*: Մոնղոլների հետ Եգիպտոսի դէմ ստեղծուած կոալիցիայի մէջ գտնուող պետութեան հրճուանքով է հեթում Կոռիկոսցի ժամանակագիրը ընդգծում Կիլիկիայի հետ նոյն ճամբարում գտնուող Ջենովացիների յաղթանակը: Եւրոպայի հետ առեւտրում Ալեքսանդրիայի մենաշնորհի հաստատման լուրջ քայլեր էին նաեւ մամլուկների կողմից Այասի պարբերական աւերումները*[26]*: Բերուած օրինակները ցոյց են տալիս, թէ որքան լուրջ հակառակորդ էր իր առեւտրական մրցակիցների համար Այեաս նաւահանգիստը, որի կորուստն էլ հաւանաբար կանխորոշեց Կիլիկիայի հայկական պետութեան կործանումը:*

*Վաւերագրերը ցոյց են տալիս, թէ Կիլիկիայի թագաւորները որքան շատ էին շահագրգռուած Եւրոպայի հետ առեւտրական կապեր ունենալու խնդրում: Ըստ Բալդուչի Պեգոլոտու՝ Պրովանսի, Նիմի, Մարսէլի վաճառականները եւս արտօնութիւններ ունէին Կիլիկիայում եւ մուտքի ու ելքի համար վճարում էին սոսկ երկու տոկոս մաքս: Այդ արտօնութիւնը հաստատում են Մոնպելիէի վաճառականներին 1314 թ. յունուարի 7-ին եւ 1321 թ. մարտի 16-ին տրուած շնորհագրերը: Դրանց հայերէն բնագրերը պահպանուել են Մոնպելիէի քաղաքային արխիւում*[27]*: Վաւերագրերից առաջինը վաւերացրել է Օշին թագաւորը (1308-1320)՝ կարգադրելով Այասի մաքսապետ,*

[25] Մանր ժամանակագրութիւններ XIII-XVIII դդ., հտ. 1, կազմեց՝ Վ. Ա. Յակոբեան, Երեւան 1951, էջ 86. հմմտ. նաեւ *R. Lopez*, Storia della colonie genovesi nel mediterraneo, Bologna, 1938, p. 230; *Hild-Hellenkemper*, Kilikien, S. 163:

[26] Եգիպտոսի մամլուկները նաւահանգստային քաղաքը գրոհել կամ աւարտառել են 1266, 1275, 1283, 1298, 1305, 1320, 1322, 1337 թուականներին (այդ մասին տե՛ս *Hild-Hellenkemper*, Kilikien, S. 161-162)

[27] *V. Langlois*, Le Tresor, p. 178-179, 185-186:



*պրոքսիմոս Թորոս Մխիթարենցին կատարել հրամանը: Երկրորդ արտօնագիրը տրուած է Օշինի որդի, տասներկուամեայ Լեւոն Դ-ի (1320-1342) անունից: Այստեղ յիշատակուում է նախորդ շնորհագիրը, սակայն այս անգամ մանկահասակ թագաւորի գիտութեամբ վաւերագիրը ստորագրել են նրա երկու խնամակալները: Կարգադրութեան կատարումը թողնուած է Այասի մաքսատան գլխաւոր պրոքսիմոս Պետրոսի տնօրինութեանը: Այս վաւերագրերի գոյութիւնը խօսում է այն մասին, որ, հետեւելով միջազգային պրակտիկային, իշխանութեան իւրաքանչիւր փոփոխութեան եւ սերնդէսերունդ անցման ժամանակ պայմանագրերը Կիլիկիայում նորոգւում էին: Այս փաստը յոյս է ներշնչում, որ դեռեւս ոչ բոլոր վաւերագրերն են մեզ յայտնի, եւ այս ասպարէզում հնարաւոր են նոր յայտնագործութիւններ:*

*Բաւական լայն արտօնութիւններ էին տրւում նաեւ Կիլիկիայում գործունէութիւն ծաւալած առեւտրական քաղաքներին: Ջենովայի եւ Վենետիկի հետ կնքուած պայմանագրերը վկայում են, որ նրանց թոյլ էր տրւում ապրել իրենց շնորհուած առանձին թաղամասերում, ունենալ սեփական դատարան, եկեղեցիներ ու գերեզմանատներ, աշխատեցնել արհեստանոցներ, կառուցել իջեւանատներ, բաղնիքներ, դպրոցներ: Կիլիկիայում մահացած օտարերկրացիների գոյքը չէր բռնագրաււում, այլ մի շարք իրաւական ճեւականութիւնների կատարումից յետոյ վերադարձւում էր հանգուցեալի ժառանգներին կամ կտակի առկայութեան դէպքում՝ նրա հայրենիքին: Կիլիկիայի Հայոց պետութեան հետ առեւտուր անող քաղաքների ու պետութիւնների հետ փոխյարաբերութիւններ մշակելիս Կիլիկիան պայմանաւորւում էր երկկողմանիօրէն հրաժարուել ափամերձութեան իրաւունքից եւ տիրոջն էր վերադարձնում նաւաբեկութեան հետեւանքով ափ նետուած գոյքը*[28]*: Պետութիւնը ինքն էր հատուցում կամ ստիպում էր մեղաւորին տուժածին վերադարձնել Կիլիկիայի սահմաններում օտարերկրացիներին հասցուած վնասը: Այդ մասին լաւագոյն վկայութիւնն է Վենետիկի հանրապետութեան իշխանութիւնների առջեւ բարձրացուած իրաւական գործը, որով Կիլիկիայի իշխանութիւնները*

[28] Այդ մասին տե՛ս *Ю. Г. Барсегов*, Отказ армян от берегового права, ՊԲՀ, 1971, հտ. 1, էջ 95-110. նոյն, Борьба Киликийской Армении против пиратства в Средиземном море, ՊԲՀ, 1973, հտ. 3, էջ 71-84:

պահանջում էին հատուցել մարսէլցի վաճառական Պետրո Քուատրոլինգուային Կոռիկոսի մօտ հասցուած վնասը: Հետաքրքիր է նաեւ, որ վաւերագրում մարսէլցու օգտին վկայութիւնները են տալիս նարբոնացի վաճառական Պետրոս Դանիէլիսը եւ պիզացի Բոնուսհենա Ալբերտինին[29]:

Բացի ծովային ճանապարհից, երկրի համար կարեւոր նշանակութիւն ունէին նաեւ ցամաքային ուղիները: Միջնադարեան եւրոպական սկզբնաղբիւրներում յիշատակւում է Մարսէլից Աքքա տանող երկու ճանապարհ. մէկը բաց ծովով, միւսը՝ ծովափով: Բաց ծովով ճանապարհը ուղեկցող քամու դէպքում կարող էր տեւել ընդամէնը 15 օր[30]: Կիլիկիայի արեւմուտքից դուրս եկող առեւտրական մայրուղիները ձգւում էին Միջերկրական ծովի ափով դէպի Ատալիա[31], Իկոնիա[32], Անտիոք[33], իսկ Կապադովկիայի վրայով՝ դէպի Փոքր Ասիայի սելճուկեան նաւահանգիստներ՝ Սինոպ եւ Տրապիզոն[34]: Ըստ Բալդուչի Պեգոլոտիի եւ Մարկո Պոլոյի՝ առեւտրական կարեւորագոյն ճանապարհներից մէկն էլ Այասից ձգւում էր մինչեւ Թաւրիզ[35]: Ծովային կողքին մեծ էր նաեւ այդ ցամաքային ճանապարհների ռազմավարական եւ տնտեսական նշանակութիւնը: Այդ է պատճառը, որ դրանց տիրանալու համար Եգիպտոսի մամլուկները մէկ հարիւրա-

29 *V. Langlois*, Le Trésor, p. 164-165; այդ մասին աւելի մանրամասն տե՛ս Ղ. *Ալիշան*, Հայ-Վենետ, Վենետիկ, 1896, էջ 74-78:

30 Gesta regis Ricardi (Rolls Series), vol. II, p. 198-199; *Rodher Xovdenskij*, Chron. (Rolls Series),vol. III, p. 51 (J. K. Wright, The geographical Lore of the Time of the Crusades: A Study in the history of medieval science and tradition in Western Europe, N. Y., 1925, Дж. К. Райт, Географические представления в эпоху крестовых походов. Исследование средневековой науки и традиции в Западной Европе, Москва 1988, с. 274):

31 Այդ ճանապարհի Կիլիկիայի հատուածի մասին տե՛ս *Hild-Hellenkemper*, Kilikien, S. 134-136:

32 Տե՛ս *Hild-Hellenkemper*, Kilikien, S. 138-140:

33 Տե՛ս *Hild-Hellenkemper*, Kilikien, S. 132-133:

34 Տե՛ս *Г. Микаелян*, История, с. 353-360; հմմտ. նաեւ *Hild-Hellenkemper*, Kilikien, S. 136-138:

35 *Francesco Balducci Pegolotti*, La Pratica della Mercatura, ed. A. Evans (The Mediaeval Academy of America, Publication 24). Cambridge Mass. 1936, p. 28, 389; հմմտ. *Hild-Hellenkemper*, Kilikien, S. 137:



մեակ շարունակ պատերազմներ մղեցին մոնղոլների դէմ՝ օգտագործելով նաեւ փոքրասիական սելջուկների ուժերը, որոնք մինչեւ մոնղոլների յայտնուելը տարածաշրջանում փորձում էին իրենց ձեռքը վերցնել Կիլիկիա-Կապադովկիա-Սինոպ գնացող ցամաքային ուղիները: Կիլիկիայի նաւահանգիստները եւ Ատալիայից ու Իկոնիայից եկող՝ դէպի Անտիոք գնացող ցամաքային ճանապարհները վաղուց ի վեր օգտագործւում էին նաեւ Երուսաղէմ գնացող ուխտագնացների կողմից[36]:

Ինչպէս տեսանք, Կիլիկիայի հայկական թագաւորութեան՝ եւրոպայի հետ փոխյարաբերութիւնների պատմութեան ուսումնասիրութեան հիմնական սկզբնաղբիւրները մնում են առեւտրական պայմանագրերն ու արտօնագրերը, որոնք պահւում են Իտալիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի եւ Իսպանիայի արխիւներում: Այդ վաւերագրերի մեծագոյն մասի հրատարակութեան եւ գիտական շրջանառութեան մէջ դնելու մեծ աւանդի համար պէտք է արժանին մատուցել ֆրանսիացի գիտնական Վիկտոր Լանգլուային եւ Վենետիկի մխիթարեան միաբան հ. Ղեւոնդ Ալիշանին[37]: Չնայած նրանց գրքերի հրապարակումից անցել է արդէն մէկ դարից աւելի, սակայն Թուրքիայ, Ջենովայի[38], Վենետիկի, Ֆլորենցիայի, Նեապոլի, Մալթայի,

36 Տե՛ս *Hild-hellenkemper*, Kilikien, S. 132, 141:

37 Եթէ Վ. Լանգլուան ի մի է հաւաքել եւրոպական արխիւների մեծագոյն մասը (տե՛ս *V. Langlois*, Le Trésor p. 6-12), ապա Ղ. Ալիշանը մասնաւոր հետազօտութեան է ենթարկել Վենետիկի քաղաքային դիւանատները (տե՛ս L'Armeno-Veneto, compendio storico e documenti delle Relazioni degli Armeni coi Veneziani, primo periodo, secoli XIII-IV, parte II, Venezia 1893):

38 Ջենովական վաւերագրերին նուիրուած նորագոյն հետազօտութիւններից տե՛ս *Catherine Otten-Froux*, L'Aïas dans le dernier tiers du XIII$^{e}$ siècle d'après les notaires Génois. - Asian and African studies. Journal of the Israel oriental Society, vol. 22, nos. 1-3, november 1988 [The medieval Levant studies in memory of Eliyahu Ashtor (1914-1984)], p. 147-171: Այս աշխատանքում քանակական վերլուծութեան են ենթարկւում Այասին վերաբերող մօտ 256 ջենովական գործարքային վաւերագիր: Ուսումնասիրութեան այս եղանակը ցանկալի կը լիներ օգտագործել նաեւ ԺԳ.-ԺԴ. դարերի միւս առեւտրական քաղաքների հետ Կիլիկեան նաւահանգիստների փոխյարաբերութիւնների հետազօտութեան բնագաւառում: Այդ ջենովական վաւերագրերի վերջին եւ ամբողջական հրատարակութիւնը տե՛ս

*Վիեննայի, Բեռլինի, Փարիզի, Մոնպելիէի, Լոնդոնի, Բարսելոնի, Մադրիդի, Սեգովայի արխիւներում կամ ուրիշ դիւանատներում այլեւս գիտութեան այդ ոլորտին վերաբերող էական յայտնաբերումներ չեն կատարուել:*

*Հետազօտութեան ներկայ փուլում կարիք է առաջացել հրատարակել, քննել եւ նկարագրել Կիլիկիայի արքունական, իշխանական, կաթողիկոսական եւ եպիսկոպոսական դիւաններից դուրս եկած բոլոր վաւերագրերը: Այդ տեսանկիւնից բաւական յուսադրող արդիւնքներ են սպասւում, օրինակ, Հռոմի, Ջենովայի, Նանտի, Բորդոյի եւ Մարսէլի արխիւների մանրազնին հետախուզումներից[39]: Ցոյս ունենանք, որ գիտական ուսումնասիրութիւնների շարունակումը Եւրոպայի մի շարք քաղաքային եւ պետական արխիւներում, որոնք հասու չեն եղել վերեւում յիշատակուած հեղինակներին, թոյլ կտան յայտնաբերել մեզ հետաքրքրող խնդիրներին վերաբերող այլ վաւերագրեր եւ ամբողջացնել Կիլիկեան Հայաստանի եւ Եւրոպայի քաղաքական, տնտեսական, եկեղեցական եւ հոգեւոր-մշակութային փոխյարաբերութիւնների պատմութիւնը:*

---

39 *L. Balletto*, Notae Genovesi in Oltramere atti Rogati a Laiazzo: da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277-1279), Genova 1989:
Ի տարբերութիւն առեւտրական պայմանագրերի ու գործարքների, իմ կարծիքով, մեծ են սպասելիքները վերոյիշեալ եւ մանաւանդ Հռոմի պապական արխիւներում Կիլիկիայի թագաւորների եւ կաթողիկոսների նամակների եւ այլ վաւերագրերի յայտնաբերման գործում: Այդ է վկայում նաեւ կիպրոսցի հետազօտող Նիկոլա Կուրէասի հետազօտութիւնը Nicolas Coureas, The Papacy's relations with the kings and the Nobility of Armenia in the period 1300-1350. - Actes du Colloque "Les Lusignans et l'Outre mer", Poiatiers-Lusignan 20-24 octobre 1993, p. 99-108:

# ՀԱՅՑ ՈՒՂԵԳԻՐՆԵՐԸ ՀՌՈՄԻ ԵՒ ԻՏԱԼԻԱՅԻ ՄԱՍԻՆ

*Պ. Չոբանեան*

*Իտալիան եւ մասնաւորապէս Հռոմը առանձնայատուկ տեղ են զբաղեցրել հայ ժողովրդի ուշ միջնադարեան պատմութեան գրեթէ ողջ ժամանակահատուածում: Հռոմը հայոց համար ե՛ւ ուխտավայր ու սրբավայր էր, ե՛ւ քաղաքական ակնկալիքների ու սպասումների, եւ թէ հոգեկան ու ֆիզիկական փրկութեանը սատարող կենտրոնի մարմնաւորում: Որքանով ծանր էր Արեւելքում Հայաստանի վիճակը, նոյնքան աճում էր Հռոմի դերն ու նշանակութիւնը հայ ժողովրդի ազգատագրական մտքի ու գաղափարախօսութեան մէջ: Հայաստանում Իտալիայի եւ մասնաւորապէս՝ Հռոմի կերպարի ձեւաւորման մէջ մեծ էր նաեւ հայ ուխտաւոր ճանապարհորդների ու վաճառականների դերը, որոնց բերած տպաւորութիւններն ու տեղեկատուութիւնը ազդում էին նշուած կերպարի համակողմանի ձեւաւորման վրայ:*

*Հայ ուղեգրական մատենագրութիւնը հայոց գրաւոր մշակոյթի կարեւոր բաղկացուցիչ մասերից է եւ սկզբնաւորուել է հայ մատենագրութեան հետ գրեթէ միաժամանակ: Արդէն Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» մէջ կան ուղեգրական բնոյթի հատուածներ Միջագետք, Պաղեստին, Եգիպտոս, Իտալիա եւ Յունաստան կատարած իր ճանապարհորդութիւնների մասին[1]: Ուղեգրական երկերի մէջ զգալի թիւ են կազմում ուխտաւորական այցելութիւնների եւ սրբավայրերի նկարագրութիւնները[2]: Եւրոպական երկրներում հայ ուխտաւորների այցելութիւնների մասին վկայութիւններ են պահպանուել Ժ–ԺԱ դարերից[3]: ԺԲ դարում մեծ չափեր են ընդունում հայ–ի-*

---

1 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1991, էջ 343-346 (գիրք երրորդ, գլուխ ԿԲ):

2 Հայ մատենագրութեան մէջ վաղագոյն յուշարձանը Անաստաս վարդապետի (Զ դարի վերջին քառորդ) կողմից կազմուած եւ եօթերորդ դարի խմբագրութեամբ մեզ հասած Երուսաղէմի հայկական վանքերի ցուցակն է: Տե՛ս «Բազմավէպ», 1882, էջ 23-25:

3 Gerard Dedeyan, Les arméniens en Occident (fin Xe debut XI siecle). - "Occident au X e siecle", Paris, 1979, p. 124-133. Ժերար Դեդեյեան, Հայ

տալական փոխյարաբերութիւնները[4], իսկ ԺԳ դարի 30-ական թուականներից մեծանում է հայերի ներհոսքը դէպի իտալական քաղաքներ եւ մասնաւորապէս՝ Հռոմ[5], պայմանաւորուած մոնղոլական արշաւանքների ու Հայաստանի աւերածութիւնների հետ:

1230-ական թուականներից Հռոմում յիշւում են ե՛ւ Հայոց տուն, ե՛ւ «Հանգստարան տանս Հայոց», ե՛ւ թէ եկեղեցի՝ Սուրբ Աստուածածին կամ Սուրբ Մարիամ (Աստուածածին): ԺԳ դարի երկրորդ կէսից հայկական եկեղեցիներ, իջեւանատներ ու հանգստարաններ են յիշատակւում իտալական այլ քաղաքներում եւս: Իտալական քաղաքներում հայերի այցելութեան ու մշտական բնակութեան մասին վկայութիւններ առաւել յաճախակի են հանդիպում ԺԴ դարում: Հիմնադրուած եկեղեցիներին ու վանքերին կից ստեղծուող գրատներում ծաւալւում է մշակութային աշխոյժ գործունէութիւն, արտագրւում եւ բազմացւում են հայերէն ձեռագրեր (Բոլոնիա, Վենետիկ, Սալեռնո, Պիզա եւ այլն): Ձեռագրերի յիշատակարաններում գրիչները նկարագրում են իրենց ճանապարհորդութեան հանգամանքները, դրդապատճառները եւ այլն: Այսպէս, թէթ 1210 թ. Հեթում Հեղիի ճանապարհորդութիւնը թելագրուած էր դիւանագիտական նկատառումներով, ապա 1239 թ. Վարդան Խաչենեցին մեծ խումբ համախոհներով յայտնուել էր Հռոմում՝ խոյս տալով մոնղոլական հալածանքներից: 1261 թ. Դաւիթ Բջնեցին ուխտաւորական այցելութեամբ եղել է Երուսաղէմում, ապա այցելել Հռոմ, իսկ այնուհետեւ հասել մինչեւ Իսպանիայի սուրբ Յակոբ առաքեալի վանքը: Գրեթէ նոյն երթուղին էր ընտրել 1311 թ. Վարդան քահանան, որը արձանագրում էր, թէ «մեծաւ աշխատանօք գնացեալ տեսի սուրբ տեղիսն եւ յոյժ փորձութեան հանդիպեցայ ի ծովու եւ ի ցամաքի»[6]: Ուխտաւորութեամբ

4 վանականները եւ ուխտաւորները Արեւմտեան Եւրոպայում X դարի վերջում-XI դարի սկզբում, - «ՊԲՀ», 1984, 3, էջ 21-36:
Ժան Մարի Մարտին, Արեւելցիները Հարաւային Իտալիայում (մինչեւ ԺԱ դարը). տե՛ս «Էջմիածին», 1998, թիւ Զ, էջ 60:

5 B. L. Zekiyan, Le colonie Armene del medio evo in Italia e le Relazioni culturali Italo-Armene (Materiale per la Storia degli Armeni in Italia), - "Atti del Primo simposio internazionale di arte Armena", Venezia, 1978, p. 813-851.

6 ԺԴ դարի յիշատակարաններ, էջ 75:



Հռոմ եւ Իսպանիա ուղեւորութիւնը շարունակուել է նաեւ ԺԵ դարում: 1476 թ. Աղթամարում ընդօրինակուած Ցայսմաւուրքի գրիչը պատմում է Սարգիս կրօնաւորի ճանապարհորդութեան մասին՝ ասելով, թէ «գնացեալ եհաս ի մեծն Հռոմ, ի սուրբ գերեզմանս գլխաւորացն Պետրոսի եւ Պօղոսի եւ կացեալ անդ տարով եւ այլ աւելն եւ եւթեալ գնաց ի Սպանեայ եւ ի Լուրիկէ, որ է եզր Աշխարհիս՝ ի սուրբ Յակորայ գերեզմանն...»[7]: Դեռեւս Ղ. Ալիշանն է նկատել, որ «ԺԵ դարուն վերջի տարիներուն (1493-1496 թթ.) նոր շարժմունք մի կ'երեւի հայոց ի Վենետիկ, եկող գացողներն կ'աւելնան, որոց համար հարկ կ'ըլլայ հոգաբարձուաց (Հայոց տան) այն մանր նորոգութիւններու տեղ բոլորովին նորոգել կամ վերաշինել Հայոց տունը»[8]:

1489 թ. Երզնկայի Սուրբ Կիրակոսի վանքից Արեւմուտք է ճանապարհւում հայ ուղեգիրներից առաւել ճանաչում գտած Մարտիրոս եպիսկոպոս Երզնկացին[9]: Ուղեւորութեան ընթացքում Մարտիրոս Երզնկացին համառօտ նկարագրում է այցելած քաղաքները, տեսած վանքերն ու եկեղեցիները: Համեմատաբար ընդարձակ են Վենետիկի եւ Հռոմի նկարագրութիւնները: Մարտիրոսը Վենետիկը բնութագրում է հակիրճ եւ դիպուկ. «Քաղաք մեծ եւ փառաւոր եւ ինքն է ի մէջ ծովուն է շինած: 74000 տուն է, խիստ փառաւոր եւ հարուստ քաղաք է: Եւ մեծ եկեղեցի մի կայ ի մէջ քաղաքին, որ ԺՌ (10000) մարդ կու մտնէ ի մէջն, եւ խիստ զարդարած է ոսկով, սուրբ Մարկոս յԱւետարանիչն եկեղեցին է եւ երկու երգեհոն կայ ի մէջն, եւ Բ (2) թեւաւոր ոսկի առիւծ է շինած ի մէջն»: Արձանագրելով քաղաքում այլ եկեղեցիների գոյութիւնը եւս՝ Մարտիրոսն անցնում է սուրբ Մարկոսի հրապարակի նկարագրութեանը. «Եւ մեծ մատան մի կայ առջեւ եկեղեցոյն սուրբ Մարկոսի եւ ի դրանն շատ ի վեր Դ (4) դեղին պղընձէ ձի, շինած եւ կանկնեցուցած մեծ-մեծ եւ գ1-1 ոտվին ի

7 ԺԵ դարի յիշատակարաններ, Բ, էջ 403:

8 Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 200:

9 Մարտիրոս Երզնկացին յիշւում է 1471 թ. Երզնկայի Աւագ վանքում ընդօրինակուած եւ այժմ Երուսաղէմում պահուող ձեռագիր Մաշտոցի յիշատակարանում. «Այլ եւ զտէր Մարտիրոս եպիսկոպոսն, որ զաւրինակն շնորհեաց որ գրեցի» (Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. IV, Երուսաղէմ, 1969, էջ 482, թիւ 1286):

վեր են կալեր: Եւ հարաւ կողմն ի ծովուն դիհն հայ ծախողներն են: Եւ 2 մեծ սուն է կանկնեցուցած. Ա-ին վրայ թեւաւոր առիւծին եւ ի մէկալին սուրբ Գէորք կանկնեալ է»[10]: Վերջին այս պնդումը իրականում ճշգրտման կարիք չունի. իբր սուրբ Գէորգի փոխարէն պէտք է լինէր սուրբ Թէոդորոս[11]:

1586 թ. Հայաստանից իր ուղեւորութիւնն է սկսել Փիրզատա Ղափանցին եւ Արեւելեան Եւրոպայի երկրներ այցելելուց յետոյ ժամանել Վենետիկ, Անկոնա, Հռոմ, Նէապոլ, Սիցիլիա, Միլան, Թուրին եւ իտալական մի շարք այլ քաղաքներ[12]:

1587 թ. Երզնկայից սկսելով իր ճանապարհորդութիւնը՝ Սարգիս աբեղան շուրջ վեց տարի (1587-1592 թթ.) այցելութիւններ է կատարել Եւրոպական մայրցամաքի բազմաթիւ քաղաքներ, որոնց մասին ուշագրաւ հաղորդումներ է թողել իր ուղեգրութեան մէջ[13]:

Հայ ուղեգրութիւնների մէջ եզակի հետաքրքրութիւն է ներկայացնում Խաչատուր Թոխաթեցու «Պատմութիւն Վէնէտիկոյ քաղաքին» չափածոյ երկը: Այն գրուել է «թվին ՌԿԳ (1614) յունիսի ԺԵ (15) ի վերայ ծովու եւ ի մէջ նաւի, որում ակն ունիմք ի Քորֆեզ քաղաք ելանեմք»: Ինչպէս Խաչատուր Թոխաթեցու, այնպէս էլ նոյն ժամանակ ճանապարհորդած Սիմէոն Լեհացու ճանապարհորդական նօթերով հայ ուղեգրութիւնների ժանրը ձեռք է բերում նոր որակ ու նոր մակարդակ: Եթէ մինչ այդ ուղեգրութիւնները հիմնականում կրում էին նկարագրական բնոյթ, ապա ԺԷ դարի սկզբից դառնում են վերլուծական եւ հասցէագրւում են ընթերցողների այլ շրջանակների, արտայայտում հայ հասարակութեան զարգացման նոր փուլ: Նշուած հեղինակները ակնյայտօրէն Վենետիկն իր տեսարժան վայրերով, նիստ ու կացով դիտել ու նկարագրել են ազգայինի, Արեւելք-Արեւմուտք համեմատութեան ու հակադրութեան տեսանկիւնից: Եթէ Խաչատուր Թոխաթեցին Իտալիան տեսնում է հայ ազգային աւանդոյթների տեսանկիւնից՝ իր ընդունելի եւ անընդունելի, ցանկալիի եւ մերժելիի կողմերով, ապա Սիմէոն Լեհացին[14] ցաւում է, որ հայ ժողովուրդը ոչ միայն զուրկ է եւրոպական զարգացման մակարդակից, այլեւ հետզհետէ խորանում է այդ տարբերութիւնը, հայերը զրկւում են նաեւ Իտալիայում նախկինում ունեցած իրենց ազգային բարձր վարկից ու հեղինակութիւնից: Ուշագրաւ է, որ վերջին այս հանգամանքը չի արձանագրել ԺԶ դարի վերջին տասնամեակներին ճանապարհորդած Փիրզատա Ղափանցին, ուստի թերեւս Թոյլատրուի մտածել, թէ հայերը դեռեւս պահպանում էին իրենց բարձր վարկը[15]: Իտալիայում իր ուղեւորութիւնները շարադրելու ընթացքում նա «Ճիճիւայ երկիրն» (Սիցիլիա?) այցելելու առիթով նշում է, թէ «հայական ազգն խիստ կ'ուզեն»: Արդեօ՞ք այդ նշանակում է, թէ միւս քաղաքներում, որոնց առիթով բացակայում է նման նշումը, այլ վերաբերմունք է եղել հայերի նկատմամբ:

Խաչատուր Թոխաթեցին իր ուղեգրութիւնը անուանել է «Պատմութիւն Վենետիկոյ քաղաքին» եւ Վենետիկ քաղաքի օրինակով նկարագրում է իտալական հասարակութեան կեանքը իր բոլոր դրսեւորումներով: Այն սկսւում է քաղաքի հիմնադրման մասին աւանդաղրոյցով, ապա նշւում է Վենետիկի աշխարհագրական առանձնա-

10 Վ. Յակոբեան, Մարտիրոս Երզնկացու Ճանապարհորդական նօթերը, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս.գիտ.), 1957, թիւ 6, էջ 103 104.

11 Սուրբ Գեւորգ է նշուած նաեւ Սիմէոն Լեհացու մօտ: Տե՛ս Սիմէոնի դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 60: Հմմտ. Ղ. Ալիշան, Հայ Վենետ, Վենետիկ, 1896 էջ 196:

12 «Բազմավէպ», 1882, էջ 317 318:

13 Լ. Ս. Խաչիկեան, Սարգիս աբեղայի ուղեգրութիւնը,- «ՊԲՀ», 1970, թիւ 3, էջ 125-148:

14 Խաչատուր Թոխաթեցու եւ Սիմեոն Լեհացու հայեացքների նմանութեան մասին առաջինը նշել է «Պատմութիւն Վենետիկոյ քաղաքին» երկի հրատարակիչ Կարո Մ'ելիք-Օհանջանեանը. «Այդ զոյգ հեղինակները միեւնոյն տեսադաշտից են դիտել եւ նկարագրել Վենետիկը՝ իր տեսարժան յուշարձաններով եւ նիստ ու կացով» (Երեւան, 1961, էջ 238):

15 Ուշագրաւ է, որ Եթովպիայում կաթոլիկ հոգեւորականներից ոմանք 1657 թ. անգամ ներկայանում էին որպէս հայազգի: Տե՛ս «Bibliotheca Missionum», begonnen von P. Robert Streit O.M.I. fortgeführt von P. Johannes Didinger O.M.I., Sechzehnte Band: Afrikanische Missionsliteratur. 1600-1699, Freiburg: Herder, 1952, S. 545. - "Von Januar bis Juni fand ich einen einzigen Katholiken, Blas Affonso Torralva. Ich nenne mich Gregorius aus Armenien. ... Ich werde wohl nie zu Euch zurukkehren, dennalle Armenier und Aegypter werden hier zuruckgehalten. ...Schreibt auf der Adresse: Gregorius Armenus, am besten auf Arabisch". Epistola P.Francisci Storer S.J. ad P. Joannem Collaco S.J. Rectorem Collegii Diensis.- Ex Aethopia: 28 Junii 1657.

յատուկ դիրքը, որով զգալի չափով պայմանաւորուած էր նրա անառիկ յարատեւութիւնը.

«Փողոցներն է ամէնըն ծով,
Մտից հնար իսկի չի կայ»:

Յիշատակելով Սուրբ Մարկոսի եկեղեցին, որի «Զմէչն ու բոլորն համրեցի՝ երեք հազար սիւն կայ բոլորն», Խաչատուր Թոխաթեցին անցնում է քաղաքի հասարակական կեանքի ու բարքերի ներկայացմանը: Հասարակական կեանքի գլխաւոր առանձնայատկութիւնը այն է, որ ի տարբերութիւն այլ երկրների եւ մասնաւորապէս՝ Արեւելքի, «ի ցեղից թագաւորաց եւ ի զարմից չունին սոքա», այլ

«Քառսուն իշխանք՝ հնազանդ միմեանց,
Ի վերայ գանձուց տիրեն սորա»:

Այնուհետեւ պատմւում է Վենետիկում հասարակական մի շարք արատների բացակայութեան մասին (անօրինութիւն, կաշառակերութիւն եւ այլն), որ այնքան ծանօթ ու տարածուած էին Արեւելքում, եւ որոնցից այնքան տուժում էր հայ ժողովուրդը՝ գտնուելով Օսմանեան կայսրութեան կազմի մէջ:

Իտալական կեանքի միւս առանձնայատկութիւնը գիտական ու մշակութային բնագաւառներում, արհեստագործութեան մէջ կատարվող նորանոր յայտնագործութիւնները, առեւտրա–տնտեսական աշխոյժ կեանքը եւ աշխարհիկ ու հոգեւոր կեանքի ներդաշնակ համատեղումներն են, որոնցով եւս այն դրականօրէն հակադրւում է Արեւելքին: Ի տարբերութիւն բազում աւերումներ տեսած Հայաստանի քաղաքների,

«Հազար եւ երկու հարիւր տարի
Որ Վենետիկըն շինեալ կայ,
Չարկամաց ձեռք իսկի չ'անկեր
Եւ ոչ կրակ հրդեհէր զնա:
Ջինչ որ ունի վաղուց հետէ
Եւ ի պապանց մնացեալ կայ,
Ամէն տարի կու յաւելնայ
Եւ ոչ մէկ փող կու պակասէ»:



Արեւելք-Արեւմուտք հա կադրութեան մա սին Խա չատուր Թոխաթեցին ուշադրի օրինակներ չի բերում, արտաքուստ նա նկարագրում է միայն Արեւմուտքը, սակայն՝ հայերէն եւ, բնականաբար, հայերի համար: Ընդգծելու համար, որ Վենետիկը Արեւմուտքի հաւատքական կերպարն է, Խաչատուր Թոխաթեցին բերում է նաեւ վրայ եղած իր ուղեկիցների վկայութիւնը, թէ՝

«Ցորժամ զբաներըս գրէի
Ես առ ընկերս չխօսէի,
Ծիծաղէին ի յիմ վերայ
Թէ Վէնէտիկ յաչքդ կ'երեւի:
Արի գնա Ըսպանիա,
Տես ըզճանփուն մեծ քաղաքնին.
Անապօլի, Ալիկուռնա,
Ֆլորենցա, Կրոանտուքա,
Միսինիէ եւ Փալերմէ,
Մարչիլիա Ֆըռանցիսի,
Ճինէվա - մարճանին տեղն է,
Գեղն է նման Վէնէտիկի»:

Գայթակղիչ է Եւրոպան, մասնաւորապէս՝ Իտալիան եւ Վենետիկը, Թոխաթեցու նկարագրութեան մէջ, առաւել եւս արեւելցու համար, եւ Խաչատուր Թոխաթեցին նշում է՝ «Փառք շինողին եւ օրինողին», սակայն այն աւելին չէ, քան հայրենիքը, որ նոյն Խաչատուրի համար Թոխաթն է, ուստի՝

«Ամենեքեան բարով վայլեն,
Օրինեն զԱստուած միշտ կենդանին,
Եւ ես բարով հասնիմ յիմ տեղս,
Թոխաթ քաղաք հերիք ինձի»:

Ժամանակագրօրէն յաջորդ ուղեգիրը, որ այցելել է Իտալիա եւ ընդարձակօրէն պատմում է նրա մասին, Սիմէոն դպիր Լեհացին է: Նա Կոստանդնուպոլսից դէպի Իտալիա ճանապարհորդել է 1611 թուականին: Նրա համար եւս Իտալիան եւ մասնաւորապէս՝ Հռոմը Արեւմտեան Եւրոպայի խորհրդանիշն է, որին ուղղակի նա անուանում է Ցռանկստան.

«Աստուած առնէ մեզի տէրման...
Երթանք տեսնունք ըզՓոռանկստան,
Պօղոս Պետրոսի գերեզման»[16]:

*Նկարագրելով Վենետիկի գեղեցկութիւնը, ճոխութիւնն ու հարստութիւնը՝ Սիմէոն Լեհացին ամփոփում է հետեւեալ ձեւով. «Եւ մեք զայս ամենայն տեսեալ գոհացողական փառս մատուցաք Աստուծոյ, որ այսպէս փառք եւ մեծութիւն եւ պերճ ճոխութիւն է տուել* քրիստոնէից եւ իշխանութիւն: Իսկ մեք վշտալի կենօք յայսմ ամենայնէ զրկեալ եւ գերի եղեալ այլազգաց եւ տաճկաց վասն մեղաց մերոց»[17]*: Այս նշանակում է, թէ Վենետիկը կամ, աւելի ճիշտ է ասել, Արեւմուտքը, նոր լիցք էր հաղորդում հայ գործիչներին ազատագրական մտորումների համար: Սիմէոն Լեհացուն Վենետիկում զարմացնում, եւ նա արձանագրում է այն, ինչը յատուկ չէ Արեւելքին, սակայն ցանկալի կլինէր դրանց ընդօրինակումը, այն է՝ վիճակագրութեան լայն օգտագործումը հասարակական կեանքի կազմակերպման մէջ, կանանց գրագիտութեան աստիճանի բարձրացումը, բնակչութեան բժշկական ճրի սպասարկումը եւ այլն:*

*Ի տարբերութիւն Խաչատուր Թոխաթեցու, Սիմէոն Լեհացին նախանձախնդրօրէն հետամուտ է այցելած քաղաքներում հայ բնակչութեան առկայութեան արձանագրումներին: Վենետիկում «միլ մի հեռի ի քաղաքէն կայր վանք մի Սուրբ Գէորգ անուն, զոր Հայոց վանք կոչեն, խիստ զարմանալի եւ պատուական, անդր թաղեն զՀայք»[18]:*

*Քաղաքական խնդիրները եւս տեղ են գտել Սիմէոնի ուղեգրութեան մէջ: Ներկայացնելով Հռոմի պապի եւ Վենետիկի հանրապետութեան միջեւ ծագած հակասութիւնը՝ Սիմէոնը արձանագրում է, թէ «Վէնէտիք է բանալի եւ մուտ Ճռանկաց երկրին»[19]. եւ ուրախութեամբ է նշում հակասութեան խաղաղ կարգաւորման մասին, որը Օսմանեան Թուրքիային զրկեց առիթից՝ օգնութեան պատրուակի*

16 Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, տարեգրութիւն եւ յիշատակարանք, ուսումնասիրեց եւ հրատարակեց Ն. Ակինեան, Վիեննա, 1936, էջ 52:

17 Նոյն տեղում, էջ 57:

18 Նոյն տեղում, էջ 69:

19 Նոյն տեղում, էջ 76:



*տակ արշաւանք կազմակերպելու դէպի քրիստոնէութեան միջնաբերդը հանդիսացող եւրոպական երկրներ:*

*Մեծ գովեստով է արձանագրում Սիմէոն Լեհացին իտալական ժողովրդի մշակութային հանճարը. «Եւ են մարդիք աշխարհին այն յոյժ շնորհալիք, որ այլ աշխարհ չգտանին, միայն հոգի չկարեն տալ, բայց այլ ամէն հունար կ'ելնէ ի ճեռաց նոցա»[20]:*

*Տնտեսական կեանքի աշխուժութիւնը ներկայացնելու համար նա բերում է իրենց հետ Վենետիկ ժամանած մի վաճառականի օրինակը, որը երեք օրում վաճառել էր 300 բեռ ապրանք, «զոր յայլ աշխարհ մին տարին չկարէր ծախել, անդ իրեք օրն ծախեց»[21]:*

*Առաւել բնութագրական են տարբերութիւնները Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ կենցաղում. «Թեպէտ գինին շատ եւ առատ է, այլ արբեցութիւն բնաւ ամենեւին չկայ ի մէջ նոցա, եւ թէ ըմպեն՝ ջուր խառնեն եւ ջրով ըմպեն: Այլ եւ ... չունին զուլում եւ անիրաւութիւն. չկայ եւ որձապղծութիւն, եւ թէ ուրեք գտցի, իսկոյն այրեն անխտիր: Չկայ գողութիւն, սպանութիւն, հարամութիւն, ոչ թէ միայն ի քաղաքն, այլ եւ ի ճանապարհս եւ անվար վայր տեղս եւ յանտառս մայաուռւս. եւ ոչ գիտեն անդ, թէ քարվանն ինչ է, այլ որ տեղ կամի ոք գնալ, միաւոր երթայ անահ. եւ թէ ոսկի թաղ դնես ի գլուխ՝ ոչ վնասիս, զի եւ մեք, որ անլեզու եւ անծանօթ զարիպ էաք, յերկար ճանապարհնին գնայաք խաղաղ եւ անդորը, որպէս ի ժամանակս Մօրկայ կայսերն»[22]:*

*Ինչպէս եւ Խաչատուր Թոխաթեցին, Սիմէոն Լեհացին եւս Արեւմուտքի առաջադիմութեան գաղտնիքը բացատրում է օրինապահութեան հանգամանքով. «Վասն աւրինաց պահպանութեան եւ ստէպ ա-*

20 Նոյն տեղում, էջ 70:

21 Նոյն տեղում, էջ 70:

22 Նոյն տեղում, էջ 87: Այս ձկարագրութեամբ Սիմէոն Լեհացին ընդգծում է այն տարբերութիւնը, որի մասին նա գրել էր Քիլիսի ձկարագրութեան ժամանակ. «...եկաք ... ի Քիլիս քաղաք, ի սիճօրն փոռանկաց, որ այս կողմն տաճկաց է եւ միւսն՝ փոռանկաց, եւ միջովն անցանէր գետ մի: Բայց ի ճանապարհին շատ վիշտ եւ նեղութիւն կրեցաք եւ ազգի ազգի տառապանք, այլ եւ ահ եւ դողում ի հարամկաց եւ յաւազակաց, եւ այնպէս դժուար էր, որ հինգ հարիւր, վեց հարիւր հոգի չիշխէր երթալ» (նոյն տեղում, էջ 49):

*ղօթից բազում բարեաց արժանի արար զնոսա Աստուած եւ ապրեցոյց ի բազմադիմի հարուածոց եւ ցասման, որ գան ի վերայ աշխարհիս...»*[23]:

*Իտալիան միայն իր ուխտատեղիներով ու ճարտարապետութեամբ, իր գիտութեամբ ու մշակոյթով, իր մարդկանցով ու բարքերով չէ միայն, որ հրապուրել է հայերին: Հայ ուղեգիրները նշում են Հռոմի «հայասիրութիւնը». Փիրզատա Ղափանցու հակիրճ ձեւակերպումով («Հայական ազգն խիստ կ'ուզեն») յայտնի է դառնում, որ Իտալիայում ոչ միայն յստակ վերաբերմունք էր ձեւաւորուել տարբեր ազգերի ներկայացուցիչների նկատմամբ, այլեւ կար ընդգծուած «հայասիրութիւն»: Թէ ինչո՞ւմ էր դրսեւորուում այդ «հայասիրութիւնը», մեզ որոշ տեղեկութիւններ է հաղորդում Սիմէոն Լեհացին. «Հայն ի վեր նստի եւ [պապն] ամէնին անուն տայ զառաքելոց, բայց հային Պետրոս. Աստուած զիւրեանց հոգին լուսաւորէ, որ զմեզ աւելի կու հոգան, քան թէ մեք»*[24]*: Այդ նշանակում է, թէ նշուած երեւոյթը անցողիկ, եզակի դրսեւորմամբ յայտնի երեւոյթ չէր, այլ պէտք է ունենար որոշակի պատմական աւանդոյթ: Դեռեւս 1585 թ. ապրիլի 10-ին Գրիգոր ԺԳ պապին գրած նամակում Զաքարիա կաթողիկոսը շեշտում էր. «Գիտացաք զգթութիւն եւ զմտածութիւնն եւ զշտապն առանձնական, որ քո սրբութիւնդ ունի ի մեզ՝ քո որդւոցդ հայոց աւելի, քան զայն ընդհանրական, որ ունին ամենայն քրիստոնեայք: Քանզի ի Հռոմ տուեալ ես ... ազգի եկեղեցի եւ օթարան եւ բազում ողորմութիւն եւ յետոյ մէկ դասատուն մի վասն ուսուցանելոյ զտղայոց հայոց եւ տուեր ես շինել նոր պասմագիր գեղեցիկ ի հայոց լեզու, եւ քանզի քո սրբութիւնդ կամի օգնել եւ կանգնեցուցանել զմեզ ի յայսմ տնանկութենէս հոգեւոր եւ մարմնաւոր...»*[25]*: Ժամանակներն անցնում էին, սակայն խնդիրները մնում էին նոյնը: Այդ նամակից ուղիղ մէկ դար անց, 1685 թ. սեպտեմբերի 6-ին, Հռոմում պապին գրած նամակում հայ եպիսկոպոս Արիստակէսը ասում էր. «Խիստ հարկաւոր է չորս ազգ լեզուով գրքեր շինել եւ հաւատոյ բանն ծա-*

[23] Նոյն տեղում, էջ 88:

[24] Նոյն տեղում, էջ 145:

[25] Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, Վիեննա, 1878, էջ 310:



*նուցանել, որ ամէնքն կարենան ուսանիլ զնոյնն հեշտութեամբ եւ դիւրութեամբ, այսինքն՝ հայերէն, թուրքերէն, պարսկերէն եւ արաբերէն...: Երկրորդ՝ որ Ս. Մարիամ Եգիպտացւոյն եկեղեցին եւ վանքն ինձ տայք, որ ես զնա պահեմ եւ զարդարեմ... եւ անդ հայոց միաբանք, քահանայք եւ սարկաւագունք ժողովեմ եւ ժամ եւ պատարագ եւ այլ բարեկարգութիւնք հայերէն ամէն օր... զի ազգն տեսնէ եւ մխիթարի եւ Աստուած փառաւորի...: Երրորդ՝ երկու ազգք կան մեր երկիրն, մէկին թուրքմէն կասեն, որ կՌ (60000) տուն աւելի կան, եւ մէկալին էզիդի քուրթ կասեն, որ նոքա եւս խիստ շատ են... եւ ինձ խօսք են տուել, որ ես ձեզ ծանուցանեմ, եւ թէ դուք խօսքն լսէք՝ մին մեծ ուժ կ'անեմք ի վերայ թուրքին, նոքա ամենքն մեր կողմն կանկանին եւ մեզ կ'օգնեն...: Չորրորդ՝ վասն բանիս համար ես մին սըրտ եւ հնար գիտեմ, որ Զինումաչին եմ ուսել, թէ դուք կամիք՝ ասացէք, որ ես այն հնարքին ձեւն եւ կերպն շինեմ եւ ձեզ տամ, եւ դուք փորձէք եւ տեսանէք, որ իմ բանն շիտակ է, այնպիսի մի բան է, որ ո՛չ - բերդ, ո՛չ սար, ո՛չ ձոր, ո՛չ ծով, ո՛չ ցամաք, ո՛չ բազմութիւն զօրաց եւ զինուորաց իմ գիտացած բանին հնարքին դէմ չի կարէր կենալ. եւ երբ կամիք, որ իմ հնարքն շինեմ եւ կազմեմ, այնժամ ես ԺԲՌ (12000) մարդով առաջ զօրապետ ու զօրավար լինիմ ու յառաջ գնամ սիրելով եւ նուաճելով զտէրութիւն եւ զերկիր, եւ զազգն թուրքաց այն իմ հնարքովն եւ յայնժամայն թուրքմաններն եւ այն էզիտիքն այն կողմանէ, եւ մեք այս կողմանէ, շուտով եւ փոքր ժամանակի միջումն զազգ եւ զպիղծ աղանդն նոցա կու փճացնեմք Աստուծով: Զայս ամէն բաներս շուտով պիտի հոգացած եւ արած, քանի որ այն թուրքմաններն եւ էզիտի ազգերն չեն ուսահատել մեզանից, որ Աստուած չանէ, թէ նոքա թուրքին օգնական լինին, զերբ այնչափն խիստ վատ կլինի ամենայն քրիստոնէից...»*[26]*:

[26] Յ. Քիւրտեան, Հետաքրքրական վաւերաթուղթ մը, - «Բազմավէպ», 1963, էջ 122-123: Ափսոփալ կարելի է, որ մենք տեղեկութիւն չունենք եւ գուցէ հետագայ պրպտումները կը բացայայտեն այդ դիմումի հետագայ ճակատագրի կամ ընթացքի մասին, բայց փաստ է, որ ինչպէս Արիստակէսից մէկ դար առաջ Հնարագէտ Անտոն Սուրեան հային յաջողուեց իրականացնել իր գիւտը Վենետիկում, Արիստակէսը եւս ընդառաջում գտած լինի Հռոմում եւ յաջողած ապացուցելու իր առաջարկի իրաւացիութիւնը: Այդ մասին տես Հ. Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 234-277:

Եւ իրօք, որ պապի վերաբերմունքով եւ ընդառաջումով պայմանաւորուած հայերէն տպագրութեան զարգացումը սոսկ անմեղ զբաղմունք չէր, ցոյց է տալիս նաեւ այն նշումը եւս, որ կատարուել էր 1707 թ. հայերէն ձեռագրի յիշատակարանում, որտեղ ձեռագրի արտագրման վայր նշուած է «ի Փարիզ մայրաքաղաքն Ֆռանկաց եւ հայոց»[27]:

Ուղեգիրները միշտ չէ, որ իրենց նկարագրութիւնների մէջ նշում էին կամ կարող էին նշել իրենց ճանապարհորդութիւնների բուն նպատակների մասին: Որպէս նպատակ՝ յաճախ նշւում է ուխտագնացութիւնը: Եթէ մի շարք ուղեւորութիւններ դուցէ եւ եղել են միայն ուխտագնացութիւններ, թէեւ յայտնի է նաեւ, որ ուխտագնացութիւնները դեռեւս միջին դարերում ու նոր ժամանակներում եւս ունեցել են դիւանագիտական նկատառումներ ու ակնկալիքներ, կատարել զանազան յանձնարարութիւններ[28], սակայն կան եւ այնպիսիները, որոնց հետապնդած քաղաքական նկատառումներն ու նպատակները աւելի քան ակնյայտ էին (Շահմուրադ Բաղիշեցի, Յովհաննէս Թուրթունջի եւ այլն): Հայ ուղեգրութիւնների մեծ մասի բուն դրդապատճառները դեռեւս բացայայտուած չեն: Այդ նպատակները հնարաւոր է բացայայտել այլ բնոյթի վաւերագրերի օգնութեամբ միայն:

Փաստ է, սակայն, այն հանգամանքը, որ իտալական քաղաքներում եղած հայկական եկեղեցիներին կից եւ կամ առանձին կային նաեւ հիւրատներ (շբիթալ), որոնք նախատեսուած էին յատկապէս հայ ուխտաւորներին սպասարկելու համար: Տարբեր քաղաքների հիւրատները տարբեր ժամկէտներ էին սահմանում ուխտաւորներին ձրի սպասաւորելու համար, որտեղ նրանց համար պատրաստուած էին «տօշակ եւ անկողին»: Սիմէոն Լեհացու ուղեգծի վրայ հիւրատներ արձանագրուած են Հռոմ, Վենետիկ, Անկոնա եւ Մատոնա տէ Լօրէթ (Loreto) քաղաքներում. «Եւ կացաք անդ երեք օր, զի երեք օր հաց եւ

27 Ն. Պողարեան, Մայր ցուցակ..., հտ. Գ, Երուսաղէմ, 1968, էջ 193:

28 Peter Schreiner, Die byzantinische Missionerung als politische Aufgabe, - Byzantinoslavica, LVI (1995), 3, S. 525-533.



ջուր տային հայոց ուխտաւորացն եւ իւրեանց ազգին՝ մէկ օր, եւ հայոց՝ հաւ ու սագ կու տային, եւ ֆռանկաց՝ միս լոկ միայն[29]:

Առաջ անց նելով դէպ քերի թուար կումից, Սի մէոն Լե հացին պատմում է, թէ՝ «Վէնէտիկու մինչեւ ի մեծն Հռոմ ժե իլեւանք է. ամէնն շէն եւ պարսպաւոր ի վերայ բարձր լերանց, ծովու եզերօքն, եւ ամէն քաղաք վասն սիրոյն Քրիստոսի եւ Հայոց եկեղեցի, հոգէտուն քարէ շինած էր եւ երեք օր կերակուր կ'ելնէր: Ապա զի հայք այժմ սակաւ գնան, տարին մի, երկու կամ երեք, չորս, վասն որոյ զաֆթ աւրին ֆռանկնին զամէնն եւ տիրապետեցին եւ ինքեանք կենան այն տներն»[30]: Մէկ այլ տեղում կրկին դժգոհում է հեղինակը, թէ՝ «Այս աշխարհս ամէն քաղաք կերակուր, ըմպելին, տօշակ, եօղան եւ այլն վեր են կալել, բայց միայն տներն եւ ժամն կայ դեռ եւս: Եւ ասին մեզ թէ Վանատիկու շբիթալն տարին երկու երեք ֆուցի գինի կու դար, եւ ամէն շաբաթ դային էր եղել հացն, միսն, մինչեւ աղն եւ քացախն, նաեւ դրամ դային արած...»[31]: Այսու Սիմէոն Լեհացին հաւաստում է, թէ նախկինում առաւել յաճախակի են եղել հայերի երթեւեկն ու հայերի վայելած սէրը Իտալիայում: Որպէս յաւելում նա գրում է. «Յորժամ հայ տեսանեն՝ ցնծան եւ խնդան, փարին եւ փաղաքշին եւ մեծ սէր եւ գութ ցուցանեն»: Սիմէոն Լեհացին արձանագրում է նաեւ, թէ՝ «Այլ եւ ասին մեզ, թէ յառաջն խիստ պատուէին զազգս հայոց իբրեւ զսուրբս Աստուծոյ. այլ եւ զուխտաւորաց զհին չուխան պատառէին եւ միմիանց պարգեւք տային եւ արմաղան: Իսկ այժմ ոչ այնպէս»[32]:

Սիմէոն Լեհացին իդէալականացուած ձեւով է պատկերում Իտալիայի կերպարը: Նրա ասելով «Փափի աշխարհն յոյժ բարի եւ անխռով, անկռիւ են, ...չունին սուսերիւն, կաշառ չառնուն ի վերայ իրաւանց, այլ արդար դատաստան առնեն, առանց նենկութեան»: Եթէ երբեւէ անգամ տեղի է ունենում որեւէ չարիք, ինչպիսին արուագիտութիւնն է, ապա «զայս չարս ուսուցին մահմէտականք, զի բազում

29 Սիմէոն դպրի Լեհացւոյ ուղեգրութիւն..., էջ 81:

30 Նոյն տեղում:

31 Նոյն տեղում, էջ 82:

32 Նոյն տեղում, էջ 84:

մահմէտական վաճառականք կան ի Վանատիկ, ի նոցանէ մնաց ա-
ղանտս առ նոսա մինչեւ ցայժմ»[33]:

Սիմէոն Լեհացու Ուղեգրութեան մէջ առանձնայատուկ տեղ է զբաղեցնում Հռոմ քաղաքի, նրա սրբավայրերի ու հայ-հռոմէական յարաբերութիւնների նկարագրութիւնը: «Երեք տակ պարիսպ» ունեցող Հռոմը, որ «էր մեծ քան զԸստամբոլ» Սիմէոն Լեհացու այցելութեան ժամանակ կիսով չափ գտնուում էր աւեր վիճակում, եւ քաղաք մտնելուց յետոյ, ինչպէս վկայում է ուղեգիրը, «այնչափ գնացաք, որ ձանձրացաք եւ յետինքն հազիւ հասաք ի Հայոց եկեղեցին եւ շրիթալն»: Հռոմի հայոց եկեղեցին քարաշէն էր եւ մեծ, ունէր տասն օտա (սենեակ) ուխտաւորների համար, իսկ եպիսկոպոսների, քահանաների եւ այլ կրօնաւորների համար՝ կահաւորուած սրահներ (տօշակ, անկողին): Այնտեղ էր իջեւանել նաեւ էջմիածնից Հռոմի պապի մօտ պատուիրակ առաքուած Զաքարիա վարդապետը, որին հանդիպել էր նաեւ Սիմէոն Լեհացին: Հռոմում եւս արձանագրւում է հայերի նկատմամբ առանձնակի վերաբերմունք. «Մեր քարտինալն էր Պուռկէզ, քեռորդին Փափին, զի ՀԲ քարտինալ ունէր Փափն, եւ ամէն քարտինալն ազգի մի նազր էր, իսկ գլուխն եւ մեծն Հայոց լինի»: Պատմելով Զաքարիա վարդապետի պատուիրակութեան կազմում պապի մօտ այցելութեան մասին՝ Սիմէոն Լեհացին այնուհետեւ նկարագրում է Հռոմի սրբատեղիները՝ սկսելով Սուրբ Պետրոսի եկեղեցուց եւ կարեւորելով յուշարձանների հասարակական, ճարտարապետական ու մշակութային արժէւորումը: Սիմէոն Լեհացին այս դէպքում էլ ձգտում է ընդգծել այն մարդասիրութիւնը՝ հումանիզմը, որին ինքը ականատես էր Իտալիայում, եւ որն էլ նրա կարծիքով ընկած էր Ռեւմուտքի բարգաւաճման հիմքում, որ իր իսկ ձեւակերպմամբ «սէրն է գլուխ օրինաց եւ պատուիրանաց, եւ հազար երանի ազգին, որ սէր ունի»:

Ժէ դարի հետագայ տարիներին եւս Իտալիան եւ մասնաւորապէս՝ Հռոմը շարունակել են մնալ եւրոպական երկրների հետ հայոց հոգեւոր ու աշխարհիկ փոխյարաբերութիւնների հիմնական յենակէտը[34]:

[33] Նոյն տեղում, էջ 85:

[34] Աշոտ Յովհաննիսեան, Դրուագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք Բ, Երեւան, 1959:



Գնալով յաճախացել են հայոց ուխտագնացութիւնները դէպի Իտալիա, մեծ չափեր են ընդունել նաեւ առեւտրական յարաբերութիւնները: 1696 թ. կազմուել է Հռոմի ուխտատեղիների մի նկարագրութիւն հայերէն լեզուով, որտեղ հնարաւոր լրիւութեամբ թուարկուած են Հռոմի եւ նրա գլխաւոր եկեղեցիներում եւ տաճարներում պահուող սրբերի մասունքները: Բնական է ենթադրել, որ այն պէտք է ուղեցոյց ծառայէր հայ ուխտաւորներին Հռոմ ճանապարհորդելու ժամանակ:

ԺԸ դարի ընթացքում Իտալիան շարունակում է պահպանել իր խոշոր նշանակութիւնը հայ ժողովրդի մշակութային, հոգեւոր ու տնտեսական կեանքում: Այն աւելի է կարեւորւում Մխիթարեան միաբանութեան հիմնադրմամբ ու գործունէութեան շնորհիւ: Ամենասերտ փոխյարաբերութիւնների առկայութեամբ էր պայմանաւորուած Հռոմի Ուրբանեան տպարանում 1725 թ. Յովնան Թոխաթեցու թարգմանութեամբ լոյս ընծայուած ծաւալուն «Նորագոյն ուղղեկցութիւնը», որը պէտք է ուղեցոյց ծառայէր հայազգի ուխտաւորներին Իտալիայում ճանապարհորդութեան ընթացքում[35]:

Այսպիսով, հայ ճանապարհորդները, նկարագրելով Իտալիան, նրա մէջ ներկայացնելով ու մարմնաւորելով ժամանակի լաւագոյնի իրենց պատկերացումները, փորձել են դրանով իսկ նպաստել նաեւ իրենց հայրենիքի ազատագրմանն ու բարգաւաճմանը եւ մեծապէս ժանդակել են նաեւ հայ-իտալական ու հայ-հռոմէական փոխյարաբերութիւնների զարգացմանը:

Հայ-իտալական փոխյարաբերութիւնները սերտ կապերի մէջ են եղել ոչ միայն գիտական, մշակութային, դիւանագիտական, եկեղեցական ու դաւանաբանական, այլեւ առեւտրատնտեսական բնագաւառում: Իտալական նաւահանգստային շատ քաղաքներում հայ վաճառականութիւնը ունեցել է իր մշտական ու կայուն ներկայութիւնը

[35] NUOVA GUIDAA ANGELICA PERPETUA ROMANA Per visitare la Chiese dentro e fuori di Roma ove si celebrano le Feste e Stazioni. Con le notizie delle Reliquie, che in esse vi sono. ...in Roma, 1725. Նորագոյն ուղղեկցութիւն հրեշտակային հռոմէական եւ մշտատեւ, սակս այց առնելոյ զեկեղեցիս ի ներքս եւ ի արտաքս Հռոմայ, ուր հոչակին ուխտք եւ տօնախմբութիւնք, հաւնդերձ տեղեկութեամբ մասանց սրբոց, որք ի նոսա գոն... (տե՛ս Ն. Ա. Ոսկանեան, Ք. Ա. Կորկոտեան, Ա. Մ. Սաւալեան, Հայ գիրքը 1512-1800 թուականներին, Երեւան, 1988, էջ 265):

*եւ յաճախ զգացել նաեւ իշխանութիւնների հովանաւորչական քաղաքականութեան արդիւնքները: Նման համագործակցութեան բազում դրուագներ են արձանագրուած ինչպէս արդէն իսկ հրապարակուած, այնպէս էլ դեռեւս ուսումնասիրման ու հրապարակման սպասող իտալական արխիւների բազում վաւերագրերում[36]: Այդ առումով անգնահատելի է Հ. Ղեւոնդ Ալիշանի բացառիկ մեծ վաստակը ինչպէս հանրայայտ ու մնայուն կոթողային իր աշխատութիւններով[37], այնպէս էլ անտիպ վիճակում մնացած նրա կողմից հաւաքուած վաւերագրերի ընդօրինակումներով: Այդ ընդօրինակումներից մէկը մասնաւորապէս, որին, ի թիւս այլ վաւերագրերի, ծանօթացել ենք ծրագրի շրջանակներում[38] տեղում աշխատելու ժամանակ[39], եւ որը վերաբերում է Մարտիրոս Երզնկացու Եւրոպա կատարած ճանապարհորդութեանը եւ, որոշակի պարզաբանումներ մտցնելով հանդերձ, հիմք*

36 «Հայ-իտալական առնչութիւններ. Ջենովական փաստաթղթերը ղրիմահայերի մասին», Կազմեց, առաջաբանը գրեց եւ ծանօթագրեց Վ. Ա. Միքայէլեան, Երեւան, 1974: Նոյնի, Ղրիմահայ գաղութը Արեւելք-Արեւմուտք յարաբերութիւնների ոլորտում (13-18-րդ դարեր), Երեւան, 2000: Վ. Բայբուրդեան, Համաշխարհային առեւտուրը եւ իրանահայութիւնը 17-րդ դարում, Թեհրան, 1996: "The Shah's Silk for Europe's Silver. The Eurasian Trade of the Julfa Armenians in Safavid Iran and India 1530-1750. By Ina Baghdiantz McCabe. University of Pennsylvania. Armenian Texts and Studies. 414 p.; "Ad Limina Italiae. Ան դրունս Իտալիոյ. In viaggio per l'Italia con mercanti e monaci armeni". A cura di Boghos Levon Zekiyan. Venezia. 1996; "Arménie entre Orient et Occident. Troi mille ans de Civilisation". Sous la direction de Raymond H. Kévorkian.Paris. 1996; "Roma-Armenia" . A cura di Claude Mutafian. Roma, Edicioni de Luca.1999.

37 «Հայ-Վենետ կամ յարընչութիւնք հայոց եւ վենետաց ի ԺԳ-ԺԴ եւ ի ԺԵ-ԺԶ դարս», Վենետիկ-Ս. Ղազար, 1896, 556 էջ:

38 Ջենովայի արխիւում յայտնաբերուած Նոր Ջուղայի քաղաքապետ Խոջա Սարֆրազի 1652 թ. Ջենովական հանրապետութեանը հասցէագրած նամակի բնագրի հրապարակումը տե՛ս Պ. Չոբանեան, Հայ-Ջենովական յարաբերութիւնների պատմութիւնից, - «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», հտ. XVII, Երեւան, 1998, էջ 194-200:

39 Առանձնակի շնորհակալութեամբ արձանագրում ենք Սուրբ Ղազարում Մխիթարեան հայրերի եւ յատկապէս՝ Մխիթարեան միաբանութեան ընդհանրական աբբահայր Եղիա վրդ. Քիլաղպեանի սիրալիր եւ պատրաստակամ ընդառաջումը մէկշաբաթեայ այցելութեան ժամանակ վանքում պահուող տպագիր եւ անտիպ նիւթերին ծանօթացնելու գործում:



*է տալիս նոր հարցադրումների, ստորեւ բերւում է բնագրի լեզուով ու հայերէն թարգմանութեամբ: Ընդօրինակման սկզբում եւ նոյն թանաքով հայերէնով վերնագրուած է. «1494 յունիսի 3. Աղեքսանդր Ջ. թուղթ յանձնարարութեան Մարտիրոսի երզնկացւոյ յուխտագնացութեան նորա», իսկ մատիտով՝ papa Aless. VI (1492-1503):*

«Alexandre Episcopus etc. Universis etc. Salutem etc.

Etsi personarum quarum libet sub Crucis Vexillo militantium necessitatibus ex assiduo pietatis officio uti ad nostram dignitatem et potestatem decet subvenire debeamus illostamen quos fidei zelus fervorque devolionis per longinqua terrarum spalia traxit, quique non parvis laboribus atque periculis cum magna quoque egestate atque devotione pro Christi caritate et obsequio, proqrue animarum suarum ac benefactorum Usalute se exponere non dubitarunt, Eo propensius adesse nos convenit quo maioribus suffragiis atque presidiis indigere noscuntur. Eum itaque, sicut accepimus dilectus filius Martir de provincia Armenie Maioris in confinibus infidelium in dominio senacussani, presbiter Argigamis senio confectus non parva devotione huc se contulit, uti a fide dignis personis miser accepimus Apostolarum Petri et Pauli limina de Urbe devote, sanctamque Apostolicam Sedem ut est Christianorum Catholicorum moris, ubi per multos dies moram travit visitando cupiatque sanctum Iacobum in Compostella[40] sanctam Catharinam in Monte Sinai, ac Sepulcrum Dominicum et quamplurima alia sancta et sacra loca similiter devote et peregre visitare, cumque idem pauperrimus Martir senex per aliquot tempus antequam huiusmodi visitationes fecerit in itinere morari habeat et ne ipse Martir fame per huiusmodi iter pereat in dedecus christiane religionis. Christifidelium favores elemosine atque suffragia sibi fore noscuntur plurimum oportuna: cupientes igitur ut prefatus Martir pauper eius necessitatibus per eosdem Christifideles utriusque sexus adiuvetur et sublevetur ipsique Christifideles eo promptius ad huiusmodi pium meritorium et laudabile opus manus porrigant adiutrices, quo ex hoc

40 Գրուած է լուսանցքում, նոյն տողի դիմաց, որը ամենայն հաւանականութեամբ նշանակում է, թէ արտագրողը գուցէ մոռացել եւ ապա յետոյ է լրացրել այն, եւ կամ՝ բացակայել է բնագրում:

dono immortali et celestis gratie thesauro se conspiciant refectos, de omni potentis dei misericordia ac predictorum Apostolorum auctoritate confisi omnibus et singulis Christifidelibus utriusque sexus antedictis, qui pro sustentatione atque presidio itineris aliisque indigentiis predicti Martiris et necessitatibus de bonis sibi a deo collatis ipsi erogaverint, manusque adiutrices porrexerint tres Annos et totidem quadragenas de iniunctis sibi penitentiis misericorditer in Domino relaxamus. Et insuper omnes et singulas Christifideles predictos per easdem abnixe requirimus et in Domino hortamus subditis vero nostris et gentium armarum Capitaneis et Conductoribus ad nostra stipendia et Romana ecclesie militantibus districte precipiendo mandamus, quatenus eundem Martirem una cum uno socio per nostra et eorum territoria, si opus fuerit transeundo passus, portus, pontes et loca quecumque tam per aquam quam per terram obsque aliqua volutione et impedimento datii, passagii, theolonii, pedagii, aut cuiuscumque altenus inducendi oneris exactione ire stare et manere pro nostram et Apostolice Sedis reuerentici cum redire pernittant multaque sibi in bonis, cibus et personis inferant iniuriam, molestiam vel offensam, aut aliam noxiam, nec ab aliis quantum in eis fuerit, ipsi Martiri permittant inferri, quinimo bene suscipientes totiens quotiens pro pante dicti Martiri fuerint requisiti, de securo transitu et salvo-conductu ae receptione liberaliter proindo procurent, quod prefatus Martir exinde de novo apud nos et Sedem Apostolicam predictam possit non immerito bonam relationem afferre. Presentibus post biennium minime valituris, quasque per Questones defferri prohibemus.

Datum Rome apud S. Petrum Anno... millesimo quadringentesimo nonagesimo quarto, tertio nonas Junii. Pontificatus nostri Anno Secundo»[41].

*«Աղեքսանդր ե պիսկոպոս եւ այլն: Հա մայն աշ խարհին եւ այլն: Ողջոյն եւ այլն:*

*Թէեւ մենք պարտաւոր ենք, ըստ մեր բարձր աստիճանի եւ հնարաւորութեան, հոգ տանելու բոլոր կարիքների համար այն մարդկանց, որոնք խաչի դրօշին են զինուորուած, սակայն առաւել յարկ է նրանց, որոնք հաւատքի փութով ու ջերմեռանդութեամբ երկար ու հեռաւոր երկրներից են ճանապարհուել եւ ոչ փոքր աշխատութիւնների ու վտանգների, մեծ զրկանքով եւ Քրիստոսի սիրով ու հնազանդութեամբ եւ իրենց անձերի ու իրենց բարերարների հոգու փրկութեանը իրենց նուիրել չերկմտեցին:*

*Առաւել եւս մեզ հարկ է օգնել հէնց նրանց, որոնք յայտնի են, թէ օգնութեան եւ պաշտպանութեան կարիքն ունին: Նրան ուրեմն, ինչպէս տեղեկացանք, անհաւատների սահմաններում սարակինոսների իշխանութեան տակ գտնուող Մեծ Հայքի նահանգից Երզնկայի եպէց սիրելի որդի Մարտիրոսին, ծերացած, որ ոչ փոքր ջերմեռանդութեամբ, ինչպէս իմացանք արժանահաւատ մարդկանցից, ժամանել է այստեղ՝ Պետրոս եւ Պօղոս առաքեալների ոտքը Հռոմում, որպէս օրէնք է կաթողիկէ քրիստոնեաներին՝ սուրբ առաքելական աթոռ (այցելելու), որտեղ նա բազում օրեր շարունակ այցելելուց յետոյ մեծապէս ցանկացաւ այցելելու Սուրբ Յակոբ՝ Կոմպոստելայում, Սինայի լեռան Սուրբ Կատարինէ եւ Տիրոջ գերեզմանին, ինչպէս նաեւ որքան հնարաւոր է բազում այլ սուրբ եւ սրբազան տեղեր՝ նոյն կերպ բարեպաշտութեամբ եւ որպէս ուխտաւոր, եւ քանի որ սոյն աղքատագոյն Մարտիրոս ծերունին որոշ ժամանակով նախքան այսօրինակ այցելութիւնների կատարելը ճանապարհորդութեան ընթացքին հանգրուանի, եւ որպէսզի սոյն Մարտիրոսը նման ճանապարհին չկորչի՝ ի պարսաւանս քրիստոնէական հաւատքի, ուստի պարզ է, որ Քրիստոսի հաւատացեալների բարեգործութիւնների եւ օժանդակութիւնների յաճախակի անհրաժեշտութիւն կը զգայ: Ուստի ցանկանալով, որ վերոյիշեալ աղքատ Մարտիրոսը ու նրա կարիքները նոյն Քրիստոսի երկու սեռի հաւատացեալների կողմից օժանդակութիւն եւ պաշտպանութիւն ստանայ: Եւ նոյն Քրիստոսի հաւատացեալները թող որքան հնարաւոր է պատրաստակամօրէն այսօրինակ բարեպաշտ վաստակներով գովելի գործին, օգնական ձեռք երկարեն, որոնք դրանից անմահական պարգեւով եւ երկնային շնորհով իրենք իրենց կը տեսնեն նորոգուած եւ ամենակարող Աստծոյ ողորմութիւնից ու նախասացեալ առաքեալների հեղինակութեամբ արարուած, բոլորին եւ իւրաքանչիւրին՝ Քրիստոսի երկու սեռի հաւատացեալներին, որոնք վերոյի-*

[41] Վենետիկ-Ս. Ղազար, Հ. Ղ. Ալիշանի «Դիւան Հայոց պատմութեան», հտ. Գ, թ. 121-122:

*շեալ Մարտիրոսին եւ նրա կարիքների համար ճանապարհին աջակցութիւն եւ նրա այլ պահանջներին ընդառաջում կը տան եւ օգնական ձեռքերը կը մեկնեն, իրենց վրայ սահմանած ապաշխարութիւններից նրանց գթածօրէն արձակում ենք ի Տէր:*

*Ապա, Քրիստոսի նախասացեալ բոլոր եւ իւրաքանչիւր հաւատացեալներից պահանջում եւ ի Տէր մեր ենթականերին՝ զինեալ մարդկանց հրամանատարներին, մեր կողմից վարձատրուող կոնդուկտորներին եւ Հռոմէական Եկեղեցուն զինուորուածներին յորդորում ենք, յստակ պատուիրելով հրահանգում ենք, որքան այն ժամանակ, որքան նոյն Մարտիրոսը իր ուղեկցողի հետ պատահի, որ մեր տարածքներով անցնի, ուրեմն նաւահանգիստները, կամուրջները եւ այլ վայրերը՝ լինի ջրով կամ ցամաքով, առանց որեւէ խանգարման կամ արգելքի, տուրքերի ու վճարումի (datium, passagium, theolonium, pedagium) անցնի եւ որեւէ այլ լծի բացառումով կարող է գնալ, կանգնել եւ մնալ: Մեզ եւ առաքելական աթոռը յարգողները պէտք է թոյլ տան, որ նա վերադառնայ, առանց իր բարիքների, ուտելիքի եւ մարդկանց նկատմամբ անօրինութիւն, մարմնական վնասի, վիրաւորանքի եւ այլ աննպաստութեան, եւ ինչքան որ կարող են, թոյլ չտան, որ ուրիշների կողմից էլ Մարտիրոսին [վնաս] հասնի:*

*Լաւ ընդունելը նրան այնքան, որքան վերոյիշեալ Մարտիրոսի համար պահանջւում է անվտանգ անցման եւ առողջ տեղ հասնելու եւ ազատօրէն ընդունուելու համար անհրաժեշտ է, որպէսզի վերոյիշեալ Մարտիրոսը, այնտեղից վերադառնալով, կարողանայ մեզ եւ առաքելական աթոռին բերել ձեր մասին իր լաւ զեկոյցը:*

*Այս բոլորը պէտք է ու ժի մէջ լինեն ոչ պակաս երկու տարի, եւ որեւէ խախտում արգելում ենք:*

*Տրուած է Հռոմում, Սուրբ Պետրոսի մօտ, հազար չորս հարիւր իննսուն թուականի յունիսի երրորդ օրը՝ մեր քահանայապետութեան երկրորդ տարում»*[42]*:*

*Այս վաւերագիրը թոյլ է տալիս Մարտիրոս Երզնկացու Ուղեգրութեան բնագրում կատարելու կարեւոր մէկ շտկում:*

[42] Թարգմ.՝ Ա. Քանանեանի:



*Մարտիրոս Երզնկացին իր Ուղեգրութեան մէջ նշում է պապի կողմից ընդունուելու եւ «թուղթ» ստանալու մասին, սակայն անմիջապէս յետոյ պատմում է, նաեւ թէ՝ «Թվին Ջխ (1491) յունիսի Թ [9] ելաք ի Հռոմայ». որից յետոյ, շրջելով Եւրոպայում ու այցելելով Կոմպոստելլայի Սուրբ Յակոբ, Հռոմ է վերադառնում միայն՝ «Թվին Ջխե [1496] փետրվարի Ի [20] Մեծ պահոցն մտա[յ] ի Հռոմ»: Այն, որ Ուղեգրութեան բնագրի «Ջխ»-ն պէտք է սրբագրել «Ջխգ», ապացուցւում է այն փաստով, որ «թուղթը» տրուած է Ալեքսանդր Զ պապի (1492-1503) կողմից իր երկրորդ տարում եւ ոչ՝ Ինոկենտիոս Թ - պապի (1484-1492) կողմից, իսկ քանի որ Մարտիրոսը Հռոմից ճանապարհուել է պապի թուղթը ստանալուց յետոյ, ուստի այն տեղի է ունեցել հաստատապէս 1494 թ. յունիսի 9-ին:*

# EN QUÊTE DE MÉMORIAUX

*B. Outtier*
(C.N.R.S. Paris - Université de Genève)

Chaque année, des manuscrits arméniens sont vendus aux enchères à Paris. Il s'agit le plus souvent de manuscrits conservés dans des collections privées, qui, de ce fait, sont généralement inconnus des chercheurs. Leur apparition est donc l'occasion d'avoir, quand ils ont conservé leur mémorial de copie, de nouvelles données sur bien des domaines de la culture arménienne: histoire des textes et de l'exégèse, histoire des personnes (copistes, commanditaires) et des noms de personne, histoire des centres de diffusion de la culture, histoire de la langue, histoire sociale, parfois histoire tout court.

Dans la perspective de collecte des recherches de matériaux sur l'histoire arménienne médiévale et moderne dans les archives et les bibliothèques d'Europe, il a paru intéressant d'intégrer ces données, qui complètent notre documentation. Ce travail a d'ailleurs paru suffisamment important pour qu'un chercheur d'Arménie propose de l'intégrer dans un projet commun.

Il suffira de donner ici deux exemples, qui illustreront ce qui vient d'être dit.

Le 8 novembre 1995 fut vendu un beau tétraévangile, qui avait conservé sa reliure d'origine. Copié à Sos (Nor Djoulfa) en Iran pour le mahtesi (personne qui a fait le pélerinage de Jérusalem) Margar, en 1635, il avait l'intéressante particularité d'avoir pour cadre d'écriture non l'habituel rectangle, mais un rectangle surmonté d'une double arcature en mihrab: le scribe a-t-il voulu imiter les formes architecturales environnantes ou bien a-t-il utilisé un support déjà préparé?

Après les Canons, il y a une très belle dédicace de deux pages en *erkat'agir*, lettres bleues entourées de rouge sur fond or, puis lettres rouges sur fond bleu. Ce type de dédicace était réservé, autrefois, aux rois, princes



et hauts prélats. Cela nous donne une idée de la puissance financière du commanditaire. Nous connaissons d'ailleurs deux autres manuscrits commandés par Margar, l'un d'entre eux, Jérusalem, Bibliothèque du Patriarcat arménien Saint-Jacques à Jérusalem, n° 525, copié en 1627, est du même copiste; un autre manuscrit est resté à Nor Djoulfa : manuscrits en propriété privée, n° 8 du Catalogue de L.Minassian.

Voici la dédicace :

Որ ՈՂՈՐՄԻ Տ֊Ն ԱՄԵՆԱՑՆԻ,
ՀՈԳՈՑ ՍՈՐԱՑ ԸՍՏԱ
ՑՈՂԻ ՄԱՀՏԵՍԻ ՄԱ
ՐԳԱՐԻՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԴ
ՈՑՆ ԱՄԵՆԵՔԻՆ ՆԱԽ ԱՆ
ԴՐԱՆԿԱՆ ԵՂԻՄԻՆ ՈՐ
Ի ՀԱՍԱԿԻ Գ.Ժ֊Ն ՓԽ֊Ի
ԱՌ Տ֊Ր ԻՒՐ ՑԱՆԿԱ֊Լ֊Ն
ԱՊԱՑ ԵՐԿ֊Դ ՈՐԴԻ Ս
ՈՐԻՆ Պ֊Ր֊Ն ԱՎԷՏ Խ
ԻՍՏ Ս֊Ր֊Լ֊Ն ՓՈԽՑ֊Լ֊Ն Ց
ԵՐԿՐԷ ՅԵՐԿԻՆ ԱՅԼ ԵՒ ԹՈՒՆԻՔՆ Ս
ՈՐԻՆ ՈՎԱՆԷՍՆ ..Խ[Ա]ՆՏ
ԱՏԻԿԻՆ ՈՐ ՎԱՂՃԱՆԵԱԼ
ՏՂԱՑ ՀԱՍԱԿՆ
ՈՐ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՆ
ՋՄՆԱՑՈՐԴԱՑՆ ՍՏԵՓԱՆՈՍՆ

**Le mémorial se trouve à la fin manuscrit:**

*ՓԱՌՔ ԱՆԸՍԿԶԲԱՆՆ եւ սկզբանն ամենայնի: Անեղին, եւ գոյացուցչին բնաւից: Անվախճան, եւ անսահման էացուցչին: Սահմանիչ եւ կատարումն բոլոր էիցս: Երիցս միակին: Եզակի եւ միւմ աստուածութեանն: Որ անշարժ գոլով շարժէ զարարածս ի կեանս եւ ի փրկութիւն, էիցս էակն, եւ կենդանեաց կեանքն: Որ անփոփոխ գոլով միշտ յէութեան անեղր եւ անվայրապակն: Լրումն եւ բովանդակիչ*

ամենայնի եւ յամենայնս է, եւ ամենայնէ անհաս է: Որպէս ի մասունս եւ ի բոլորս, եւ ինքն ոչ մասն եւ ոչ բոլոր: Որպէս թէ զմասն եւ զբոլոր՝ զամենայն ինքն ունելով, եւ կրէ զամենայն բանիւ. զօրութեան իւրոյ գերալիր գոլով լնու զամենայն: Որում բան եւ իմաստութիւն եւ լեզու տուեալ բոլոր էից: Ի բոլոր էիցս հանցուք զաւրհնութիւնն եւ զփառս հօր եւ որդոյ եւ հոգւոյն սրբոյ: Այժմ եւ մի[շտ]:

Իսկ չորից աւետարանչացն խորհուրդ, բազմօրինակ իմն ցուցմամբ տեսանի: Զի ոման ասեն, թէ չորից աւետարանչացն են օրինակ, չորք անկիւնք արարածոց: Արեւելք: Արեւմուտք: Հիւսիս: Հարաւ: Պարտ էր քարոզել զաւետարանն:

Իսկ ոմանց հաճո թուեցաւ, ըստ չորից մշտահոս գետոցն: Յադենական աղբերէն յառաջ խաղացեալ՝ առ ի տիեզերաց առոգումն: Փիսոն՝ որ նշանակէ զՄատթէոս: Եւ Սեհոն՝ Զմարկոս: [Տ]իգրիս՝ զՂուկաս: Եւ Իփրատէս՝ զՅոհաննէս: Եւ սոցին գոլով նմանապէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբերէն առոգանել զպասքեալ միտս մարդկային բնութեանս:

Նոյն օրինակ ըստ տեսութեանն եզեկիէլի քառակերպեանն աթոռոյ: [Մ]արդ՝ որ նշանակէ զՄատթէոս, եւ Առեւծ՝ զՄարկոս: Եզն՝ զՂուկաս, եւ Արծիւ՝ զՅոհաննէս: Զանմարմնոցն տէր տեսանելով բազմեալ ի փառացն աթոռ: Իմանալի ցուցմամբ զինամս բոլոր բնութեանս՝ զակնարկումն: Որ աստուածապէս եւ տիրաբար բերմամբ. նշանակէ զլինելն առ հողածինն՝ հրեղինացն անմահից զմահկանացուս առնել հաղորդս: Եւ յեւս գերակատար հանել ի փառս. վասն զի փառաց թագաւոր Քրիստոս. փառակից հօր եւ հոգւոյն սրբոյ՝ ըզմերս առնելով բնութիւն. ինքեան միացոյց աստուածութեան: ուսուցանելով մի որդի գաւանել. որ յաստուածոյ հօր է. եւ որ ի Մարիամայ սրբոյ կուսէն անճառ միութեամբ. զոր աւետարանական ու[սու]ցանէն բանք: Մինչ ի կատարած հաւանութեամբ հաւատալ հաստատ կարգօք ի նոյն յարելով առաքելաւանդն քարոզութիւն. զաստուածախօսն վարդապետութիւն զրմշմեալ ըզսակաւս ի բազմացն՝ առ ի հաւատալ՝ եթէ Յիսուս Քրիստոս է որդի աստուծոյ ըստ վեհին Յոհաննու. հաւատալ եւ զկեանսն ընդունել յանուն նորա:

Ուստի եւ տեսեալ զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ. հեզահոգի եւ աստուածասէր մահտասի խօջայ Մարգարն որ ե-



ռափափաք սիրով. յօժար կամօք եւ սերտ հաւատով. ցանկացօղ եղեւ այսմ ծաղկաւէտ՝ եւ վարդափըթիթ կենսաբուխ սուրբ աւետարանիս: Եւ ստացաւ զսա՝ ի արդար վաստակոց իւրոց: Յիշելով զբան մարգարէին որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն՝ որ է եկեղեցի սուրբ. վասն այն յուսոյն ետ գրել զտէրունեան աւետարանս՝ առատ տրիւ եւ պարզարեաց մեծածախ ընչիւք՝ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ եւ ի վայելումն մանկանց սիոնի: Այլ եւ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն իւրոց՝ Գրիգորին՝ Խանփարին՝ եւ եղբօրն մահդասի Զաքարէ՝ Ստեփանոսին. քեռն Խանփարին՝ եւ կողակցին իւրոյ՝ Փաշփաշին, միւսոյն՝ Բերսաբէին: Որդւոցն. Պարոն Եղումին՝ Աւետիսին՝ Յովանիսին՝ դստերն Զանվարդին. խարսներացն՝ Փառանձեմին. Ուղուրլուէ՝ եւ որդոց սոցին՝ Յովանիսին՝ Ըստեփանոսին՝ Կոստանդիանոսին. ղըստերացն՝ Խանտատիկին՝ Խանփարէ:

Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց եւ անպիտանս եւ անարժանս ի մանկունս եկեղեցւոյ բազմամեղս եւ անիմաստս ի գիրս գրչութեան սուտանուն Ըստեփանոս քահանա՝ որ անուամբ միայն եմ եւ ոչ գործով: Շնորհիւ տեառն սկսա եւ ողորմութեամբ նորին կատարեցի զսուրբ աւետարանս ի մեծ թըւականիս հայոց ՌՉԳ ամին՝ ի Շօշ քաղաքս Ասպահան ի հայրապետութեան տեառն Փլիպոս կաթողիկոսի՝ եւ յառաջնորդութիւն մերոյ ուխտիս Խաչատուր վարդապետի՝ յիշեցէք եւ աստուած ողորմի ասացէք. զի ձեզ եւ մեզ ողորմեսցի Քրիստոս Աստուած իւր միւսանգամ գալստ[ե]ան ամէն:

**Note d'un possesseur plus tardif:**

այլ յիշատակ քուռքճի Մելիքօնի որդի Գաբռիէլին փոքր որդուն Նիկողոսի որ սուրբ ավետարանըս քերտամեբլա եստացի բազում եստակով ի Պուլտան որ ոք հանդիպիք ողորմի տուք տէր աստված ձեզ ողորմի մոչլ - ٢١.

cachet: Գաբռիէլ.

La partie de ce mémorial qui traite du symbole des évangélistes n'est pas propre à notre manuscrit. Il conviendrait d'en relever le maximum d'attestations - ce qui implique le recours aux originaux car, très souvent, à l'époque soviétique, la partie théologique des mémoriaux n'était représentée que par un *incipit* - pour pouvoir en déterminer le lieu et l'époque

d'origine, ainsi que les circuits de transmission. Cela apporterait bien des précisions sur les liens entre les *scriptoria* arméniens médiévaux. On se contentera ici de signaler un autre tétraévangile manuscrit, du XVII[e] siècle, contenant le même mémorial, bien entendu jusqu'à la partie mentionnant l'acquéreur, dans la vente du 29 avril 1997.

Parfois, un manuscrit a la chance d'être acquis par une collection publique. C'est le cas d'un manuscrit présenté comme Psautier dans la vente du 14.XI.1991, qui était de nouveau mis en vente le 31 mars 1993. Il s'agissait en réalité d'un hymnaire (šarakan), que nous avons pu faire acquérir par la Bibliothèque nationale de France: c'est actuellement donc le manuscrit arménien 341 de cette Bibliothèque.

Le manuscrit est paginé de 1 à 580, lacuneux au début. La description qui en a été récemment établie par R. H. Kévorkian (R. Kévorkian, B. Outtier, A. Ter-Stépanian et G. Ter-Vardanian *Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France. Catalogue,* Paris, 1998) omet le petit mémorial de la p. 194, qui précède l'unique miniature pleine page de ce manuscrit, p. 196, avec un Christ juge à la résurrection. Voici ce mémorial, qui nous donne le nom du copiste:

*Ջտարակուսեալս ի մէջ բազմաց հոծացեալս. զաղտեղացեալս բազմութեամբ յանցանաւք Ղազար անուն յաղաչեմ յիշել ի Տէր զգծ-[ո]զակ սորին եւ Աստուած զձեզ յիշէ ամէն:*

Soit : L'hésitant au milieu de nombreux soucis,
le souillé par une multitude de transgressions,
du nom de Lazare,
je [vous] prie d'en faire mémoire dans le Seigneur
le copiste de ce [manuscrit],
et Dieu se souviendra de vous amen.

On voit les riches perspectives ouvertes par ce type de recherches. On peut d'ores et déjà signaler que la faisabilité d'un travail en collaboration avec un chercheur du Matenadaran (Institut des manuscrits) d'Erevan est à l'étude, pour cataloguer les manuscrits arméniens de France, sauf ceux de la Bibliothèque nationale de France, mais incluant ceux qui sont passés depuis quelques années en ventes aux enchères publiques.

# ՆՈՐԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԺԷ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԷՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ[1]

## Օգոստինոս Բաջենց (1584-1653)

*Մ. Կարապետեան*

*Ժէ դարի առաջին կէսի հայ նշանաւոր գործիչներից, Նախիջեւանի հայ կաթողիկէ թեմի առաջնորդ Օգոստինոս Բաջենցի կենսագրութիւնն ու գործունէութիւնը, արդէն կարելի է ասել, մենագրօրէն ուսումնասիրուած է բաւական մանրամասն[2]:*

*Օգոստինոս Բաջենցի մատենագիտական ժառանգութիւնից մեզ է հասել նրա ուղեգրութիւն-ուխտագնացութիւնը[3], որը ունեցել է մի շարք հրատարակութիւններ ու թարգմանութիւններ[4]: Առայսօր ոչինչ*

---

1 Այս յօդուածի վերաբերեալ նիւթերին ծանօթացել ենք INTAS ծրագրի շրջանակներում 1996 թ. Ֆրանսիայի ու ապա յետագայում՝ Հռոմի դիւաններում մեր ուսումնասիրութիւնների ժամանակ:

2 Նշելի են եւրոպական ուսումնասիրողներից Կարլոս Ալոնսոյի (Carlos Alonso. O.S.A. Angel Maria Cittadini, O.P., arzobispo de Naxivan ((1629), Una iniciativa de Propaganda Fide en favor de Armenia Roma, 1970 (Studia ephemeridis «Augustinianum», 6), Ամբրոսիոս Էսգերի (Ambrosius Eszer. Ôgostinos Bajenc O.P. als Oberhirte von Naxijewan,- AFP, vol. XLVII, Roma, 1977, S. 183-246) եւ Կարլո Լոնգոյի (Carlo Longo. Relazioni d'Armenia (1583-1640),- AFP, vol. LXVII, Roma, 1997, pp. 173-226) աշխատութիւնները, ուր շրջանառութեան մէջ է դրուած հսկայական փաստական նիւթ Բաջենցի կեանքի ու գործունէութեան վերաբերեալ: Հայագիտական գրականութեան մէջ Բաջենցի կենսագրութիւնը ամենայն մանրամասնութեամբ ուսումնասիրուել է հ. Սահակ Ճեմճեմեանի կողմից (տե՛ս նրա Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հոոմը, Վենետիկ, 2000):

3 Ֆրանսիայի Ազգային գրադարանում (Փարիզ) պահուող այս ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս R. H. Kévorkian, A. Ter-Stépanian. Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Paris, 1998, pp. 13-17

4 Տե՛ս M. F. Brosset. Itinéraire du très-révérend Augustin Badjétsi, - «Journal asiatique», 3eme série, T. III, Paris, 1837, pp. 209-245, 401-417; Ք. Պ[ատկանեան] Նշխարք մատենագրութեան հայոց, ՍՊԲ, 1884, էջ 5-23; Վարք Աւգուստինոս Բաջենց հայալատին եպիսկոպոսին (հրատ. Կ. Բասմաջեան). - «Բանասէր», 1899, էջ 218-237, Ա. Մադոյեան. Օգոստինոս Բաջեցու ուղեգրութիւնը, - «Արաքս», 1996, 2, Երեւան, էջ 63-78; Նոյնի թարգմանութիւնը նաեւ «Ոսկեփորիկ». Երեւան, 1997, էջ 259-270:

*չի հրատարակուած Բաջենցի փաստաթղթային ժառանգութիւնից, չնայած միայն Հռոմի դիւաններում մեր հաշուումներով պահւում են մօտ ութ տասնեակ հայերէն, լատիներէն ու իտալերէն ինքնագիր փաստաթղթեր:*

*Ստորեւ հրապարակում ենք մի շարք փաստաթղթեր, գրուած ինչպէս Օգոստինոս Բաջենցի, այնպէս էլ այլոց կողմից, որոնք գալիս են օգնելու հետազօտողներին լուսաբանելու Արեւելեան Հայաստանի Նախիջեւանի գաւառի ԺԷ դարի սկզբի պատմութեան բազում խնդիրներ: Այստեղ չենք անդրադառնում Բաջենցի կենսագրութեանը, միաժամանակ չենք ծանրանում ծանօթագրելու դէպքերի ու անձերի վերաբերեալ տեղեկութիւնները: Այդ բոլորը մանրամասնօրէն ուսումնասիրուած է Կարլոս Ալոնսոյի, Հ. Սահակ Ճեմճեմեանի ու հատկապէս Ամբրոսիոս Էսցերի վերոյիշեալ աշխատութիւններում, միաժամանակ նշելով, որ մի շարք դէպքերում ամենևին չենք կիսում հատկապէս վերջին ուսումնասիրողի կարուկ գնահատականները Բաջենցի գործունէութեան վերաբերեալ*[5]*:*

## 1. Նախիջեւանի հայ կաթողիկէները Ուրբանոս VIII Պապին

[1627 թուական, 7 նոյեմբերի, Խօշկաշէն]

Անուն Աստուծոյ

Ծայրագոյն քահանայապետ, ջահարփիափայլ հայր սուրբ

Ծանուցումն լիցի քոյին սրբութեանդ, որ յետ սրբոյն Գրիգորի Լուսաւորչոյն, որ էր ի ժամանակի սրբոյն Սեղբեստրոսի պապոյն եւ ի թագաւորութեան մեծին Կոստանդիանոսի. եկաց հնազանդ եկեղեցիս հայոց գերադրական Աթոռոյն ամի յԺԳ [13]: Եւ այնմն հետէ անկաւ ի բազում հերձուածութիւնս բազում ամս. Եւ ի թվին մարդեղութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ յարուց ողորմած փրկիչն մեր Լուսաւորիչ վարդապետն Յովհանի ի գիւղաքաղաքէն Քոնոյ, որ այս երանելիս եղեւ պատճառ բազում բարութեան, զի ժողովեաց բազում վարդապետք ի լաթինացւոց եւ ի հայոց ընդ որս էր մի եւս երանելի այր Աստուծոյ Բարդուղիմէոս Մարաղոյ եպիսկոպոսն տածելով զամենեսեան հոգոյ եւ ըստ մարմնոյ եւ թարգմանեաց գիրս բազումս հոգելոհս եւ լոյսաւորելու. եւ ոչ այսչափ միայն այլ իբրեւ զհաւատարիմ լրտեսն Յեսու Նաւեայ մտանելով երկիրն աւետեաց եւ եբեր ազգիս հայոց զփրկական համբաւն եւ առաջնորդեաց արժանաւորացն մտանել ի հնազանդութիւն գերադրական Աթոռոյն Հռոմայ, որ է մուտ եւ դուռն երկնից արքայութեան. ի ձեռն երանելոյն Բարդուղիմէոսի փառքը: Եւ այնմհետէ մինչեւ ցայսօր ժամանակի պահեալ կայ ի միջի մերում այն սուրբ հնազանդութիւն անապական: Ապայ գիտացընի քո[յ]ին սրբութեանդ, որ այս յետին ժամանակիս հանգեաւ ի տէր Մաթէոս արքեպիսկոպոսն ի թվին Տեառն մերոյ ՌՈՒԻԷ [1627] յուլիսի Ի [20], որ էր օրհնեալ ձեռամբ ծայրագոյն քահանայապետիդ Պօղոս հինգերորդին: Եւ մեք Նախիջեւանոյ երկրիս ժողովուրդս ոչ կամելով մնալ առանց հօվապետի ի մէջ անօրինաց եւ հակառակորդաց, զի մի գիշատեալ լիցուք ի հերձուածողաց:

Այլ ծովանեցաք միաբան ի գիւղն Խօշկաշէն, որ էր եկեղեցւոյն յայնմիկ նաւակատիս, որոյ անուն եկեղեցւոյն սրբոյն Ստեփաննոսի Նախավկային. եւ գեղարդեանն Քրիստոսի, որ աւերեալ կայր յեկեղեցին եւ պատրի Օգոստինոսն վերստին կանգնեաց եւ բազում աշխատեցաւ: Միագումար ժողովեալս ընտրեցաք պատրի Օգոստինոսն մեզի առաջնորդ եւ հօվուապետ. որ նորա բազում աշխատանք ունի մեզ վերայ եւ սորին քարոզութեամբ եւ բարի վարուցն վերստին նորոգեալ է կարգս մեր եւ ժողովուրդս մեր: Նախ գլուխ ժողովոյս ես փրայ Պետ-

[5] Տեղին է նշել նաեւ, որ հայ ուսումնասիրողներից Ա. Մադոյեանը Օգոստինոս Բաջենցի մահը թուագրում է 1667 թուականով (տե՛ս «Արաքս», էջ 63, հմմտ. նոյնի՝ Օգոստինոս Բաջենց (ստեղծագործական դիմանկար), - «Նախիջեւան», «Նախիջեւան» հայրենակցական միութեան պաշտօնաթերթ, 1999, թիւ 3-4, էջ 11), որն ակնյայտ սխալ է: Պահպանուած բոլոր փաստաթղթերը աներկբայօրէն նրա մահուան թուականը նշում են 1653 թուականի ապրիլի 16-ը (տե՛ս Էսցերի վերոյիշեալ աշխատութիւնը):

րոս հայր ի վանիցն սրբոյն Յովհաննու Մկրտչին, որ է ի գիւղաքաղաքն Ճահուկ ընդ ֆրայ Ամբրոսիոսի եւ ընդ մեծամեծացն գիւղիս՝ Աղաջանն, Ֆիդէն, Անդրիասն, Խօջէն, Թաթարն եւ այլ Ճահկայ ջամիաթովս: Ես, ֆրայ Յակոբս՝ հայր ի վանուցն Ամենայն Սրբոց, որ է ի գիւղաքաղաքն Ապարանէր ընդ ֆրայ Մաթիոսիւ եւ ընդ ֆրայ Դաւեոսիւ եւ ընդ մեծամեծաց գիւղես Թարջիմանն, Ամիտն, Գրիգորն, յԵրիջանն եւ այլ Ապարաներոյ ջամիաթովս: Ես ֆրայ Պետրոսս՝ հայր ի վանիցն սրբոյն Ըստեփաննոսի Նախավկային, ընդ ֆրայ Ղուկասիւ, որ է Խօշկաշէն եւ ընդ մեծայմեծաց գիւղիս Մուրատն, Թաղվերմիշն, Օգոստինոսն, Ղուբաթն եւ այլ Խօշկաշինոյ ջամիաթովս: Ես ֆրայ Ազարիայս, հայր ի վանիցն Սրբոյիոյ Աստուածածնին որ է ի գիւղն Քոնայ ընդ ֆրայ Յովսէփաւ եւ ընդ մեծամեծաց գիւղիս Հասանն եւ Շիրինն եւ այլ Քոնոյ ջամիաթս: Ես ֆրայ Բէնետիկտոս հայր ի վանիցն սրբոյ Գէորգայ Զօրաւարին, որ է ի գիւղն Ապրակունիս ընդ ֆրայ Անդոնիւ եւ ընդ մեծամեծաց գիւղիս Խաչիկն, Աղաջանն, Մերաքն եւ այլ Ապրակունոց ջամիաթովս: Ես Պետրոս հայր ի վանիցն Սրբոյն Գէորգայ, որ է ի գիւղն Սալթաղ. ընդ ֆրայ Թումաիւ եւ ընդ իմ միաբանովս: Ես, ֆրա Ավանս հայր ի վանիցն Սրբուհւոյ Աստուածածնին, որ է ի գիւղն Շահբունիս ընդ ֆրայ Մանուէլիւ եւ ընդ մեծամեծաց գիւղիս Շիրանն, Անանիայն, Յովհաննէսն եւ այլ Շահբունոց ջամիաթովս: Ես, ֆրայ Պողոսս հայր ի վանիցն Սրբոյն Պետրոսի Առաքելոյն, որ է ի գիւղն Կեծուկ եւ ընդ մեծամեծաց գիւղիս Փօլաթն, Աբրահամն, Պապիջանն եւ այլ Կէծկոյ ջամիաթովս:

Սոքա ամէնեքեան վերոյս գրեալէս գլուխ ի գետին դնելով քոհն սուրբ քարշապարանացդ. խնդրեմք եւ հայցեմք քոհն սրբութենէդ զմեզ յիշեայ քոհն սուրբ օրհնութեամբն. մի թողուր զմեզ որբս. այլ փութանակի ձեռնադրեա ֆրայ Օգոստինոսն, որ առաքեցաք քո սուրբ Աթոռդ, որ է արժանաւոր ծառայ Քրիստոսի եւ առաքեա առ մեզ փութով: Դարձեալ հայր սուրբ յիշեա այս աւերեալ վանորայքս ողորմութեամբ հոգեւոր եւ մարմնաւոր մեք աղքատ հօտ քո ենք բնակեալ ի մէջ անօրինաց բազմաչարչար մի մոռանար զմեզ քոհն սուրբ աղօթիւքդ: Եւ այլ ամենայն պատրի Օգոստինոսն պատմէ քոհն սրբութեանդ մեր պակասութիւն: Բաւ է քոհն սուրբ յիմաստութիւնդ:



Գիրս գրեցաւ ի գիւղն Խօշկաշէն ընդ հովանեաւ Սրբոյն Ըստ[ե]փաննոսի Նախավկային. թվին ՌՈՒԷ [1627] նօվէմբերի Է [7]:

Ես՝ ֆրայ Պետրոսս իմ ժողովրդօքս վկայեմք.
Ես՝ ֆրայ Յակոբս իմ ժողովրդօքս վկայեմք.
Ես՝ ֆրայ Պետրոսս իմ ժողովրդօքս վկայեմք.
Ես՝ ֆրայ Ազարէս իմ ժողովրդօքս վկայեմք.
Ես՝ ֆրայ Պետրոսս իմ ժողովրդօքս վկայեմք.
Ես՝ ֆրայ Ջվանս իմ ժողովրդօքս վկայեմք.
Ես՝ ֆրայ Պօղոսս իմ ժողովրդօքս վկայեմք.
Ես՝ ֆրայ Բէնէթս իմ ժողովրդօքս վկայեմք.
Եւ՝ վկայէ Աստուած որ ի վեր է քան զամենայն:

*APF, Lettere diverse Lingua, vol. 180, f. 211rv, բնագիր.*

## 2. Օգոստինոս Բաջեցին՝ Հաւատատփիւռ Ժողովին

[1637, փետրուար 27, Վարշաւա]

Անուն Աստուծոյ

Առաքելաշնորհիք եւ քաջ հովիւք արթուն դիդապետք սիւնք հաւատո[յ] ճշմարիտ պատուով վեհագոյնք կարդինարք. ծանուցումն լիցի ձեզ վեհիցդ: Բ [2] տարի է, որ չեմ կարացել թուխտ գրել ձեր հրամանուցն վասն նեղութեան ժամանակիս թէ ինչպէս խոնթքեարն անթիւ հեծելօք արեկ շահին վերա[յ], զան Էրէվան, գնաց մինչ Թարվէզ, եկին մեր աշխարհին վերա[յ]. Գ [3] գիւղ աւար հարին, մեր քրիստոնէից վանքէրն աւերեցին եւ կործանեցին, բազում քրիստոնէայք սուր

մաշեցին եւ գերացուցին, ընդ որոց մեր Ա [1] քահանայ եւ Ա [1] սարկաւագ սպանաւ, Բ [2] քահանայ եւ Բ [2] սարկաւագ հետ ԳՃԼԷ [337] ուղղափառ քրիստոնէիւք գերի անկաւ, որ միանգ էր Տէր Մաթատէոս, որ առաքեցաք ձեր հրամանուց ոտն կարգաւ պատմել ձեզ: Յետեւ որ օսմանլուն յեդ փախաւ, շահն արեկ բազում հեծելօք մեր երկիրն՝ թէ գնայ Էրէվան, յեդ առնու օսմանլուէն: Ես գնացի մօտ շահն թէ հասկացընեմ մեր ամենայն նեղութիւնն. գտայ մօտ շահն պատրի Ջվան դէ Լուկա[6], որ Լէհաց հաթմանն, որ է Կօնէց Պօլսկին թագաւորին բերանով մօտ շահ Սէֆին դեսպան: Ջիս էառ տարաւ մօտ շահն, երբ շահն զիս տեսաւ, լսէց մեր նեղութիւնն հետ ինձ ասաց՝ Քո բանն եւ խնդիրքդ կու կատարեմ. ապա ի կամս այն, որ զքեզ կու առաքեմ մօտ Լեհաց թագաւորն դէսպան: Ես ասացի՝ Եղիցին կամք քո: Վասն այս բանիս համար Ա [1] հուքմ արետ իմ վիքարին մեր վանքերն չի նեղացուցեն մինչեւ իմ յեդ գնալն, խոստացաւ երբ բերդն առնում՝ ինչ գերի որ միջումն որ քո[յ] է՝ յամէն պարգեւօք յեդ դարձընիմ պարգեւօք ձեզ ի լաւ հո[վ]վութիւն տամ. ճշմարիտ գերիքն որ յառաջ պարտքով գնեցի նոքա որ շահն բերդն էառ ազատ արէց՝ ԿՋ գերի հետ Բ [2] սարկաւագի տարէլ ին օսմանլուի երկիրն եւ այլն պատրի Մաթատէոս կու պատմէ ձեր հրամանուց: Մեզի շահն խալաթէց, ձի արետ, ճանապարհի խարջ արետ, Մօսքովո[յ] վերա[յ] առաքէց դէպի Լէհ: Յերբ հասանք Մօսքովա[յ] թագաւորին հողն Հաճի Թարխան քաղաքն՝ մեզի հօն Ը [8] ամիս պահեցին, յեդեւ շահէն նոր չափար եկաւ

[6] 1634 թ. Լեհաստանի հէթման Ստանիսլաւ Կոնեցպոլսկին Ղրիմում դոմինիկեաննների միսիա մեկնող Զիովաննի Ջուլիանի դէ Լուկային դարձնում է իր անձնական դեսպանորդը Պարսից շահի մօտ: Դէ Լուկան եւ Օգոստինոս Բաջենցը, ամենայն հաւանականութեամբ, հանդիպել են 1635 թ. դեկտեմբերի վերջին կամ 1636 թ. յունուարի սկզբին թուրքական սուլթան Մուրադի Դ-ի դէմ կազմաւորուած Երեւանի ռազմական ճամբարում: Գորիից ժամանած դէ Լուկան այստեղից ուղեւորւում էր Թաւրիզ: Այս հանդիպման մանրամասները տե՛ս A. Eszer. Giovanni Giuliani da Lucca O. P. - Forschungen zu seinem Leben und seinem Schriften, - AFP, 1967, 37, SS. 353-468, 412-418.



թխտով թէ իմ մարդն էք պահում՝ շուտ մեզի ճանապարհ տուին, ձիաւոր դրին մեզ հետ, Թաթարին չօլովն ողորկեցին դէպի Մօսքով: Գ [3] ամիս Ժ [10] օրումն հասանք Լէհաց թագաւորին աթոռն, որ է Վարշաւա, փետրուվարի ԺԵ, թագաւորն տեսանք, մեզ լաւ ընկալաւ, Աստուած թողու շուտ յեդ կողորկէ: Մեք որ այս բանիս վերա[յ] էաք՝ չկարողացաք գալ Սուրբ Հօր ոտն համբուրիլ եւ մեր հնազանդութիւնն տեղ կատարել եւ ձեր հրամանուց Սուրբ Աջն համբուրել: Վասն որո[յ] հարկ ելաւ մեզ առաքել Սուրբ Աթոռն // վասն այն հնազանդութեանն, որ պահեալ կայ ի նախնեաց իմոց անապական մինչեւ ցայսօր: Ընտրեցի ես պատրի Մատաթայն Մուրատչեցի, որ է մեր որդի, Սուրբ Աթոռն առաքեցի, որ լնու զմեր պակասութիւնն. Աստուծոյ սիրուն համար մեր պակասութեանն թողութիւն շնորհեցէք. բազում անգամ գրէլ իմ ձեր հրամանուցն՝ ընկի պատասխան չէ եկեալ մեզ: Ձեր սուրբ օրհնանքն մեզնից պակաս չանէք: Վասն անուանն Յիսուսի Քրիստոսի տէր Մաթատին բանն շուտ տեսէք, հետ տէր Ջվան Դօմինիկոսին առաքեցէք: Իմ խնդիրքս այն ձեր հրամանուց ան է, որ էս աղքատ կործանեալ եկեղեցոցս մին լաւ ողորմութիւն առաքեցէք, որ վերստին կամաւն Աստուծոյ նորոգեսցի եւ գերիքն ազատեսցի եւ այլն պատրի Մաթատէոս կարգաւ պատմեսցէ ձեզ, զոր մեք հրամանք տուինք բերանով ձեզ պատմել. զոր Աստուած երկայնակեաց պահեսցէ զձեզ ամէն. ողջ լերուք ի տէր:

Գրեցաւ ի Վարշաւ քաղաքն թվին ՌՈԼԷ [1637]. փետրուվարի ԻԷ [27]. գրողս ձեզ աղօթող եւ ծառա[յ]:

Humile servo di reverendisimi
Fra Augustino Arciuescouo di Naxiuan.

*[SOCG, vol. 180, ff. 277rv. Բնագիր:*
*Իտալերէն թարգմանութիւնը տե՛ս նոյն տեղում, f. 276rv+279r]:*

### 3. Օգոստինոս Բաջեցին՝ Հաւատասփիւռ Ժողովի քարտուղարին

[1637 թուական 28 փետրուար, Վարշաւ]

Անուն Աստուծոյ

Ճշմարիտ ծառա տեառն մերո[յ] Յիսուսի Քրիստոսի եւ հաւատարիմ մշակ ի յայգոջ Տեառն քրթնաջան, զոր Տէրն երկայնակեաց պահեսցէ զքեզ վասն եկեղեցո[յ] իւրում սրբո[յ]. ամէն:

Ծանուցումն լիցի քո հրամանուցդ որ Բ [2] տարի է չեմ կարացել գրել թուխտ քո հրամանուց վասն նեղութեան ժամանակիս եւ չարչարանաց, թէ ինչպէս Օսմանլուն արեկ մեր երկիրն աւերեց, սուր մաշէց եւ գերացուց. կամ թէ ինչպէս դէսպան առաքեց մեզ շահն մօտ Լէհաց թագաւորն: Տէր Մաթատէն երկարութեամբ կու պատմէ ձեզ մի ըստ միոջէ, զոր առաքեցաք նամակով վասն հնազանդութեան սուրբ Աթոռն, որ մեք չկարացաք գալ յանձամբ Սուրբ Հօր ոտն համբուրել եւ մեր պարտքն վճարել, այլ առաքեցայք որպէս մեր որդի մեր պակասութիւնն լնուլ:

Իմ խնդիրքս այն է որ քո հրամանքդ օգնես եւ առաջնորդես: Թէ պատրի Պօղոս Փրոմալին բանն հարցանես, դու գրեալ էիր թէ այտ տեղ պահէ. մեք ընդունեցինք քո հրամանքդ, այլ ինքն չկամեցաւ կենալ: Ասաց՝ ես կու գնամ ի Հռոմ քաղաք: Ես ձի տուի, խարջի [փող] տուի՝ թէ գայ: Գնաց մօտ հայի կաթողիկոսն մնաց, այլ չարեկ. քանի անգամ առաքեցի մարդ եւ նամակ կոչել զնա՝ նայ չարեկ: Հիմի համ հայի խոստովանում է եւ հայի հաղորդում՝ մեզ գէշ ասելով[7]: Այլն տէր Մաթատէն ձեզ կու պատմէ: Հիմի հենց գիտեմ, որ մեզ մոտ է: Ես գաիս խիս տաղաչանաց թուխտ գրեցի թէ գնա՛[յ] մեր վանքն: Թէ Ծահկեցի Անդրէասին չարութիւնն հարցանես, պատրի Մաթատէն կարգաւ կու պատմէ քո հրամանուց: Բազում անգամ թուխտ եմ գրէլ քեզի՝ պատասխան ըսկի չեմ առէլ: Վասն հեղման արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի թէ ամենն հետի օգնէք կացէլ մեր աղքատ եկեղեցոցս եւ ժողովրդեանս՝ պարտ է հիմի աւելի ողորմութեամբ օգն կենալ, որ կարենանք վերստին նորոգել կործանեալ եկեղեցիքն եւ ազատել գերիքն ի ձեռաց անօրինաց: Ինձի չէ հասնիլ քո հրամանուց խրատել, թէ կամենայք պարոնտէր Պողոս Չիտադինին ողորկած դրամէն կարէք օգն կենալ. այսպիսի բարերարութիւն սալաճ կու լինի: Աստուած կու սիրիս. բրէվն նորոգիլ տուր եւ իմ փալիօնն առաքեցէք, հետ մեռոնի: Ծուտ պատրի Մատաթին բանն տեսէք. հետ պատրի Զվան Դօմինիկոսին ողորկեցէք ինչ հրամանք, որ կանէք, ես յերեսիս վերա[յ] կանգնած իմ: Ինչ միսիօնար, որ կողորկէք, հրաման տուք, որ հնազանդ կենան մեզ որպէս առաջնորդի: Ես՝ մեղաւորս, քանի լոկ քահանայ էի ժողով[ուրդ էի հո[վ]վում, հերցուածողացանէ եւ գայլէ պահում, փառք Աստուծոյ, մինչեւ ցայսօր ոչ ոք գայթակղեալ է յինէն, յամէն ջահելի անկաջ կու դնէք, ջահելին բանն այն է, որ իւր գլուխ կենա[յ], ինչ պիտի անէ. բաւ է:

Փառք Աստուծոյ, հիմի շնորհաց Սուրբ Աթոռուն արքեպիսկոպոս եւ հովիւ, որ այլու էլի պարտ է մեզ արթուն կենալ եւ աշխատել: Վասն որո[յ] համարս տալոց եմ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յանձնեալ հօտին:

Ինձ եւ այլ բազում բան կայր, չգրեցաք, որ պատրի Մատաթայն բերանով Ձեզ կու պատմէ. ողջ լեր ի տէր: Ես զցայգ եւ զգիշեր չեմ մոռանալ ի պատարագս եւ յաղօթս ի Քրիստոս սուրբ բարերարութիւնն, որ ընդ իս. բաւ է:

Գրեցաւ ի քաղաքն Վարշաւ, թվին ՌՈԼԷ [1637], փետրուվարի ԻԸ [28]: Գրողս քո հրամանուց աղօթող եւ ծառայ այն ՃԾ [150] ընկուտն, որ տարէ մեզ շաւաղաթ էք արէ, ընդ Աստուած սիրէք. Բ [2] տարէն կամ Գ [3] տարէն ողորկեցէք: Ցետեւամանց իմ գրին մարդ փող չտէք:

Humile servo di reverendisimo et ilustrisimo
Fra Augustino Arciuescouo di Naxiuan.

*SOCG, vol. 180, ff. 275rv. Բնագիր: Իտալերէն թարգմանութիւնը տե՛ս նոյն տեղում, f. 274+281*

[7] Օգոստինոս Բաջենցի ու Պօղոս Փիրոմալու սրուած փոխյարաբերութիւնների մասին տե՛ս ծանօթ. 2-ում յղուած գրականութիւնը:

### 4. Օգոստինոս Բաջեցի ընտրեալ Ուրբանոս VIII պապին

[1642 թուական, յունիս 5]

Բարուընակ աստուածասուն անվեհեր պտղալի ըստ ասացելոյն տեառն սրբոյն Պետրոսի, միշտ սաղարթախիթ անծիրանալի, մշակ յայգոյն Աստուծոյ դու ես արժան եղեր հայր սուրբ: Աթոռ անյաղթելի եւ միշտ աճմամբ ի լի պարքդ բերկրալի, վեհդ հեղակի, լուցում լապտերի, բարէբախտագոյն ոլորտս յերկրի, քառակողմն աշխարհի, դու ես գովելի հայրդ սուրբ: Դու վեհագոյն փեսայ հարսին յերկնաւորի ի տանն Աստուծոյ եւ դրան յերկնի փակող եւ բանող ունիս բանալի, պետ ամենեցուն հայրդ սուրբ: Խորան հաւատո[յ] սիւն կաթողիկէի զարդարեալ ճրագարան վերայ աշտանակի, ոսկով քանդաքարեալ ազգ ազուն քարի, լուցանող ճրագի վեհագոյն թագաւորի, լուսաւորեա զաշխարհս, հայր սուրբ: Զուխտն Աստուծոյ Նոյեան նմին զաւակի, ծիածան վկա[յ]եալ ոլորդ աշխարհի, ջրհեղեղ ցածուցեալ սփիւռս յերկրի, արեւմտեանդ ծագեալ ծիածան համայնի, ջրհեղեղ մեղաց քեւ ցածուցանի. բաշխեալ ի տեառնէ հայր սուրբ: Գանձապետ տեառն փրկչին Ցիսուսի. գանձն անհատելի, տուեալ քեզ ձրի, բաշխող լիապէս սովալուլ յաշխարհի, քեզ ընդրեալ Աստուծոյ Հայր Սուրբ: Վեմ հաւատո[յ] անկեան պատուական քարի, սափիւր տպազիոն եւ կարկէհանի, յաղուտ եւ զմրուխտ եւ գեղ ալմազի, կոչ տերունական սրբոյն Պետրոսի փոխանորդ նորին հայր սուրբ: Բանաւոր ծառ ես, ի մէջ պարտիզի սաղարթախիթ երբնազարդ անոշահոտ բուրմամբ բխուումն ի հոտի քեզ տուեալ վերուստ հայր սուրբ: Գարուն հաւատո[յ] դալարացուցիչ ոստի, մորենի ծաղիկ ի գնացս աղբերի, գօսացեալ տնկիք ի քեւ կանանչի, իմանալի դրախտէն ընկալար հայր սուրբ:

Ծանուցումն լիցի քոհն սրբութեանդ եւ երեսս անկեալ թողութիւն հայցեմ, զի ես վասն ծերութեան եւ յաղագս տառապանաց եւ նեղութեանց յաշխարհիս, եւ վասն պակասութեան խառնի, ոչ կարացի գալ



եւ համբուրել զաստուածամերձ գարշապարան ոտից քոց. վասն այնես եւ կարգաւորքս հանդերձ ժողովրդեամբ զփոքր տառապեալ հօտոքս, ընտրեցինք զտէր Յակոբ Ցիսուսի[8] զիմ վիքար եւ առաքեցինք գալ առ քոհն սրբութիւնդ եւ հնազանդութիւն ցուցանել զքո բարերարութեանդ. եւ եւս կրկնեալ եւ խոնարհեալ անձամբ հայցեմք զսուրբ բարերարութիւնդ, զի մեզ զքո սուրբ օրհնութիւնդ եւ բարէխնամ ողորմութեամբ եւ աղօթից մի մօռասցիս, եւս եւ մի՛ անտես առցես մարմնաւոր ողորմութեամբ, զի եւ մեք միշտ անդադար աղօթող ենք վասն սրբութեանդ եւ երկայնակեաց լիցիս. ամէն: Ողջ լեր:

Թվ. ՌՈՒԽԲ [1643] յունիսի Ե [5]:

Humilisimus serus sanctitatis vestre

Fra Augustinus Arciepiscopus Naxivanensis.

SOCG, vol. 168, f. 428;

f. 427 լատիներէն թարգմանութիւնը

### 5. Աւգուստին Բաջեցին Ուրբանոս VIII պապին

[1646, ապրիլի 1, Վաղարշապատ]

Է

Ծայրագունի եւ սրբագունի հորդ, եւ փոխանորդիդ Քրիստոսի, հոմանուանեալ սրբոյն Պետրոսի, յամենայն ազգաց եւ աշխարհակալաց համայնից տիեզերաց ողջոյն:

Հասցէ խոնարհաբար ողոքումն եւ ծանուցումն ի նուաստ որդեկէ ֆրա Օգոստինոս արհեպիսկոպոս Նախջեւանոյ, հանդերձ ուխտի քահանա[յ]իքս ընդ նմին եւ ժողովրդոքս. մի զկնի միոյ տարրացեալ ի հողս երկրպագութեամբ մատուսցի սրբագունի հորդ: Քանզի յոյժ

[8] Յակոբ Ցիսուսի անձի ու գործունէութեան մասին տե՛ս Մանր ժամանակագրութիւններ, հտ. Ա, Երեւան, 1951,189-193, հմմտ. Carlo Longo. Fr. Giacomo di Gesu OP (1590-1669), provinciale d'Armenia, -AFP, վերջին հատորում՝ տե՛ս հետեւեալ հասցէն www.op.org/curia/storico/afp/longo.html

փափաքէի եւ տեսչայ[ի] յգալ աս սուրբ ատեանդ, որ եւ իսկ ի բանի թղթոջս յայտ առնէ[մ] առ ի երկրպագութիւն սրբութեանդ: Մանաւանդ տեառն երջանկի Ուրբանոսի ութերրորդի, փոխումն ի մեզ ինչեցուցին եւ զսրբոյ հօրդ իսկ կայացելոյդ ի տեղի սրբոյն Պետրոսի չու արարեալ եկաք մինչ Ե [5] աւուր ճանապարհ, այլ երկեալ պատճառոյ իմիք, զոր եկեալ եղբարքդ յայդտ իսկ առնեն, վասն որոյ ո՛չ կարացի գալ եւ կատարել զպատշաճս մեր եւ զինազանդութիւնս, զոր պահանջէ ի մէնջ սուրբ Ատեանդ: Ցաղագս որոց իրի ընտրեցի ի տեղի իմ եւ փոխանորդ ֆրա պատրի Մաթէոսն Յովանէսի՝ մեծաւոր Ապարանեցոյ վանից եւ պատրի ֆրա Գրիգոր Ծործորեցի՝ սիրելի որդեակդ մեր, գալ եւ հնազանդութիւն ցուցանել ի տեղի մեր, մանաւանդ զմեր գերութիւնս եւ զվիշտս մի զկնի միոյ ծանուցանել: Երես անկեալ եւ հեզաբար քան զկարն խնդրեմ ի սրբագունի հօրէդ, որի սրբութենէդ օրհնութիւն եւ զթուխտ թողութեան հանդերձ սուրբ մեռոնաւ շնորհեա գերելոյս: Դարձեալ երկրորդաբար աղաչելով ժտեմ, որ մեր ստրկութիւնս նահս, որպէս զի ամենայն եպիսկոպոսք զոօճիկն յամ յամէ ընկալնուն, եւս մխիթարին ի սուրբ ատենէդ յաւել հեշտագոյն են քան զմեզ, մեք որք եմք ի գերութեան ի յօտարութեան յաղքատութեան հանդերձ եկեղեցականօք եւ ժողովրդօք եւ եմք հարկատուք ի յանօրինաց եւ պարտաւորք անկեալ եմք անմխիթար ուստի օգնականութիւն ոչ ունիմք, եթէ գնամք ի մէջ անօրինաց եւ անհաւատից մուրամք՝ չէ հարկ, եւ թէ լինի ձեր սուրբ անուանդ չէ վայելել: Մանաւանդ վանորայքս խանգարեալ կան, որ Գ [3] վանքն նոր նորոգեցի, այլքն կա այնպէս: Եթէ թողուցումք այլ ազգ բռնութեամբ կու տիրեն: Սուրբ հայր, նայեա՛ զգերեալքս, եւ այցելու լեր անկելոցս, զի յոյժ վհատեալ եմք: Այսք ամենայն մտերմաբար գրեցուցի, եւ յատուկ ձեռօք ենթագրեցի:



Գրեցաւ յԱյ[ր]արատեան գաւառիս ի Վաղարշապատ քաղաքիս ի վանս Սուրբ Էջմիածնի եւ ի թվին տեառն ՌՈՒՀԶ, ապրիլի Ա [1] գրեցաւ:

Fra Augustinus arcepiscopus Naxiuansis.

*APF, SOCG, vol. 65, f. 310r. Բնագիր:*

## 6. [Աւգուստին Բաջեցին ՀՍ-ի քարտուղար Ֆր. Ինկոլիին]

[1646, ապրիլի 1]

Է

Հասցէ ողջոյն սիրոյ առ սիրելի բարէկամ մեր սնիօր Ինկուլի Ֆրանցիսկոսիդ: Ես կամեցայ գալ Սուրբ Աթոռդ հնազանդութիւն ցուցանել որպէս յօրէն է, այլ կարացի ոչ ուղարկեցի Պատրի ֆրա Մաթէոս Յովանէսի՝ մեծաւոր Ապարաներոյ վանից, ի հետ պատրի ֆրա Գրիգոր Ծործորեցին, որ զմեզ գործ կատարել եւ զմեր պակասութիւնն ծանուցանել քո հրամանդ ամենեցուն աղքատանաց հայր ես եղեր եւ զպակասութիւնն լցուցէր, մեք որ եմք ի մէջ գերութեանս, զմեզ մոռացել ես, պատճառն եկելոց ոմանց ի ձէնջ, որ աստ ոչինչ շահ եւ օգնութիւն չեն արել եւ ոչինչ պտուղ չունին, ո՛չ հայոց եւ ո՛չ թուրքաց, մանաւանդ Պատրի Ֆ[րա] Պողոսն, զի որքան նա չէր եկեալ, սէր եւ միաբանութիւն ի մէնջ պակաս չէր, յորժամ եկն խռովութիւն եւ շփոթումն, մանաւանդ գայթակղութիւն եւ այն բանք, զոր գրել այ ի սուրբ ատեանդ՝ ամենայն սուտ է, ոչինչ բան չէ արել. եւ նոյնպէս պատրի Թօմաս Վիթալն, որ Ժ [10] օր չէ կացել դեռեւս աստ եկեալ է այդր, Ճ [100] տարէն սուտ եւ բանբասանս է ասացեր. եւ թէ իւրեանց գայթակղութիւնն, որ աստ արարեալ են, պիտոյ եւ արժան է, որն Դուք ամենեւին կարգէ ձգէք, որ այլքն երկնչին եւ ո՛չ առնեն. եւս աղաչեմ, որ այնպիսի ոք աստ ո՛չ առաքէք եւ թէ զինչ են արել եկեալ եղբարդ մի ըստ միոջէ կու ծանուցանեն: Եւ եւս մեր պակասութիւն կարի յաւելցե-

լաւ եւ օր ըստ օրէ կու յաւելնու: Վասն աստուծոյ այս քանի քրիստոնեաքս, որ կան եւ քահանայքս մինչ ցայժմ, այլ արդ՝ յոյժ եմք պակասեւորք եւ աղքատք. Ձեր հրամանքդ քաչ գիտացէք, որ թէ այսպէս մնացին ամենքն կու կորին: Ձեր գործ այդ է, որ ամենայն աշխարհ բերէք եւ յորդորէք ի սուրբ հաւատս, մեք որք եմք ի նոյն հաւատ եւ սէր, կամէք, որ կորիմք: Մօնսինիօր, նայեա ի տառապանս մեր, մեք ձեր մեծ անուամբն ուրախ եմք եւ յոյս ունիմք եւ պարծիմք առ ամենայն ազգս եւ դուք զմեզ անմխիթար էք թողել, մոռացել էք. թէ զմեզ խղճալի չէք, նախնեաց աշխատանս նայեցարուք, եւ նոցա երեխտիքն - մոռանալ չէք: Դարձեալ ծանր, ես այլ կարողութիւն չունիմ աշխատելոյ, էթէ իմ ոօճիկն յաւելաբար կու առաքէք լաւ, թէ չէ ամենեցունց Կօնկրէկացիօնին շատ բարեւ առնես, ասես որ ես այլ եպիսկոպոսութիւն կարող չեմ առնել, ուրիշ մարդ ուղարկեցէք: Եղբարքս ուսման հետ չեն վասն պակասութեան աշխարհիս, որ թէ ասէք պիտոյ է լատին կարդան. առաջ պիտոյ է մեր լեզուն լաւ իմանան եւ արտաքին բանի վերաւաս լինին, որ յետոյ լաթին շուտով իմանան: Վասն Աստծոյ հաւատարմապէս հաւատայ բանիս, թէ չէ դատաստանին դուք էք համար տալոյ: Այլ ամենայն բան վերոյ գրեալ եղբարքդ կու ծանուցանեն. եւ ես աղաչեմ վասն վերոյ գրեալ պատրի ֆրա Գրիգորն փոքր - մի արտաքին բանի տեղեակ է մերս լեզու, տաս ի պատրի ֆրա Կլէմէնդն, որ լատին եւ մերո[յ] լեզու ուսուցանէ, զի սեր դորա այդ է:

Ողջ լեր հոգւով սրբով: Այսք ամենայն ճշմարտապէս գրեցուցի եւ յատուկ ձեռօք գրեցի: Թվ[ին] ՌՈԽԶ [1646] ապրիլի Ա [1] գրեցաւ:

Fra Augustinus arcepiscopus Naxiuansis

*APF, SOCG, vol. 65, ff. 312r. Բնագիր:*



## 7. Աւգուստին Բաջեցին ՀՍ-ի քարտուղար Ֆր. Ինկոլիին

[1647, ապրիլի 27]

Է

Յիսուսի Քրիստոսի նուաստ ծառայ ֆրա Օգոստինոս արքեպիսկոպոսէս հասցէ թուխտ ողջոյնի եւ սիրոյ առ պատուական եւ գերապայծառ ջահ հաւատոյ մօնսինիօր Ֆրանցիսկոս Ինկուլին, զոր աստուած անսասան պահեսցէ եւ առողջ երկար ժամանակաւ ամէն:...աներու հայր բարի, տէր Մատաթէն մեզ հասաւ քոհն թղթովդ, գոհանամ ստեղծողէն, որ մեզի՝ որբս յիշեցեր եւ խիստ բարի բան էք արէլ, որ Գ ուր[տ]ըստանոյ ժողովուրդն յիշեցիք ողորմութիւն առաքելով վասն Բ[2] քահանայի, այսինքն՝ տէր Մատաթին եւ տէր Գրիքորին: Ապա ես յառաջ ԺԶ [16] ամսով, իմով աղքատութեամբս, տէր Պողոսն կէծկեցի հետ մէկ սպասաւորի առաքել էի նոքա մօտ, այժմ հօն է, խիստ բարի քահանայ է, ամաց ՀԵ [75]-ից. լաւ քարոզող, տէր Մատաթէն էլ կու առաքեմ նայ մօտն: Դուք այն ոօճիկն, որ խոստացէլ էք, տարէց տարի առաքեցէք: Տէր Գրիքորն արէկ հօտ վասն ուսման՝ օգն կենաս, որ լաւ լաթին ունի: Վասն սիրոյ հեղման արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զիս, ծերս յիշեցէք որպէս մէկ պակաս միսօնարի, խեղճ եմ եւ աղքատ անկեալ եմ, չեմ կարիլ մարմնաւոր բանիլ. հազիւ հոգեւորն կու կատարեմ, հանապազ ձեզի աղօթող եմ: Խնդրեմ հրամանուդ սուրբ Կօնգրէկացիօնին շատ բարեւ անիս մեր բերանէս, ես նոցայ մէկ պակաս որդին եմ եւ աղօթող, բաւ է, ողջ լեր ի տէր:

Գրեցաւ թվին ՌՈ ԽԷ [1647], ապրիլի ԻԷ [27], գրո ղս ձեզի աղօթող եւ ծառայ:

Fra Augustinus arcepiscopus Naxiuansis

*SOCG, vol. 65, ff. 313r. Բնագիր:*

## 8. Նախիջեւանի հայ կաթողիկէները Հաւատասփիւռ Ժողովին

[1653 թուական, մայիսի 20]

Մեք ամենեքեան, որ ի ներքոյ ձեռնագրեալ կեամբ ձեր սրբութեանդ ծանուցանեմք եւ կրկնեալ ծնկամբք համբուրեմք զսուրբ զգեստ ձեր, որ մեր եպիսկոպոսս փոխեցաւ յաշխարհէս առ Տէր, Աստուծով վկայութիւն եմք տալիս, որ ոմանք օրինաց դուրս եւ անհաւատար մարդիք, որ առաւել ունին զչարութիւն քան զբարութիւն, որ զիւրեանց չարութեան համբաւս տարածեր են բովանդակ Հայաստան յաշխարհս, կամին յորդորել յանօրինօք եւ հերետիկոսօվք, կաշառօվք եւ ամենեցունց կամովք գնալով եպիսկոպոս լինել: Այլ մեք պարտական գոլով ծանուցանեմք ի ձեր սրբութեանցդ, որ սոցայ ամենայն բանն խաբեբայութիւն, կաշառ հարամզատի եւ հերետիկոսի օգնականութիւն է, ինչպէս իւրեանքն չար են՝ հետեւող եւս սոցին չարագոյն են:

Բայց մեք արժանի տեսանեմք զերկու արքս, այսինքն տէր Զվան Դօմինիկոս Նազարն եւ տէր Յակոբն. եւ խնդրեմք ի սրբութեանց ձերոց, որ դուք ալ արժանի առնէք զսոքա, որ բարի եւ պատուելի մարդիք են ի մէջ Հայաստան, որ միոյն իմաստութիւնն, մեկնութիւն, օրինաց նախանձ եւ յիստակութիւն կայ. եւ միւսն՝ մեկնութիւն, օրինաց նախանձ, յիստակութիւն, քաղաքավարութիւն եւ կառավարութիւն կայ:

Բայց ի սոցանէ ոչ ոք մի անուանեսցի, որպէս ի վեր ասացաք, քանզի խաբեբայ են օրինաց եւ հայրապետաց հայհոյին, հերետիկոսաց եւ օրինաց դուրս մարդկան ընկեր, յայտնի եւ ծածուկ գայլք յափշտակողք, ի պտղոց իւրեանց ծանուցանելոց եմք ի ձեր սրբութեանցդ ի հարկաւոր ժամանակի, թէ ո՛րքան եւ ո՛րչափ անկարգութիւն եւ գայթակղութիւն են տուեալ եւ տան ժողովրդոց եւ հայհոյութիւն հայրապետաց եւ օրինաց. այժմ ցանկան եպիսկոպոս լինել՝ զոր ինչ չարութիւն անկատար թողեր են՝ կատարեսցեն, եւ զոր ինչ օրինաց դուրս մարդիք եւ հերետիկոսք կամենան՝ ըստ կամաց նոցին առնիցին եւ այլն:



Թվին ՌՈԾԳ [1653], մայիսի Ի [20]: Այսպէս է, ես Տէր Պետրոսս Թաղերմիղի որդի Խօշկայշինեցի պրէդիկտօր ջէնէրալ եւ Քուրտըստանայ միսիօնին պրէֆէտ իմ ձեռանօս ձեռնագրեցի:

Ես Տէր Դօմինիկոս Պարոնլար ձեռնագրեցի, որ այսպէս է:

Այսպէս տէր Անդրիաս Շահբ[ու]նեցի Քոնոյ Սուրբ կենսայփրին մեծա[ւ]յոր ձեռնայգրեցի իմ ձեռնովս:

Ես Յարիս ձեռնայգրեցի որ այսպէս այ:

Ես Պալիս Ապարներոյ Աղսաղալու վկայեմ որ այսպէս է:

Ես Բաբաջանս որ Ի [20] տարի Ապարներոյ տանուտէր եմ ելեր, վկայեմ որ այսպէս է:

Ես Սարգիսս Ապարներոյ Քանդխուդայ վկայեմ որ այսպէս է:

Ես Մանկերս Շահնադարի որդի վկայեմ որ այսպէս է:

Ես Եարազիզս Շահկոյ գեղին եպիսկոպոսին երեսփոխան վկայեմ որ այսպէս է:

Ես Միրիջանս Խօշկաշինոյ գեղին եպիսկոպոսին երեսփոխան վկայեմ որ այսպէս է:

Ես Սիամոնս Խօշկաշինոյ Աղսաղալու վկայեմ որ այսպէս է:

Ես Միրզէս Խօշկաշինոյ Քանդխուդայ վկայեմ որ այսպէս է:

Ես Մուրատս Խօշկաշինոյ անցեալ տանուտէր վկայեմ որ այսպէս է:

*SOCG, vol. 292, f. 370. Բնագիր:*

## 9. Նախիջեւանի հայ կաթողիկէները Հաւատասփիւռ Ժողովին

[1653 թուական, յունիս 28, Ապարաներ]

Ցայտ լիցի գերաբարձր սուրբ իշխանացդ եկեղեցւոյ, որ մեր եպիսկոպոսս երեք ամիս կայ, որ փոխեալ է առ տէր, ոչինչ կողմանէ համաձայնութիւն չկայ վասն Եպիսկոպոսի: Քանզի հերետիկոսք եւ անօրէնք կան ի միջի, մանաւանդ սպասեն յերկուց արանցս այսոցիկ որ գալոց են ի սուրբ քաղաքդ Հռոմայ, մէկն տէր Յակոբ կոչիւր եւ միւսն՝ տէր Զվան: Սոքա բարի եւ կատարեալ արք են, բայց յոլով ժա-

մանակ է, որ սպասեմք ի ճանապարհս սոցա, ոչինչ ճշմարիտ զրոյց չընկալաք ի սոցանէ, վասն այսորիկ պարտական գոլով լաւ խորհեցաք տէր Ջվան Դօմինիկոս Նազարի գալն ի ատեանն ձերում սրբութեանց, զի որքան բանն յամի՝ շփոթումն եւ խռովութիւնն լինելու է ի մէջ ժողովրդեանս. եւ եւս ապաղելն յոլով՝ վնասակարութիւն է սուրբ հաւատոյս, քանզի անօրէնք եւ հերետիկոսք իբրեւ զչար գազան ընդ մեզ հետ մտեալ են, յորդորեն եւ կամին կլանել զմեզ որքան հովիւն պակաս է:

Կրկնակի վերահասու եղաք մի ըստ միոջէ եւս քան զեւս հարկ է եւ պարտական՝ տէր Ջվան Դօմինիկոս Նազարի գալն ի Հռոմ, ի ծանուցանել զամենայն բանս ի սուրբ իշխանացդ եկեղեցւոյ, բերան առ բերան խօսել, քանզի նամակով դժուարին է զամենայն բանս ծանուցանել ի ձեր սրբութեանցդ, թղպղտ աստ պիտոյ էր, սակայն եւս պարտական էր ի սուրբ ատեանդ Հռոմայ, վասնզի մեծ բան է եւ հարկաւոր իր եւ այլն: Համբուրեմք զսուրբ հանդերձս ձեր:

Գրեցաւ Աբարանէր, յունիսի ԻԸ [29], Թվ. ՌՈԾԳ [1653]:

Ես տէր Պետրոսս Խօշկալշինեցի Պօրէդիկայթօր Զէնէրալ եւ Քուռուսատայ միսիօնին Պրէֆէթ իմ ձեռնայգրեցի:

Ես տէր Դօմինիկոսս Պարոնլար ձեռնագրեցի:

Եւ տէր Անդրիասս Շահբունեցի Քոնոյ վանքին մեծայոր այդ բաներտ ինչ որ վարդապետն կասի, ամէն մէկն այ, որ ես ձեռնայգրեցի իմ ձեռնովս:

Ես Յարիս ձեռնայգրեցի այսպէս այ:

Ես Պալիս վկայեմ, որ այսպէս է, որ Ապրներոյ աղսաղալու եմ:

Ես Բաբաջանս վկայեմ, որ այսպէս է, որ Ապարաներոյ Ի [20] տարի տանուտէր եմ:

Ես՝ Խօշապարէնց Սարգիսս վկայեմ, որ այսպէս է:

Ես՝ Շահնադարի որդի Մանկերս վկայեմ, որ այսպէս է:

Սոքա Ապարներոյ մեծամեծքն են:



Ես՝ Եարազիզս Շահկոյ գեղին եպիսկոպոսին երեսփոխան վկայեմ, որ այսպէս է:

Ես՝ Միրիջանս Խօշկաշինոյ գեղին եպիսկոպոսին երեսփոխան ձեռնայ վկայեմ որ այսպէս է:

Ես՝ Սիամոնս Աղսաղալու Խօշկալշինոյ գեղին, վկայեմ որ այսպէս է:

Ես՝ Միրզէս Խօշկալշինոյ գեղին վկայեմ, որ այսպէս է:

Ես՝ Մուրատս Խօշկալշինոյ գեղին անցեալ տանուտէր վկայեմ, որ այսպէս է:

*SOCG, vol. 292, f. 372rv. Բնագիր:*

## Հապաւումների ցանկ

AFP = Archivum fratrum praedicatorum, Roma
APF = Archivio della congregazione de Propaganda Fide;
ASV = Archivio segreto Vaticano;
SOCG = Scritture originali delle congregazioni generali;
SC = Scritture riferite nei congressi

# ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ
## (ԺԸ դարի առաջին քառորդ)[1]

Է. Թաջիրեան
(ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ)

*Հայերն Աստրախանում հաստատուել էին դեռեւս XVI դարի երկրորդ կէսից[2], սակայն հայերի թուաքանակն ու նրանց տնտեսական գործունէութիւնն այս քաղաքում հատկապէս գործուն դարձաւ XVII դարի վերջից եւ XVIII դարի սկզբից: Արդէն 1703 թ. Աստրախան այցելած հոլանդացի ճանապարհորդ Կոռնել լը Բրիւինը նկարագրում է քաղաքի հայկական թաղամասը, անդրադառնում է հայերի թուին ու նրանց վարած առեւտրական գործունէութեանը[3]:*

*Հռոմում, «Հաւատասփիւռ ժողովի» (de Propaganda Fide) պատմական դիւանում յայտնաբերուած եւ ստորեւ հրապարակուող փաստաթուղթը[4], գրուած 1723 թուականին եւ հասցէագրուած Ինոկենտիոս ԺԲ պապին, յստակ պատկերացում է տալիս գաղթօջախի կազմաւորման ակունքների, գաղթօջախի ներքին կեանքի ու Աստրախանում հաստատուած հայ կաթողիկէների խնդիրների մասին[5]:*

*Համաձայն փաստաթղթի, արդէն 1723-ին Աստրախանում հաշուում էր մօտ 12 տուն կամ 65 հոգի հայ կաթողիկէներ («ողայդաւան»), որոնցից 20-ից աւելին գաղթել էին Կ. Պոլսից «վասն սուրբ հաւ[ա]տոյս բազում չարչարանօք, որ լեզուաւ չէ գրել»: Աստրախանում հաստատուած միւս հայ կաթողիկէ ընտանիքները, դատելով կնիքների վրայ եղած ստորագրութիւններից, սերում էին Բուրսայից, Թոխաթից, Էրզրումից, Ամասիայից, Ղարսից, Ախալցխայից, Թիֆլիսից, Գեանջայից, Շամախուց, Ղրիմից եւ կաթողիկէ համայնքներ ունեցող այլ վայրերից: Փաստաթղթից ակներեւ է դառնում, որ հայ կաթողիկէները կազմում էին գաղթօջախի հայ բնակչութեան մօտ մէկ տասներորդ մասը, միաժամանակ նկատուում է նորահաստատ բնակչութեան եւ առաւել վաղ գաղթածների միջեւ որոշակի հակադրութեան հարցեր: Ջնայած Հռոմի վեղարաւոր (կապուցին) միսիոներների գործունէութիւնը Աստրախանում դեռ կարօտ է մանրամասն ուսումնասիրման, սակայն փաստաթղթից պարզ է դառնում այն գլխաւոր խնդիրները, որոնց բախւում էին նրանք իրենց գործունէութեան ժամանակ, ընդհուպ մինչեւ այն պարագան, որ շատ հաճախ չտիրապետելով հայերէնին, ստիպուած էին «խոստովանութիւնն թորքէվար» անել, քանի որ, ըստ փաստաթղթի հեղինակների՝ «կին կամ ղաք ... թորքի լեզու գիտեն»:*

*Կարծում ենք փաստաթղթի հրատարակութիւնը կօգնի ուսումնասիրողներին հայ գաղթօջախների բազմակողմանի հետազօտման գործում:*

---

1 Այս յօդուածի վերաբերեալ նիւթերին յաջողուեց ծանօթանալ INTAS ծրագրի շրջանակներում 1996 թ. Փրանսիայի ու ապա յետագայում՝ Հռոմի դիւաններում մեր ուսումնասիրութիւնների ժամանակ:

2 Աստրախանի հայ գաղթօջախի ծագման ու կազմաւորման մասին մանրամասն տե՛ս Խաչատրեան Վ. Աստրախանի հայկական գաղութը (16-րդ դարի կէսից - 20-րդ դարի սկիզբ). Սեղմագիր պատմական գիտ. դոկտորի ատենախօսութեան, Երեւան, 1995; նոյնի՝ Աստրախանի գաղթօջախը, - «Հայ ժողովրդի պատմութիւն», IV, Երեւան, 1972, էջ 405-413; նոյնի՝ Հայ ժողովրդի ազատագրական շարժումները եւ Աստրախանի հայ գաղութը XVIII դարում, -«XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները եւ հայ գաղթավայրերը» (յօդուածների ժողովածու), Երեւան, 1989, էջ 140-154; նոյնի՝ Հայ տպագրութիւնն Աստրախանում (18-րդ դ. վերջ - 20-րդ դ. սկիզբ), -«Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», խմբագրութեամբ Վ. Բարխուդարեանի եւ Զ. Եկաւեանի, Երեւան, 1996, էջ 205-224; Ж. Ананян, В. Хачатурян. Армянские общины России, Ереван, 1993, стр. 17-25.

3 Այս մասին տե՛ս Է. Թաջիրեան. Կոռնել լը Բրիւինի «Ուղեգրութիւնը» որպէս հայ գաղթօջախների պատմութեան ուսումնասիրման աղբիւր, - «Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», խմբագրութեամբ Վ. Բարխուդարեանի եւ Զ. Եկաւեանի, Երեւան, 1996, էջ 125:

4 Բազում կնիքներով կնքուած բնագիրը տե՛ս Archivio della Congregazione di Propaganda fide, SC Georgia, vol. 2 (1708-1760), ff. 133v-134r (կնիքների մի մասի մէջ անունների փոխարէն զանազան պատկերներ են): Փաստաթղթի իտալերէն թարգմանութիւնը ուղղուած Ինոկենտիոս 12-ին տես նոյն տեղում՝ ff. 130rv+135r, իսկ f. 135v՝ հասցէն:

5 Աստրախանում հայոց ուղարկած նամակի հիման վրայ միսիա հիմնելու հարցի մասին մինչեւ 1735 թ. Հռոմում կատարուած քննարկումները տե՛ս նաեւ նոյն տեղում թթ. 167r-174v, 192r, 196rv, 202rv, 204r-205r.

## [Աստրախանի հայ կաթողիկէների ճամակը Հռոմի Ինճոկենտիոս ԺԲ պապին]

Առ գերագոյնեղ եւ ծայրագոյնեղ վէհապետին եւ Յիսուսէ Քրիստոսէ հաստատեալ սրբազան քահանապէտիտ եւ ընդհանուր բոլորի սուրբնոյ եկեղեցոյ ինքնայգոլոխ հովիտ, երես անկեալ խոնարհեմք, ի ոտս տեառն մերոյ երկրպագանեմք, համբորեմք եւ վսեմայգոյնեղ գարդինալացն եաջն, համբորեմք լալաքին դիմօք զներքոյ գրեալ եղկելի ժողովուրդս հայոց կաթոլիկացն եւ արզ առնումք սոյն մերոյ զորպիսութիւնն մեր եւ խնդրեմք:

Զի այտ արարից, որ է սայ երկրորդում աղերսանաց գիր առ վէհիդ եւ սրբազան ամենայնից հորդ, զի Աշտարխանու եղեալ ողայդաւանից հայոց ԺԲ [12] տուն եմք, ԺԲ [12] տանս այր եւ կին, փոքր եւ մեծ ԿԵ [65] հոգի է եւ այս տնաւորքս Ի [20] հոգի աւել Ըստանպօլու եկած են տնով, վասն սուրբ հաւ[ա]տոյս բազում չարչարանօք, որ լեզուաւ չէ գրել եւ մնացեալ տանց, ոմն Էրզիւրումէն, ոմն Թոխաթէն, ոմն Ղրըմիցն եւ այլ ուրիշ տեղիցն էն ամէն ԺԲ [12] տուն քաղաքումն հայոց կաթոլիկանց, վասն սուրբ հաւատոյս, վասն հալածման տարացնդեալ ի պանդխտութենէն գամք: Եւ այլ վաճառականք հայոց կաթոլիկ անց Խ-Ծ [40-50] հոգի անպակաս գնացող եկողէն, որ քաղաքումն ամենայն տարի գուգտուին տեղրս, որ քաղաքումն տնով չեն եւ Աստուած երկարում տայ ոոսս թագաւորին, որ կաթոլիկ սոլթաթն անպակաս ունի, կա աֆիցար կամ ղաբուտան. գնացող եկող անպակ[ա]ս է, ալամանի ազգիցն, լէհու ազգիցն, այլ ուրիշ ազգիցն կաթոլիկանց ֆռանկաց անպակաս Ծ-Կ [50-60] հոգի կու լինի. քաղաքումն նստող չէն, եկող գնացող են, միյան թէ վերոյգրեալ ԺԲ [12] տանցն հայոց կաթոլիկանց եւ հայոց պազիրկանացն տեղրս լինողացն, որպէս վերոյ գրեցանք եւ այլ Ճ [100] տուն աւել հայոց հայոց ազգէն կան մինչ իւրեանց վաճառկանօքն, ԸՃ [800] *[ծայրը պատ-*



*ված է]* այլ աւելի հոգի կու լինին, բայց մենք փոքր ենք սոցա միջումն, բազում վասն սուրբ հաւատոյս խաթրի փոքր փոքր նեղութիւնն տալիս են, բայց Աստուած երկարում տայ թագաւորին, քրիստէյի երկիր է, անչափ իւրեանց ձեռին զատ չէ գալիս, որպէս ուսմանցուց երկիրն, որ ուղափառաց անում էն, տեղրս կարողութիւնն չունին, շնորհակալ եմք Յիսուսի. եւ այլ պատրոցն էհվալիցն, որ ըսկիսբէն Աշտարխանու եկած են. թվին 1709ումն Է [7], Ը [8] ամիս նստած է, յետոյ գացաց է պատրի Ովսէփն լէհացի: Ցետոյ [...]րայ թվին 1715ումն Թիֆլիզից Գ [3] ղապուցին Ա [1] մոֆրէրով եկած են անուամբ՝ պատրի Յիոս, պատրի Վենթորայ, պատրի Պաթիսթայ: Այս պատրի Յիոսն գնաց Մոսկոֆ, թէ Աստուած երկարում տայ թագաւորին, թէ մին դեստոր առնում. եկեղեցի շնելու համար, որ փոքր տան միջումն առաջքն պատարագ անում էօին, ժողովուրդն չէր սղմիր նեղեր տեղն: Գնաց, այլ տեղս չեկաւ, որ տեղն պատրի չիգար, մեծամարդիք գայ կաթոլիկանց Պէտրպորք մնաց այս պատ[ր]ի Յիոսն եւ ի թվին 1718ումն եւ ապրիլի ամսուն Ա [1] պատրի եկ Թիֆլիզից՝ պատրի Անտօնն: Սա եկ ետես, որ պատրիքն հայոց լեզու կամ թորքի լեզու չէյին գիտեր, ինքն թորքէվեար լեզու ուսաւ. այր եւ կին հայոց խոստովանութիւնն արաւ, քարոզ կուտար, հայեցաւ, որ փատրի Յիոսն, որտեղն մնաց, ինքն կամեցաւ, որ Մոսկոֆ երթար վասն հրամանն առնելոյ եկեղեցի շինելոյ խաթրին, փոքր տան միջումն շատ մարդ պատարագն աչօք չէր տեսնար, տեղն փոքր լինելուն, ետոյ այլ փիքր արաւ թէ թէ ես Մոսկոֆ երթամ, տեղս լեզու գիտացօղ չիգայ, ժողովուրդքն առանց խոստովանաւք կու մնան, այլ խորհացաւ, թէ պատրի Վենթորան ղրկեմ, որ երթայ պատրի Յիոսին մօտն եւ հրամանն առնուն, Աստուած երկարում տայ թագաւորին, վասն շինութեանն յե[կե]ղեցոյ. փատրի Վէնթորան գնաց Մոսկոֆ, մին քանի աւոր յետ առ Աստուած փոխեցաւ. յետ սորայ պատրի Անտօնն մնաց միյան պատրի Պատիստայովն, [յ]ետոյ մին փաթրի պէտք եղեւ, որ մին մեծ մարդ կաթոլիկ, թագաւորականի բանի մին ու-

րիշ տեղ գնաց, այս պատրի Փաթիստան իւր հետն տարաւ, մինչ այս գրիս թիւն տեղս չի եկ. միյան մնաց պատրի Անտօնն դադարկ. այս պատրի Անտօնն ֆիքր արաւ վասն եկեղեցոյ շինութեանն, գնաց մին պարապ տեղ արաւ, մին մեծ տուն շինեց լա[յ]նարձակ, ժողովորդն ուր[ա]խ եղեւ, քարոզել հայոյ լեզուք, պատարագ անել, դպիր, ամենայն ինչ հաստատեց, թաղումն, մկրտութիւնն եւ այլ խորհուրդ յեկեղեցոյն կատարե[...] առաջն հայք կու կատարէյին խորհուրդն եկեղեցոյն, կաթողիկեացն, որ տեղ չիգար, յետ սորայ հայոցմէ նախանձէցան բազում բամբասանք եւ կրիւ եւ զուր խոսքեր այս պատրուն ասին եւ սա իբր քաչ հովիւ, Յիսուսի զորութեամբն, ամենայնցն համբերեաց հալածողաց, որ իսկի գրիւ հնար չէ գրել, միյան աստուծոյ է այտնի. ինքն միյան պատրի Անտօնն առանց պատրի, առանց ծառայ եկ[եղ]եցի շինեց, կերակուրն եփողն ըոոսի դղոցն ըշկոլայ անողն, ընդ ամենայն միյան կամօքն աստուծոյ եւ սուրբ հորն մերոյ աղօթիքն. ամենայն ինչ արար սայ եւ մինչ այս գիրիս թարիղն մին օր մին ժամ ըոաճաթինն չեղեւ այս պատրի Անտօնին, կամ հակարակորդաց կրիւն, ժողովուրդն իւր թվոքն պահելն ի հակարակորդացն հագիմի դոոն երթալ, հագիմի հետն ժողովորդեանն համար խոսք խոսողն. ի ձեռաց հակարակորդաց առաջ Աստուած եւ զորութեամբն աստուծոյ ամենայն բանից դեմ կայնողն միյան այս պատրի Անտօնիւ եղեւ եւ այլ աստուած գիտէ, գրիւ չի լինիր գրել: Արդ յետ սորայ փառք այնչափ ողորմութեանն աստուծոյ եւ սրբազան վեհապետիդ, մաքրափայլ աղօթիքն. Աստուած երկարում տա թագաւորին եւ իւր պէյէրուն. մին կոբերնաթոր եկաւ պատրուն ասաց, թէ գնայ տանն վերայ խաչ դիր, զանկ կախէ հրամայեաց գոհութիւնն անճառ ողորմութեանն սրբոյն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ հիմայ այժմոյս ամենայն ինչ կատարեալ է հաստատ է սուրբ յեկեղեցին. ամենայն ինչ այտնի է, փառք աստուծոյ եւ 500 ըսկոթ փող գնաց եւ պատրին դեղըս եկաւծեն մինչ գրոյս թվին. իւր կերակորի խարճովն ԸՃ [800] ըսկոթ գնաց.



եւ ժողովուրդն մինչ այսօր ողորմութիւնն տըւած են 145 ըսկոթ, մնացեալն պատրի Անտօնն խարճեց, ինքն գիտէ ուստի, խարճեց մենք խապար չէնք, խնդրեմք ի վէհափառ իշխանութենէդ այս պատրի Անտօնն այս թվոչըս, որ 1723ումն եւ ունուրի ամսուն, ելաւ, թէ ես սուրբ Հրում կու երթամ, ձեր խաթրին, ձեր լաւութեանն, այնչափ լալաքին դիմօք աղաչեցինք, թէ լեզու գիտացող չիգայ, թէ մեր բանն առանց քեզ ճանապարհ չի երթար, քաղաքիս էհվալն ամենայն ինչ. կոբերնաթի մօտն մեծի փոքրի քով կերթար, մեզ կու պահէր ոոոսի մեծունայք կու սիրէյին, ղովէթ [...]ր մեզ եւ նորայշէն յեկեղեցոյն եւ այլ հնար չէղեւ, չի մնաց տեղըս. մեզ վէրջն այսպէս տարապեալ ցգնաց [...] խէղջ եւ ողորմելի. քաղաքիս ատետն եւ էհվալն իմացաւ, բանն ճանապարհ տանօղ էր Աստուծով, այսչափխոսեցանք, հնար չէղեւ, զինչ արասցուք, միյան Յիսուսէ է, յոյսն մեր եւ ի սրբազան վէհիդ, զի դեղըս մնաց պատրի մինն նէմցէոյ լեզու գիտէ, մեր լեզուն չէ գիտէր, ֆռանկաց անճաղ հերիք կու լինի եւ այլ ներքոյ գրեալ եղբարցս վկա[յ]ութիւնն, որ այս պատրի Անտօնին կամօքն Յիսուսի այսչափ քաչութիւնն եւ վաստակ եւ չարչարանք, որ վկայեմք եւ ականատես իսկ եմք եւ այլ անհունէ գրիւ ոչ եմք բաւ գրել, բայց միայն այն Յիսուս Աստուածն մեր նայ գիտակ է այսմ բանիս եւ այս ճշմարտութեանն, բայց մէնք ներքոյ գրեալ եղբայրքս պարտ եղեւ այս ճշմարտութիւնս այտնել առ սրբազան վէհայպէտին, տեառն մերոյ, զի ողորմեսցիս մեզ, ըզբազում հայր խնամ տըւճութեամբդ, եւ այլ թէ հայր հարց թէ ողորմեսցիս, թէ զգթած աչս առ մեզ դարցուսցես, թէ օրհնեալ բազուկն քո տարածեսցես, թէ նախախնամեսցես, թէ պահեսցես Յիսուսիւ Քրիստոսիւ. Տեսանելոց ես ի փարախ ոչխարաց ըզկորուսեալըս ի սուրբ հոտէն, զի գիտելիւ աստուած է միյայն, բայց երեւելիւ մերոյ տկարութիւնս, որ ներքոյ գրեալ եղբարցս վկայութեամբն եւ կարծեացն, թէ այս վերոյ պատրի Անտօնն կրկին առ մեզ ուղարկես եւ մին ուրիշ բուն հայոց լեզու գիտացող պատրի, կամ հայոց մին կար-

քաւոր ի հետ պատրի Անտոնին, որ կրկին շնորհես կրկին ըղես Աշտարխաւ, զորութեամբն Յիսուսի եւ սրբազան վէհիդ սուրբ անուէր, աղօթիւքն, այս պատճառ առանց երկմիտ, տէր իմ տեսանելոց ես, զտարապեալ ազգն մե հայոց Աշտարխանու եղելոց, որ գրեալ Ճ [100] տանցն հայոց վերոյգրելոյն, շուտով եւ վաղ այնպատճառ տեսանելոց ես ի գաւիթ ոչխարաց. է [...] զի քարոզ լսած չեն, աստուածին բանիցն, համն եւ հուտն ոչ են զովացեալ եւ տեսեալ, անպակաս մեր յեկ[եղ]եցին քարոզի գալ եւ քայնի մարդ հայոց ի ուղութիւն սուրբ ճշմարտութենէս եկեալ են Յիսուսի զորութեամբն եւ պատրի Անտոնի քարոզութեամբն եւ արդ երես անկեալ ձուանդր կրկնէմք լալաքին դիմօք, ով հայրտ սուրբ, մեր պարտն այս էր գերիշխանութենէդ արզ արարաք, մեր նուաստ գիտութեամբն, թէ պատրի Անտոնն թէ տեղրս ոչ լինի կրկին ոչ շնորհեսցես եւ այլ մեր հայոց լեզու գիտացող մեզ ոչ շնորհեսցէս. ոչ օրինեալ աչս առ մեզ ոչ դարձուսցես, զլալեաց ձայնս ոչ լըւիցես, ճշմարտապէս տէր իմ ոչ է կարելի ոչ է հնար հաստատութիւնն եւ կատարելութիւնն գտանել եւ կամ լինիլ, զի տեղիս սովորութիւնն այլ է, ոչ է հարկ գրոյս գրել տէր իմ եւ այլ կամք տեառն մերոյ է որպէս կամեսցիս եղիցի օրինեալ եւ այլ այսմ գրիս թվին պատրին, որ զմեզ տարապեալ ցգեաց եւ գնաց, զաղերսանքն մեր ոչ լսեց եւ զայս արար, որ լինէր թէ մեր միջումն, կին կամ դղաք, որ թորքի լեզու գիտեն եւ խոստովանութիւնն թորքէվար պատրի Անտոնն անում էր եւ որ գնաց, նոքայ այնպէս առանց խաստովանք կու մնան, հայուար խապար չէն, ի [20] հոգի աւել կու լինի. տէր իմ ողորմեայ մեզ, գթայ առ մեզ եւ մենք ներքոյ գրեալս այսմ ամենայնի գիտակեմք եւ վկայեմք եւ խնդրեմք, որպէս կամեսցիս ընդունիմք ընկալնումք, զպատուիրեցեալն ի սրբոյնէ, իբր Աստուածատոր պատգամսն պատուիրանին եւ երկրպագանեմք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի փոխանորդիդ եւ ինքնագլոխ հոգեւոր իշխանութեանդ. ամէն:



Գրեցաւ թվին փրկչին 1723-ումն եւ ուհուրի 16-ումն ի յԱշթարխան քաղաք:

Ես ըստանպօլիցն եկած տնով Սահակս վերոյ ճշմարտութին վկայեմ [կնիք]
Ես ըստանպօլէն եկած տնով մղտեսի Բ եղբարս Անանեաս եւ Աստուածատորս վերայ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես ըստանպօլցի տնով եկած Մանուէլս վերոյ ճշմարտութենս վկայեմ՝ կիք
Ես ըստանպօլէն եկած տընով մղտեսի Ակոբ եւ Արութինս վերոյ ճշմարտութեան վկայեմ՝ կնիք
Ես Թոխաթէցի Շահպազս տնով եմ վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես յերզիւրմեցի Կարապետս տնով եմ վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես յերզիւրումեցի Փիլոսըս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ կնիքի փոխարէն
Ես յերզիւրումեցի Գրիգորս տնով վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես յերզիւրումեցի Սարքիսն տնով վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Ղրմեցի Սարքիսըս տնով վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես Աշտարխանցի Ովանէսս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Աշտարխանցի ըստեփանս տնով վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Աշտարխանցի Այվազս վերո[յ] ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Վերոյ գրեալ տանց միջումն գայ, որ միւ տան մէջն Բ [2] տնուոր գայ, թէ Ա [1]-Ա[1] գրենք տնաւոր ԺԴ [14] այլ կու լինի, այլ աւելի եւս
Ես Բուռսացի Արութինս տնով վերոյ ճշմարտութեանն վկայեմ՝ կնիք
Ես Ախըսխցի Սիմոնս վերոյ գրեալ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Ախըսղացի Ակոբըս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Ճահրակեցի Մանուէլս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես թոխաթէցի Կարապետս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես աշտարխանցի Ովսէփս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝խաչ
Ես թոխաթեցի Մլքսէթըս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես յերզիւրոմցի Պողոսըս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Թիֆլիզէցի Մախսութս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Էրզրումեցի Աղէկսանդրս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք

Ես Էրզրումեցի Նահապետս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես Էրզրումեցի Վարդերեսս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես ղումեցի Քրիստոսթուրս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ աստղանիշ
Ես թոխաթեցի Մլքսէթըս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես արթնցի Վարդպարօնս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես յերզորումցի Պողոսս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես թիֆլիզէցի Մովսէս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես Գէնճեցի Մխիթարի որդի Սարգիսս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Ամասեացի Վարդանս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Ախզգացի Իսկէնդերս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես արթունցի Սիմօնս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես ղրմցի Շահնիս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես թոխաթցի Ովանեսս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես ղարսցի Ափրահամս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես յերզուրմցի Ափրահամս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես լոստաև պոլցի աուտորս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես յերզորմցի Ակոբս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝խաչ
Ես յերզուրմցի Գորգիս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես յերզորմցի Անտոնս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես Ախզգաց Խաչոս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես թիֆլիզցի Թաճեւս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես յերզուրմցի Ովասապս որ տնով եմ տեղս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես շամախեցի Ղազարս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ կնիք
Ես Աշտարխանցի Հարապետս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես արթունցի Կիրակոս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Ես յերզուրումցի Գասպարս վերոյ ճշմարտութեանս վկայեմ՝ խաչ
Եւ այլ եղբայրք ևս քաղաքումըս, որ չեն գրեալ այսմ վերոյ գրոյս:
Այս չափս բաւ ակնեսցի, վէհափառութեանն Սրբոյն մերոյ:

# DOCUMENTS SUR L'HISTOIRE DES RAPPORTS ENTRE LES ARMÉNIENS ET LA SUISSE DANS LES ARCHIVES ET LES BIBLIOTHÈQUES HELVÉTIQUES: PREMIER BILAN[1]

*V. Calzolari*
(Université de Genève)

Le programme INTAS sur "Materials for the Medieval and Modern Armenian History in the Archives and in the Libraries of Europe" (1995-1998), dont j'ai été la responsable scientifique pour l'Université de Genève[2], m'a permis de faire un premier recensement des documents (matériaux d'archives et publications) concernant l'histoire des relations entre les Arméniens et la Suisse. Dans l'esprit du programme, les documents repérés ont été mis à disposition (sous forme de reproduction) du Secrétaire de l'Académie des sciences de Erevan, Vladimir Barkhoudaryan, invité à l'Université de Genève en avril 1998. Cela devra servir à des études futures sur le sujet.

Les rapports entre les Suisses et les Arméniens ont été très intenses surtout dans la période à cheval entre le XIX$^{e}$ et le XX$^{e}$ siècle. A cette époque, Genève est en effet l'un des principaux centres d'action des mouvements révolutionnaires arméniens et russes: c'est à Genève que fut fondé en 1887 par six étudiants arméniens le parti social-démocrate *Hentchak*; toujours à Genève que fut installé en 1891 le Bureau occidental de la Fédération Révolutionnaire Arménienne (FRA), ou parti *Dachnak*, ainsi que la rédaction de son organe central, le journal *Drochak*. Si l'histoire de l'activité des partis politiques arméniens[3] en Suisse est bien connue, l'existence de nombreuses missions de caractère humanitaire,

---

1 Travail achevé en décembre 1999.

2 Le programme réunissait, en plus de l'Université de Genève, la CNRS français, l'Université de Bologne et l'Académie des sciences (Institut d'histoire) de Erevan. La coordinatrice du projet était Madame la prof. G. Uluhogian (Bologne).

3 A ce sujet, cf. par exemple L. Nalbandian, *The Armenian Revolutionary Movement*, Berkeley 1963.

organisées par les Eglises protestantes suisses (romandes et alémaniques) dans le Caucase et en Asie Mineure à la même époque, est en revanche moins connue. A ce propos, il convient de rappeler en premier lieu les activités de la Mission protestante de Bâle.

### 1. Activités de la Mission protestante de Bâle (Basler Mission)

C'est à partir des années 20 du XIX$^{e}$ siècle que commencèrent les premières activités de la Basler Mission. Celles-ci furent menées dans le cadre plus large des oeuvres missionnaires en Russie méridionale et se poursuivirent jusqu'à la fin des années 40. Elles touchèrent notamment le Kharabagh (Chouchi), la Perse (Tabriz), ainsi que les villes de Karas, Madaskhar (au nord du Caucase), Astrakhan, Sarepta (Russie méridionale). Pendant cette période, et parmi d'autres activités, les missionnaires ouvrirent des écoles pour les jeunes Arméniens et diffusèrent de nombreux textes religieux ainsi qu'une traduction de la Bible en arménien, publiés par l'imprimerie de Chouchi. Les premiers missionnaires furent Felician von ZAREMBA et August DITTRICH.

Les documents sur les activités de la Basler Mission ont été répertoriés (par ordre chronologique) en 1980 par les responsables des archives de la Mission, dans la brochure *Führer zum Archiv der Basler Mission. Südrussland und Persien (besonders Kaukasus 1820-1840)*. Le dépouillement de ce répertoire permet de repérer plusieurs documents qui pourraient se révéler intéressants pour la recherche dans ce domaine[4].

Ces documents ont été rangés sous les cotes FC-1 à FC-7 et FC-10, suivis par deux appendices:

FC-1 à FC-3: Armenische Mission.
FC-4: Persische Mission.
FC-5: Mission in Karass.
FC-6: Madaschar und Astrachan 1824-1838.
FC-7: Finanzielles.
FC-10: Restkategorie: Südrussland und Persien.

[4] Une consultation sur place reste à faire. Je remercie M. Paul Jenkins, responsable des archives de la Mission, d'avoir bien voulu m'envoyer une copie de ce répertoire.



Anhang 1: Dokumentation über Russland/Persien im Personalfaszikel von Felician Zaremba.

Anhang 2: Armenier im Basler Missionshaus.

Ils comprennent:

*a) Lettres, journaux personnels, relations de voyage, projets et autres documents des missionnaires à propos de la fondation de la Mission et de ses activités (la plupart des documents est en allemand).*

Exemples:

1825, Brief Nr. 1: General-Instruktion für unsere in den Ländern jenseits des Kaukasus arbeitenden Brüder.

1826, Brief Nr. 4: Plan des zum Missionshause zu Schuschi gehörigen Landes (Jan. 1826).

1826, Brief Nr. 6: Beschreibung der in Schuschi befindlichen Missions-Niederlassung.

1829, Brief Nr. 19: "To the British and Foreign Bible Society in London". In englischer Sprache geschriebener Brief von A. H. Dittrich vom 8. 7. 1829 betr. den Druck des in die armenische Sprache übersetzten.

1830, Brief Nr. 10: Tagebuch einer Reise von Schuschi nach Erzerum und Bajazid (Febr. Bis Juli 1830) von Zaremba.

1835, Brief Nr. 4: Mitteilungen aus den Tagebüchern der Bruder SPRÖMBERG und WOLTERS auf ihrer Reise nach Schamachi, Baku, Salian und Lenkoran, Nov. 1834 – März 1835.

1835, Brief Nr. 8 und 9: Reisetagebuch PFANDER und SCHNEIDER über ihre Reise nach den längs der Kur gelegenen mohammedanischen Dörfern des Karabaghs im Jahre 1835.

*b) Lettres écrites par des Arméniens.*

Exemples:

1825, Brief Nr. 27: Brief des armenischen Diakons GREGOR in Schuschi in armenischer sprache, mit Übersetzung.

1838: Wenige Briefe von Dittrich, Zaremba und Hakub TSCHAKMAKSOVSOFF (= TSCHACHMACHSASJANZ) aus Tiflis und Schuschi. 6 Briefe. Mit dem Brief von Tschakmaksovsoff erscheint

hier zum ersten Mal ein armenischer Mitarbeiter in der Korrespondenz mit Basel, der später noch einige Male vorkommt.

FC-10. 2: [lettres, calculs, protocoles, biographies de plusieurs personnages, y compris des Arméniens, concernant notamment l'orphelinat de Brousse]:

FC-10. 2, 1: Waisenhaus Brussa, Briefe von Gregor BAGHDASARIAN[5].

FC-10. 2, 2: Brussa. Kollekteverein, Lehrerseminar. Briefe von Laz. GARABEDIAN.

FC-10. 2, 3: Lebensbeschreibung des Armeniers SACHBALOW (= Karabed SAGBATHJANZ). [Le même dossier comprend aussi 36 *folio* en arménien, qui contiennent vraisemblablement les lettres originales de ce personnage].

FC-10. 2, 4: Briefe von und über die armenischen Brüder Abraham AMIRCHANJANZ, Moses ASNAWORJANZ und Jojakim TSCHACH-MACHSASJANZ sowie über die Gemeinde Schamachi 1861-1871.

FC-10. 8: [autres documents sur l'histoire de la Mission Arménienne à Schamachi et notamment nombreuses lettres de personnages arméniens, en traduction allemande; il reste à vérifier si les originaux arméniens sont aussi compris dans cette collection].

*c) Lettres d'autres personnages.*

Exemples:

1824, Brief Nr. 3: in arabischer Schrift geschriebener Brief eines kasem Beg (?) an Dittrich.

1825, Brief Nr. 16: Auszug aus WOLF's [de la "British and Foreign School Society"?] Tabebuch in englischer Sprache über die Nestorianer (in Zarembas Handschrift).

*d) Liste des Arméniens qui ont travaillé à la Basler Missionshaus.*

Cette liste donne les noms, la date et le lieu de naissance de treize Arméniens qui ont travaillé à la Missionshaus de 1848 à 1878, tout en indiquant le lieu et la période de leurs activités dans ce cadre.

5 Voir *infra*, note 11.



## 2. Activités humanitaires des Eglises protestantes suisses en Asie Mineure et au Proche Orient, à partir de 1896

*2. 1. Activités à partir de 1896*

